

2420

Родзинка

1812р. Неврол. Гемангиома
сердечно-сосуд. а ушибы

9(47)

q. 95

ՀԽՍՀ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿՈՎԱՐԴՅԱՆԻ ԻՆՍԻՏՈՒԹԵ


24 JUN 2006

Զ. Գ. Ր. Պ. Գ. Ա. Ն.

1812թ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՅԵՎ

ԴԵԿԱԲՐԻԱՆՑՆԵՐԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՍԻՏՈՒԹԵ ՀՐԱՄԱՎՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1940

9(47)

9 - 98

Զ. Գ. Բ. Գ. Ա. Բ. Յ. Ա. Ն.

այ

1812թ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ՅԵՎ

ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԸ

(1939 թ. Խոկտեմբերին Ցերելանի Մանկավարժական
Ինստիտուտի պատմության փակուտեառում կարդացած
գառախոսությունների համառատպությունը)

22.03.2013

2470

Պատ. Խմբագիր՝ Գ. Շառոյան
 Տեխ. Խմբագիր՝ Վ. ՄԵՍԱՆՅԱՆ
 Արքագիրի՝ Հ. ՄՈՒՐԱՅԻՆ
 Կանուրով սրբագրի՝ Կ. Գևորգյան



1919

40

Գյուղական լիազօր Ա-2214 պատճ. № 29 սիրած 2500

Հայկական ԽՍՀ ԺՆԿ-ին կից «Խորհրդային Հայաստան»
 Կառավարության ապահով, Երևան

1812 թ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՑԵՎ ԴԵԿԱԲՐԻՒՍՆԵՐԸ

1. ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ 19-րդ
 դԱՐԻ Ա.Ռ.ՋԻՆ ՔԱՌՈՌՈՒՄ

Արեվմտյան Յեփրոպայի մի շարք յերկրների հա-
 յար 19-րդ դարի առաջին քառորդը մի ժամանակա-
 շրջան եր, յերբ արդեն հաղթանակել ելին կապիտա-
 լիստական հարաբերությունները։ Արեվմտյան Յեփրո-
 պայում ֆեոդալական արտադրության յեղանակը գր-
 նում եր դեպի անվերագարձ կործանում։ քայլայվող,
 փլղվող ֆեոդալական հասարակության փոխարեն
 բարձրանում եր նոր՝ բուրժուական հասարակությունը։
 կապիտալիզմի զարգացման հետ միասին, Արեվմտյան
 Յեփրոպայում պատմական արենա ելին իշել արդեն
 յերկու հիմնական անտարբնիստական դասակարգեր՝
 բուրժուազիան և պրոլետարիատը, զորոնք կովում
 ելին կարգերի գեմ, ֆեոդալների, ճորտատերերի
 դեմ։

Ի՞նչ միճակումն եր այդ նույն ժամանակաշրջա-
 նում ցարական Ռուսաստանը, Ցարական Ռուսաստանը
 19-րդ դարի սկզբին դեռևս իրենից ներկայացնում եր
 ֆեոդալական հետամնաց մի յերկիր, վորտեղ իշխում

եր ֆեոդալական-ճորտատիրական արտադրության յեղանակը, սակայն, վորի կողքին աստիճանաբար տեղ են գրավում նոր, կապիտալիստական բարձրացող հարաբերությունները, վորոնք արագացնում են հետամբնաց ճորտատիրական տնտեսության քայլայումը և հող են ստեղծում հին հետամնաց ճորտատիրական արտադրության յեղանակն ավելի զարգացած, առաջադիմ՝ կապիտալիստական արտադրության յեղանակի փոխման համար: Ռուսական ցարիքն այդ շրջանում, վորակես ռեակցիոն ուժ, Յեկոպայի բարձրացող հեղափոխությունների նկատմամբ խաղում եր ժանդարմի գեր: Իր տերիտորիայով ցարական Ռուսաստանը աշխարհի ամենաընդարձակ պետություններից եր: Դա մի շրջան՝ եր, յերբ արդեն լիովին ավարտվել եր Սիբիրի գաղութացումը և Սիբիրի լայնածավալ տերիտորիան կազմում եր ցարական իմպերիայի մի մասը: Դա մի շրջան եր, յերբ ցարական Ռուսաստանը արդեն իրեն եր միացրել ամբողջ Ռուսական, Ղրիմը, ամբողջ Պավոլժան, Մերձբալթյան հողերը և խոշոր նախապատրաստություն եր տարրում գրավելու նաև Անդրկովկասն ու Միջին Ասիան:

Ցարական իմպերիան «ժողովուրդների բանտ» եր: 19-րդ դարի սկզբից Ռուսաստանի լայնածավալ տերիտորիայի տարբեր մասերում, տնտեսական զարգացումը զնում եր տարբեր ուղղությամբ. որինակ՝ Հյուսիսային և կենտրոնական մարզերում աճում եր գերազանցապես ճորտային տնայնագործությունը և արհեստը: Խակ սկսած Ռյազանից մինչև Մերձսեվծովյան շրջանը մեծ շափով զարգանում եր ճորտատիրական յերկրագործությունը, վորը գերազանցապես

հենվում եր ճորտ գյուղացու աշխատանքի վրա: Ավելի հարավում, այժմյան Ռուսականայի, Ղրիմի և Կուբանի շրջաններում, ճորտատիրական հարաբերությունների հետ միասին գյուղատնտեսության մեջ նկատվում եր նաև աստիճանաբար մուտք գործող վարձու աշխատանքը: Ռուսաստանի հարավում գյուղատնտեսության մեջ արդեն մուտք ելին գործում կապիտալիստական հարաբերությունները:

19-րդ դարի սկզբին հեռավոր Սիբիրը և Կազախստանը, վորոնք հարուստ են բազմաթիվ բնական հարստություններով, հանքերով, ցարական ինքնակալության կողմից ոգտագործվում ելին վորակես գաղութներ: Այդ յերկրների բնական հարստությունները դեռև շատ անշան ելին ոգտագործվում. ոգտագործումն ել կատարվում եր գիշատիչ յեղանակներով: Այդ տերիտորիաները ռուսական ցարիքն ավելի շատ ոգտագործում եր վորակես աքսորավայրեր: Բազմաթիվ հեղափոխականորեն տրամադրված մարդկանց վոստիկանական ուժով քշում ելին դեպի Սիբիր և անհետ կորցնում Սիբիրի անհում տարածության մեջ: Մերձբալթյան շրջաններում, վորոնք անհամեմատ ավելի խիտ բնակչություն ունելին, յերկրագործության հետ միասին զարգանում եր նաև արհեստը, տնայնագործությունը և առհասարակ մանուժակտորային տնտեսությունը:

Ցարական Ռուսաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը 19-րդ դարի սկզբին զբաղվում եր գյուղատնտեսությամբ: Գյուղատնտեսության մեջ իշխում եր հացահատիկային կուտուրաների մշակությունը և անասնապահությունը: Սակայն նկատվում եր, վոր

զյուղատնտեսությունն աստիճանաբար սկսում է հարգ-
ժարվել նոր սաղմնավորվող արդյունաբերությանը:
Գյուղատնտեսությունը աստիճանաբար արդյունաբերու-
թյան սպասարկողի դերումն եր հանդես գալիս: Այս-
պես որինակ՝ զարգանում եր վոշնարաբուծությունը,
վարից ստացած բուրդը ոգտագործվում եր տեքստիլ
արդյունաբերության կողմից: Այդ բրդի մի մասն ել
ուսամական կալվածատերերը, վաճառականները արտա-
հանում եյին դեպի յեփրապական շուկաները: Անասնա-
պահության զարգացումը յերկրին տալիս եր խոշոր
քանակությամբ ճարպ, յուղ, վորի մեծ մասն ոգտա-
գործվում եր յերկրի ներսում, իսկ մի զգալի մասն ար-
տահանվում եր: Այսպես որինակ՝ 1795 թվին Ռուսաս-
տանից արտահանվում եր մոտ մեկ միլիոն փութ
ճարպ, իսկ 1810 թվին արտահանվում եր մոտ շ միլի-
ոն 139.000 փութ ճարպ: Ռուսաստանի ճարավում
յերկրագործության մեջ աճում եր մի շարք կուլտուրա-
կան բույսերի մշակությունը, որինակ՝ շաքարի ճակրն-
դեղի, ծխախոտի, խաղողի, ինչպես և վորոշ փորձեր ե
արվում բամբակի զարգացման ուղղությամբ: Պակովի
և նովգորոդի շրջաններում մեծ չափով զարկ ե տրվում
վուշի մշակությանը:

Յեթե վերցնենք 18-րդ դարի վերջը, այդ ժամանակ
Ռուսաստանն արդեն արտահանում եր մոռավորապես
671.000 փութ վուշ, իսկ 1800 թվին՝ մեկ միլիոն 836.000
փութ:

Ռուսաստանում, 19-րդ դարի սկզբին, մեծ տեղ եր
գրավել նաև հացի արտահանումը: Այսպես որինակ՝
1805 թվին արտահանվում եր մեկ միլիոն 721.000

փութ ցորեն, իսկ 1812 թվին ցորենի արտահանումը
ճամանակավորապես 12—14 միլիոն փութի:

Արտահանման մեջ գյուղատնտեսական ար-
տագրանքի մոտ 90 տոկոսը կալվածատիրական տըն-
տեսությունն եր տալիս և միայն 10 տոկոսը տալիս եր
գյուղացիական տնտեսությունը:

Այսպիսով, 19-րդ դարի սկզբներին ճորտատիրա-
կան գյուղատնտեսությունը աստիճանաբար հարմար-
վում ենոր զարգացող կապիտալիստական հարաբերու-
թյուններին:

19-րդ դարի սկզբին վորոշ քայլեր եյին տեղի ու-
նենում նաև արդյունաբերության զարգացման ուղղու-
թյամբ, ճամանակամշակման բնագավառում: Ուրալը դարձել եր ճորտատիրական լեռնային մետա-
ղամշակման կենտրոն:

Սակայն, յերկար ժամանակ Ուրալի լեռնային
արդյունաբերության մեջ շատ մեծ տեղ եր գրավում
ճորտային աշխատանքը: Հենց սրանով ել պետք ե բա-
ցարել լեռնային արդյունաբերության դանդաղ աճու-
մը ցարական Ռուսաստանում:

Այնուամենայնիվ 19-րդ դարի սկզբին Ուրալի
և առհասարակ Ռուսաստանի մետաղամշակման մեջ
նկատվում ե վորոշ զարգացում: այսպես որինակ՝
1718 թվականին Ռուսաստանում արտադրվում եր 6,5
միլիոն փութ շուգում: 1767 թվականին արտադրվել ե
ինը և կես միլիոն փութ շուգում, իսկ 1806 թվականին
արտադրվել ե մոռավորապես 12 միլիոն փութ շուգում:

Հայրենի արդյունաբերության և համակարգի մե-
տաղամշակման զարգացումը յերես ե և նրանից,
որ 19-րդ դարի սկզբին նվազում ե մետաղահանքի

արտահանումը. այսպես որինակ՝ 1782 թվականին Բուսաստանից արտահանվել ե 3,8 միլիոն փութ մետաղահանք, իսկ 1810 թվականին ընդամենը մեկ և կես միլիոն փութ մետաղահանք: Մետաղահանքի արտահանման նվազեցումը ցուց ե տալիս, վոր արդեն գերազանցապես սպասվում ե յերկրի ներսում: 19-րդ դարի սկզբից սկսվում ե նաև Դոնբասի ու Կուզնեցի ավազանի ածուխի մշակումը, սակայն դրանց մշակումը նույնպես կատարվում եր պրիմիտիվ, տնայնագործական յեղանակով:

19-րդ դարի սկզբին աստիճանաբար ոռուսական արդյունաբերողները թափանցեցին նաև հեռավոր Սիբիր և սկսեցին ոգտագործել Սիբիրի բնական հարրստությունները, սկսվեց Սիբիրի վոսկու և պլատինի հանքերի մշակությունը: Յերկիրը սկսեց Սիբիրից ստանալ վոսկի, պլատին: Սիբիրի վոսկու հանքերը նույնպես մշակվում ելին պրիմիտիվ յեղանակով:

19-րդ դարի առաջին քառորդում ավելի արագ կատարվում ե տեքստիլ արդյունաբերության աճը՝ հվանովոնեսնսկում, Մոսկվայում, Արեխովյա-Զույեվում, Պետերբուրգում, Սերպուխովում: Ճորտատիրական տեքստիլ մանուֆակտուրո-ֆաբրիկաների կողքին հանդես են գալիս մասնավոր կապիտալիստական տիպի մանուֆակտուր-ֆաբրիկաներ:

19-րդ դարի սկզբներին ոռուսական ազնվականությունը բաժանվում եր յերեք հիմնական խավի: Առաջին խավը կազմված եր հողատեր մագնատներից, վորոնք ստեղծել ելին իրենց լատիֆունդիտական մեծ տրնտեսությունները: Այդ լատիֆունդիտական տնտեսությունները հատկապես մեծ շափով աճում ելին Ուկրա-

ինայում, Ղրիմում, Կուբանում և առհասարակ Ռուսաստանի հարավային շրջաններում:

Ազնվականության այդ մագնատային վերին խավը սերտ կապ ուներ պալատի հետ: Այդ ազնվականներից եր, վոր դուրս ելին գալիս ցարական բարձր աստիճանի շինովնիկներ, պալատական բարձր պաշտոնյաներ:

Ազնվականության յերկրորդ խավը, դա միջին ազնվականությունն եր: Այդ կարգի ազնվականներն ունեյին խոշոր կալվածքներ և մեծ քանակությամբ ճորտեր: Ճորտատիրական տնտեսության հիմնական գեմքը վորոշողը՝ այդ միջին ազնվականությունն եր: Միջին ազնվականներից դուրս ելին գալիս նահանգական, գավառական պաշտոնյաներ, հատկապես ազնվականության այդ շերտից ե, վոր դուրս ելին գալիս զինվորական բարձր աստիճանի անձինք:

Վերջապես ազնվականության 3-րդ խավը, դա մանր ազնվականությունն եր, վորը խոշոր և միջին հոգատերերի հետ մրցել չկարողանալով, քայլայվում եր: Նրանք առանձին տնտեսական դեմք չելին ներկայացնում: Այդ մանր ազնվականներից եր, վոր դուրս ելին գալիս ցածր աստիճանի շինովնիկներ, ինչպես նաև ցածր աստիճանի զինվորականներ: Այս խավի հաշվից եր, վոր խտանում եր ինտելիգենցիայի շարքերը:

Ազնվականների մի փոքր խավ 19-րդ դարի սկզբին սկսվում ե զբաղվել արդյունաբերությամբ: Ազնվականության այդ փոքրաթիվ մասը սերտ կերպով կապված եր բանկային ֆինանսական միջավայրի հետ: Նրանք կուտակում ելին իրենց ձեռքին խոշոր կապիտալ և այդ կապիտալի մի մասը ներդնում ելին ար-

գյունաբերության մեջ։ Այլ կերպ ասած ազնվականության այդ մասը կարող ենք համարել բուրժուականացող ազնվականություն։

Սակայն 19-րդ դարի սկզբին դեռևս արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի միջն խոշոր քաժանում չեր նկատվում, նույն արդյունաբերողը միաժամանակ վաճառական եր և կալվածատեր, կամ կալվածատերը զբաղվում եր միաժամանակ նաև վաճառականությամբ և արդյունաբերությամբ։

Այսպիսով 19-րդ դարի սկիզբը նույնաստանի համար մենք կարող ենք համարել այն ժամանակաշրջանը, յերբ աստիճանաբար ազնվականության մի փոքրաթիվ մասը սկսում է զբաղվել արդյունաբերությամբ և հիմք է դնում հետագա բուրժուազիային։

19-րդ դարի սկզբին մանր արտադրողների միջավայրից նույնպես դուրս յեկան շատ նվազ շափով մարդիկ, վորոնք սկսեցին զբաղվել արդյունաբերությամբ, հիմնելով իրենց մանուֆակտուրաները։ Գյուղացիական միջավայրից դուրս յեկան առաջին արդյունաբերողների թվին պատկանում են նաև մի քանի ճորտեր, վորոնք յերկար ժամանակվա ընթացքում վորոշ կուտակումներ ելին կատարել և մեծ փրկագնով ազատվելով ճորտությունից հիմնել ելին իրենց արդյունաբերական առանձին ձեռնարկությունները։ Ռուսաստանի առաջին գործարանատերերից Սավա Մորոզովը նույնինկի նախկին ճորտերից եր. նա 17.000 ռուբլի վճարելով ճորտությունից ազատվեց, և հիմք դրեց մանածագործարանի։

Առաջին ոռուական գործարանատերերից ելին նաև Յասինովսկին, Գրաշեր և Գարիլինը, վորոնք

Եերեմետելի նախկին ճորտերից ելին, և մեծ փրկարդով ազատվելով, նվանովովնեսնելում գործարաններ հիմնեցին։

Ի հարկի ճորտերից դուրս յեկան առաջին գործարանատերերի թիվը շատ քիչ եր, նրանք յեղակի մարդիկ ելին, բայց սրանք ապացուցում են, վոր Ռուսաստանում արդեն կապիտալիստական արդյունաբերությունը զարգանում եր։

19-րդ դարի առաջին քառորդում զգալի շափով աճում են մանուֆակտուրաների և ֆաբրիկաների թիվը, հատկապես կապիտալիստական տիպի մանուֆակտուրա-ֆաբրիկաների թիվը։ 1804 թվականին Ռուսաստանում մանուֆակտուրա-ֆաբրիկաների թիվը հասնում էր մոտ 2500-ի, վորտեղ աշխատում ելին 95.000 բանվորներ *), 1815 թ. Ռուսաստանում արդեն կար մոտավորապես 4200 մանուֆակտուրա-ֆաբրիկա-գործարաններ, վորտեղ աշխատում ելին մոտավորապես 173.000 բանվորներ։ Հաշվառումը ցուց ետվել, վոր այդ բանվորների 50 տոկոսից ավելին արդեն վարձու աշխատող բանվորներ ելին։ Իսկ արդյունաբերության վորոշ ճյուղերում վարձու աշխատանքն ավելի մեծ տեղ եր բռնում։ Այսպես որինակ՝ բամբակամշակման գործարաններում 19-րդ դարի սկզբին վարձու բանվորների թիվը կազմում եր 83 տոկոս, իսկ 1825 թվականին այն հասավ մոտավորապես 95 տոկոսի։

Վարձու աշխատողների բարձր տոկոսը բամբակա-

*) Թվական տվյալները գերազանցապես բերվում են հիմք ունդումնելով Տուգան-Բարանովսկու «Русская фабрика» աշխատությունը։

մըշակման ձեռնարկություններն ելին տալիս: Այդ բացատրվում է նրանով, վոր տեքստիլ արդյունաբերությունը զարգանում եր կապիտալիստական յեղանակով:

Սակայն, մահուրի գործարաններում վարձու աշխատանքը կազմում եր ընդամենը 10 տոկոս, նույնն եր նաև լեռնային արդյունաբերության մեջ: Սա պետք ե բացատրել նրանով, վոր մահուրի արդյունաբերությունը և լեռնային արդյունաբերությունը գերազանցապես պատկանում եր կալվածատերերին կամ պետությանը, վորոնք շահագործում ելին ճորտերի աշխատանքը մաքսիմալ չափերով:

Վարձու աշխատանքի աճը արդյունաբերության մեջ նույնպես վկայում է ոռուական տնտեսության կապիտալիստական արտադրության յեղանակի մեջ մուտք գործելու մասին: Վարձու բանվորական կադրերը այդ ժամանակ դեռևս հավաքագրվում ելին ժամանակավոր կերպով գյուղից քաղաք յեկած գյուղացիներից, վորոնք միայն սեղոնային աշխատողներ ելին: Այդ գյուղացիները հատուկ հարկ (բահրա-օճրօք) վրձարելով իրենց կալվածատերերին, նրանց թույլատրվությամբ ժամանակավորապես գալիս ելին քաղաք և վարձվում: Այդ կարգի բանվորները վարձվում ելին բավական թանգ գնով, վորպեսզի վոլ միայն բավարեն իրենց տնտեսական կարիքները, այլև կարողանան վճարել կալվածատիրոջ հարկը, բահրան:

19-րդ դարի սկզբին ոռուական արդյունաբերության մեջ շատ աննշան չափով սկսեց մուտք գործել նաև մեքենայի աշխատանքը, վորն առաջին հերթին ոգտագործվեց բամբակամշակման արդյունաբերության

մեջ: 1805 թվին Ռուսաստանում հանդես յեկավ առաջին շոգեշարժիչը, վոր դրվեց Ասովսկու և Ալեքսանդրյան բամբակագործական մանուֆակտուրայում: Այդ գործարաններում մուտք գործեց նաև մանող մեխանիկական դագգակահը: Ի հարկե, սրանք դեռևս առաջին բայլերն ելին, բայց այնուամենայնիվ մեքենայի աշխատանքի մուտքը նույնպես վկայում է կապիտալիստական արտադրության յեղանակի հանդես գալու մասին:

Մերձբալթյան յերկրներում, կիտվայում, կատվիայում, եստոնիայում, ինչպես նաև Բելոռուսիայում, Լեհաստանում, Ուկրաինայում, Վրաստանում այդ ժամանակաշրջանում բավական աշխույժ կերպով զարգանում եր արհեստա-տնայնագործական կյանքը: Արհեստավորների և յենթավարպետների դրությունը շատ քիչ բանով եր տարբերվում վարձու աշխատողներից: Նրանք ստանում ելին միայն չնշին կոպեկներ, վորով հազիվ պահպանում ելին իրենց գոյությունը: Այսպես որինակ՝ 1802 թվին Մոսկվայի ֆաբրիկաներում արհեստավորները, վարպետները և յենթավարպետները ամսական ստանում ելին 1 ոռութիւն 6 կոպեկից մինչև 5 ոռութիւն աշխատավարձ:

19-րդ դարի սկզբին աշխուժանում եր նաև քաղաքային կյանքը: Արդյունաբերության հանդես գալը, արհեստի զարգացումը և վաճառականության աճը մեծ քանակությամբ բնակչություն կուտակեց քաղաքներում: 19-րդ դարի սկզբին ոռուական քաղաքները այլևս հին Կիևյան շրջանի կամ 16 և 17-րդ դարերի ոռուական քաղաքները չելին: 19-րդ դարի քաղաքները հանդիսանում ելին վոլ թե վորպես իշխանների բնակատեղի-

ներ կամ ուազմական ամրոցներ, այլ վորպես խոշոր տընտեսական վարչական և կուտուրական կենտրոններ։ Այդ շրջանի քաղաքային բնակչության հիմնական կազմը արհեստավորներն ելին, ազատ զբաղմունքի տեր մարդիկ, քաղքենիներ, վաճառականներ և պնդվականներ։

Ազնվականները Ռուսաստանի զանազան նահանգներում ունենին իրենց կալվածքները, վորոնցից ստանում ելին մեծ յեկամուտներ, իսկ իրենք բնակություն հաստատելով քաղաքներում, այդ յեկամուտը ծախսում ելին ու շուալ, ցոփ, այլասերված կյանք վարում։

Այդ շրջանում քաղաքներում կուտակվում են նաև մեծ քանակությամբ հոգեվորականներ, վորոնք հավատարիմ կերպով ծառայում ելին շահագործող ֆեոդալական դասակարգին։ Այդ հոգեվորականների գասից ելին դուրս գալիս բավական քանակությամբ պետական շինովնիկներ և նույնիսկ պետական բարձր աստիճանի պաշտոնյաններ, ինչպես որինակ Սպերանսկին, վորը քահանայի վորդի եր և Ալեքսանդր Առաջինի որոր հասավ նույնիսկ պետական քարտուղարի պաշտոնին։

Այսպիսով, 19-րդ դարի առաջին քառորդում Ռուսաստանի տնտեսական կյանքի բնորոշ կողմը հանդիսանում եր ֆեոդալական, ճորտատիրական տնտեսության քայլայումը և կապիտալիստական արտադրության յեղանակի արմատավորումը, կապիտալիստական արտադրության արդեն հանդես գալը։

Ահա Ռուսաստանի տնտեսական կյանքի այդ շրջ-

շագարձային շրջանումն է, վոր իր թագավորությունն սկսեց Ալեքսանդր Առաջինը։

2. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆԻ ՆԵՐՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1801—1812 թ. թ.)

Ալեքսանդր Առաջինը մասնակցելով իր հոր՝ Պավելի գեմ սկսված դավադրություններին, սպանել տընում ելին մեծ յեկամուտներ, իսկ իրենք բնակություն հաստատելով քաղաքներում, այդ յեկամուտը ծախսում ելին ու շուալ, ցոփ, այլասերված կյանք վարում։ Ալեքսանդր Առաջինն իր ամբողջ դաստիարակությունը լիքսանդր Առաջինն իր ամբողջ դաստիարակությունը շեկատերինա 2-ից—իր տատից։ Յեկատերինա 2-րդը գեռ իր կենդանության շրջանում ցանկանում է իրենից հետո գահը կտակել Ալեքսանդրին։ Նա չեր ցանկանում գահը թողնել Պավելին։ Այդ տեսակետից ել Յեկատերինան հատուկ խնամք եր տանում Ալեքսանդրին։ Նա Ալեքսանդրին դաստիարակելու համար հրավիրեց հատուկ ուսուցիչներ— դաստիարակար Ալեքսանդրի դաստիարակներից եր գեներալ Սալտիկովը, ինչպես նաև շվեդական քաղաքացի Լազարովը։ Յեկատերինան ինքը նույնպես անձամբ շատ եր զրադակում Ալեքսանդրով։ Նա Ալեքսանդրին միշտ կոչում եր «իմ Ալեքսանդր», սա ցուց ե տալիս նրա հերը դեպի Ալեքսանդր և կապվածությունը նրա հետ։ Յեկատերինա 2-րդը նույնիսկ փորձեց գրել Ալեքսանդրի մանկության մասին։

Ալեքսանդրը հատուկ, սիստեմատիկ կրթություն վիտացել, նա ծովով անձնավորություն եր, շատ սիրում եր զինվորական խաղեր, շքահանդեսներ, վորոսորդություն և նման այլ բաներ։ Իսկ լուրջ կրթության հետ նա գլուխ շոմեր։

Նախորդ թեմաներից մեզ հայտնի յե, վոր Յե-
կատերինա 2-ին չի հաջողվում իր մահից հետո գահը
հանձնել Ալեքսանդրին։ Յեկատերինա 2-րդի հանկար-
ծակի մահը զրկում է նրան այդ հնարավորությունից և
Ալեքսանդրին հաջողվում է գահ բարձրանալ նրա մա-
հից 6 տարի հետո միայն։

Ալեքսանդրն իր թագավորության հենց առաջին որերից արտահայտեց իրար հակասող յերկու մտքեր, վորոնք բնորոշում են նրա թագավորությունն ու նրա ամբողջ ներքին քաղաքականությունը:

Այսպես որինակ՝ նա յերիտասարդ ժամանակ հա-
ճախ ասում եր՝ «Ճես կմեռնեմ վորպես Հանրապետա-
կան»: Սակայն Ալեքսանդրի հետագա ամբողջ գործու-
նելության ընթացքում վորոշակիորեն պարզվեց նրա
այդ մտքի կեղծ լինելը: Ալեքսանդրը վոչ միայն վոր-
պես Հանրապետական շմեռավ, այլև իր ամբողջ թա-
գավորության ընթացքում մնաց վորպես Հանրապե-
տական գաղափարի մոլի թշնամի: Սակայն առ իր
թագավորության առաջին իսկ շրջանում տվեց նաև
մի այլ միտք, Հայտարարելով թե՝ «Ճես Պետերուր-
կից մինչև Զուտովո ճանապարհը դիակներով կծածկեմ,
բայց զինվորական ավաններ անպայման կլինեն»: Սա
նշանակում եր, վոր Ալեքսանդր Առաջինն իր բոնա-
պետությունն ամրացնելու համար ձգտում եր Ռուսաս-
տանը վերածել մի խոշոր զորանոցի, իսկ բոլոր ոռու
տղամարդկանց՝ զինվորների, այնպես, ինչպես այդ
նախագծել եր նրանից առաջ նրան հայր Պավելը:

Ալեքսանդր Առաջինն իր ամբողջ թագավորության ընթացքում հավատարիմ մնաց իր արտահայտած

յերկրորդ սկզբունքին: Նա գահ բարձրանալում պես մի ժամիֆեստ հրատարակեց, վորով խոստանում եր պաշտպանել ազնվական դասակարգի շահերը լիովին, խոստանում եր թագավորել այնպես, ինչպես թագա- վորել ե իր տատը՝ Յեկատերինա 2-րդը:

Սէքսանդր Լ-ը իր թագավորության առաջին տարին ներին տատանվում եր ազնվական տարբեր խմբավորումների միջև, մեկ կողմից նա շրջապատված եր հին արիստոկրատ ազնվականներով, վորոնք թելադրում ելին իրենց կամքը Ալեքսանդրին, մյուս կողմից նա շրջապատված եր այսպես կոչված իր «յերիտասարդ բարեկամներով» (Молодые друзья): Նրա վրա այդ «յերիտասարդ բարեկամներ»-ի ազդեցությունը նույնպես բավական ուժեղ եր: Դրանցից ել Ալեքսանդրը կազմեց գաղտնի կոմիտե (негласный комитет), վորի մեջ մտնում ելին գրաֆ Կաշուբեցը, նովասելցելը, Սարովսկովը, Զարտորիսկին: Սրանք ըստ եյտիյան Ալեքսանդր Առաջինի խորհրդատուններն ելին: Ալեքսանդրի վրա բավական ազդեցություն ուներ Զարտորիսկին, վորը լեհ եր և արտահայտելով լեհ պաների շահերը, ամեն կերպ ձգտում եր, վոր կեհաստանը մընա Ռուսաստանի իշխանության տակ, բայց լեհ ազնվականությանը տրվի ինքնավարություն՝ կեհաստանը ղեկավարելու համար: Այդ գաղտնի կոմիտեն փորձեց քննության յենթարկել մի քանի նախագծեր՝ այսպես կոչված «ժողովրդական ազատության» վերաբերյալ: Սակայն վոլ մի ցարական ազնվական կոմիտեն շեր կարող լուծել ժողովրդական ազատության հարցը և Ալեքսանդրի այդ կոմիտեն նույնպես վորեւ գործ կա-

տարել շիմուղացավ: Ալեքսանդրն իր թագավորության առաջին շրջանում կատարեց մի շաբաթաշատ անհրշան ռեֆորմներ:

Նա փերոշ փոփոխություն կատարեց զինվորական գործում, վերացրեց զինվորների այն կոսը, վոր Պավելն եր սահմանել: Նա վերականգնեց սենատի իրավունքները, վորը՝ Պավելի որոք շատ թուացել եր: 1802 թվականին, դեռևս Պյոտր Առաջինի կողմից ստեղծված կոլեգիաները վերակազմեց և ստեղծեց մինիստրություններ: Նա ստեղծեց 8 մինիստրություն՝ արտաքին գործերի, ռազմական գործերի, ռազմածովագրին ուժերի, արդարադատության, ներքին գործերի, ֆինանսների, լուսավորության, առևտության մինիստրություններ:

Այս բոլոր մինիստրությունները պատասխանատու ենին թագավորի առաջ, նրանց նշանակում և փոխում եր թագավորը: Ալեքսանդր Առաջինը 12 ազգեցիկ ազնրվականներից կազմեց նաև մի խորհուրդ, վորը կոչվում եր անփոփոխ խորհուրդ (Совет неизменный): Այս խորհուրդը դարձյալ Ալեքսանդրի համար ծառայում եր վորաբես խորհրդատու որդան՝ յերկրի կառավարման գործում: Նա այդ խորհրդի հետ խորհրդակցում եր, կարծիքներ եր հավաքում յերկիրը կառավարելու համար:

Ալեքսանդրի ձեռնարկումները մի քայլ եր ցարական պետական ապարատը ավելի ամրացնելու և կատարելագործելու համար:

Ալեքսանդր Առաջինի այս մասնակի ռեֆորմների շեմանը մեծ աղմուկ բարձրացրին թուատանի ազնր-

վական-բուրժուական պատմաբանները: Ալեքսանդրին հոչակեցին վորպես լուսավոր, առաջավոր թագավոր: Այդ պատմաբանները փորձեցին Ալեքսանդրի այդ մասնակի ռեֆորմների մեջ տեսնել ինչ-վոր սահմանադրական միապետության ստեղծման փորձ:

Սա ի հարկե սխալ է, այդ պատմաբանները մեծ շափով գերազնահատել են Ալեքսանդրի կատարածը:

Ալեքսանդրի այդ մասնակի ռեֆորմների մեջ սահմանադրական վոշնչ չկա, լավագույն դեպքում Ալեքսանդրի ռեֆորմները միայն ավելի կարգի բերեցին ֆեոդալական-բյուրոկրատական պետական ապարատը: Ի՞նչ ընթացք ունեցավ Ալեքսանդրի թագավորության ժամանակ գյուղացիական հաղողը, վորը իր ժամանակին հիմնական հարցերից մեկն եր: Ալեքսանդր Առաջինը նույնպես, ինչպես և իր նախորդները, ամեն կերպ գյուղացիներին պահում եր ճորտավին ծանր վիճակում:

Ալեքսանդրը շարունակեց Յեկատերինայի և Պավելի քաղաքականությունը ճորտությունը տարածելու ուստական իմպերիալի բոլոր ծալրամատերում: Սակայն, հակառակ Ալեքսանդրի և ազնվական դասակարգի ցանկության, Ռուսաստանի տնտեսական-հասարակական զարգացումը ավելի և ավելի հրամայական եր դարձնում մտածել ճորտության վերացման մասին:

19-րդ դարի սկզբներին ֆեոդալական ճորտատիրական ծանր շահագործման դեմ Ռուսաստանում ծավալվեց գյուղացիական խոշոր ապատամբություններ: Ապստամբ գյուղացիների պահանջներն ելին — ճորտատիրության վերացում, հող և ապատություն: Յերկ-

րում ծավալվող գյուղացիական այդ ապստամբությունների ճնշման տակ է, զոր Ալեքսանդրը գաղանի կոմիտեյում քննության դրեց գյուղացիական հարցին վերաբերող մի շարք նախագծեր:

Այդ նախագծերից հայտնի յէ Վարանցովի նախագիծը, զորով նա պահանջում է գյուղացիներին անշարժ գույք ձեռք բերելու իրավունք տալ, այսինքն սեղական հող ձեռք բերելու իրավունքը: Այդ գաղտնի կոմիտեյում քննված նախագծերից հայտնի յէ նաև Մորդվինովի նախագիծը: Սա նույնպես իր նախագծով պահանջում էր անշարժ գույք ձեռք բերելու իրավունք տալ գյուղացիներին, վաճառականությանը, քաղքենությանը: Մորդվինովը առաջարկում է ստեղծել փորձնական ֆերմաներ, զորտեղ պետք է աշխատոնին գարձու աշխատողներ, զորոնք տալով ավելի բարձր արտադրողականություն, կշահագրգռելին կալվածատերերին իրենց ամբողջ տնտեսությունը վարել վարձու աշխատանքի միջոցով, այլ կերպ ասած՝ շահագրգռություն կառաջացներ կալվածատերերի մեջ ազատելու իրենց ճորտերին և ճորտային աշխատանքը փոխելու վարձու աշխատանքով: Նույնպիսի վոգով ուրիշ մի շարք նախագծեր նույնպես քննության դրվեց գաղտնի կոմիտեյում, բայց բոլոր այդ նախագծերը գաղտնի կոմիտեի և Ալեքսանդր Առաջինի կողմից մերժվեցին:

Ալեքսանդր Առաջինը գյուղացիական հարցը «լուծեց» նրանով, զոր 1803 թվականին բաց թողեց «ազգատ հողմշակողների» որենք: Հստ այդ որենքի, Ալեքսանդրն իրավունք էր վերապահում կալվածատերերին, փոխադրձ համաձայնության միջոցով, հատուկ փըր-

կավճարով ազատություն տալ իրենց ճորտերին: Այդ որենքը հրատարակելուց հետո 1803—1825 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում խոշոր փըրկագնով «ազատագրվեցին» միայն 47.000 գյուղացիներ:

Այդ թիվը Ռուսաստանի ընդհանուր ճորտերի թվի հետ համեմատած միայն մի կաթիլ եր ամբողջ ծովում:

Ալեքսանդրի որոք ճնշված ժողովուրդների վիճակն ալելի քան ծանրացավ, նա շարունակեց այդ ժողովուրդների վերաբերմաբ իրեն նախորդած թագավորների ռեակցիոն և դաժան քաղաքականությունը: Նա շտեսնված հալածանքներ սկսեց փոքր ժողովուրդների լեզվին և կուտուրալի գեմ:

Նա վարում էր ծավալուն ուսականացման քաղաքականություն: Ալեքսանդրը շտեսնված հալածանք սկսեց հրեաների գեմ, նույնիսկ նա հատուկ սահմաններ նշանակեց, վորից գեպի կենտրոն շարժվել և ապրել շեյխն կարող հրեաները:

Ալեքսանդր Առաջինը վորպեսզի իր ազգեցությունը ամրագներ ծայրամասերում, վարում էր գաղթի քաղաքականություն: Նա իր նոր գրաված տերիտորիաների վրա բնակեցնում էր ուստերին: Հատկապես նա մեծ ձեռնարկումներ կատարեց Մերձսեվծովյան շրջանը, ինչպես նաև Ղրիմը ամրացնելու և ավելի խիս բնակչությամբ բնակեցնելու համար: Նա Ղրիմ ուղարկեց դռվարաբուներին, սրանք հատուկ աղանդ ելին, վորոնք շեյխն ընդունում ուղղափառ յեկեղեցու մի շարք գոգմաները, նրանց ծիսակատարությունները:

Դուխոբորներին Ալեքսանդրը բնակեցրեց Ղրիմի
Մոլոչնայա գետի վրա և հենց այստեղից ել նրանք
հետագայում ստացան «մոլոկաններ» անոնք:

Վոմանք Ալեքսանդրի այս քաղաքականությունը
համարում ելին արդյունք նրա մարդասիրական քաղա-
քականության: Պոկրովսկին և նրա աշակերտներն
Ալեքսանդրի այս քաղաքականությունը վերագրեցին
նրա կրոնամոլությանը, վոր իբրև թե նա կրոնական
վախի ազգեցության տակ մեղմացրեց իր քաղաքա-
կանությունը և հովանավորեց նոզնիսկ աղանդավոր-
ներին:

Ալեքսանդրի այդ քաղաքականությունը արգյունք
չեր վո՞չ հումանիզմի և վո՞չ ել կրոնամոլության: Նրա
այդ քաղաքականությունը հետապնդում եր իր պետա-
կան շահերի ամրապնդումը, այն ե՝ գրաված հողերը
իիտ մարդաբնակ դարձնել և դրանով ամրացնել իր
պետական սահմանները:

Վոմանք Ալեքսանդրի այս քաղաքականությունը
համարում ելին լիբերալիզմ, սակայն լիբերալիզմի
վորեւ տարր չկա. Ալեքսանդրի այդ քաղաքականության
մեջ, Դա զուտ միշոց եր, վորպեսզի նա իր ռեակցիոն ե-
ցությունը կարողանա ծածկել Ռուսաստանի և Յեփր-
պացի առաջավոր հասարակական մտքից:

Ալեքսանդրը վորոշ փոփոխություններ կատարեց
հաեւ լուսավարության և կրթության բնագավառում:

Նա համալսարանների համար նոր կանոնադրու-
թյուն հրապարակեց, ըստ վորի համալսարանն ստա-
նում է ներքին ինքնավարական իրավունքներ: Բացի
այդ, նա բաց արավ մի քանի նոր համալսարաններ,

ինչպես որինակ՝ Կազանի, Խարկովի համալսարաննե-
րը և այլն:

19-րդ դարի առաջին տասնամյակում բավական
աշխուժացավ համալսարանտեսն կյանքը: Համալ-
սարանները գարձան Ռուսաստանի կուռուրայի և ա-
ռաջավոր մտքի ոչախները: Սակայն 1812 թվականից
հետո համալսարանները կորցնում են իրենց արտո-
նությունները: Ալեքսանդրյան նոր ռեակցիան հարձա-
կողական գրոհի անցավնաեւ համալսարանների առաջա-
վոր ուսանողության և առաջավոր պրոֆեսուրայի գեմ:

Ալեքսանդրի թագավորության առաջին շրջանում
վորոշ շափով աշխուժացավ նաև տպագրական գործը:
Աճեց թարգմանական գործը: Թարգմանվում ելին յեկ-
րոպական լեզուներից ինչպես գեղարվեստական գոր-
ծեր, նույնպես և գիտական աշխատություններ: Այդ
շրջանումն եր, վոր ուսաներեն լեզվով առաջին անգամ
թարգմանվեց Սպամ Միտի, Մոնահարյուի, Մարլի,
Տացիտայի և ուրիշների գործերը:

19-րդ դարի առաջին տասնամյակում Ռուսաստա-
նում սկսեցին լույս տեսնել մի շարք ժուռնալներ. այս-
պես որինակ՝ Կարամզինը հրատարակում եր «Եвестник
Европы» ժուռնալը:

1804 թվականին Ռուսաստանում սկսում ե լույս
տեսնել ձախ «Журнал Российской словесности» ժուռ-
նալը, վորի մոտիկ աշխատակիցներիցն եր տպանդա-
վոր ուսա հրապարակախոս Պնինը: Պնինը հանդիսա-
նում է ֆելզմարշալ Ռիանինի անօրինական վորդին:
Պնինը մեծացել է Մոսկվայի համալսարանին կից
պանսիոնում: 13 տարեկան հասակում նա ընդունվեց

ռազմա-Հրետանային դպրոցը, վորք ավարտելուց հետո ստացավ պրապորշիկի չին (կրտսեր սպա): Սակայն Պնինը, վորք մոտիկից ծանոթ եր ֆեոդալական-ծորտատիրական նեխված միջավայրին, մեծ ատելությամբ լցվեց գեղի ինքնակալությունը, գեղի ցարական դաժան պետական ռեժիմը, գեղի ցարական հետամնացությունը: Նա ցարական բանակի ծանր ռեժիմը տանել չկարողացավ և 1805 թվականին զորացրվեց բանակից: Նա դարձավ սովորական պետական շինուալիկ: Պնինը այնուհետև շարունակեց իր հեղափոխական տրամադրություններն ավելի զարգացնել: Նա զանազան հոդվածներ եր գրում ցարական ինքնակալության գեմ: Պնինը մտերիմ բարեկամն եր 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի սուս խոշոր գրող և հեղափոխական Ռադիշչեվի (վորի մասին խոսել ենք նախորդ թեմայում): Պնինը, յերբ 1802 թվականին լսեց Ռադիշչեվի ինքնասպանության լուրը, անիծեց ցարական դաժան կարգերը և Ռադիշչեվին համարեց այդ դաժան կարգերի անմեղ զոհը:

Պնինի գրական գործունեյության ծաղկման շրջանը կարելի է համարել 1802—1805 թվերը, յերբ նա գրուեց իր խոշոր հրապարակախոսական գործերը՝ «Вополь невинности», «Опыт о просвещении», «О возбуждении патриотизма» և այլն:

1805 թվին Պնինն ընտրվում է յերիտասարդ առաջադեմ մտածող գրողներից, նկարիչներից, գիտնականներից կազմված «Вольного общества любителей словесности, науки и художеств» խմբակի նախագործ: Պնինը գուրս յեկավ պահանջելով մամուկի ազատու-

թյուն՝ քննադատելով ալեքսանդրյան անմիտ խիստ գրաքննությունը, վորք հատկապես խիստ ուժեղացավ 1804 թ. հրապարակած գրաքննության նոր կանոնադրության կապակցությամբ: Պնինը հանդես ցեղակացությամբ: Պնինը հանդես ցեղակացությամբ:

Պնինը սուսական հասարակական կյանքում այն անձնավորությունն եր, վորք Ռադիշչեվի հեղափոխական գաղափարները հասցնում եր գեկաբրիստներին: Նա հանդիսացավ Ռադիշչեվի և գեկաբրիստների կապող ողակը 19-րդ դարի առաջին տասնամյակում:

Մուսաստանում ճորտատիրությունն իր ավերածության ծանր թաթը դրեց և Մերձբալթյան յերկրների կիտվայի, կատվիայի և նստոնիայի ժողովուրդների վրա: Այդ ժողովուրդները գերմանական և լեհական գիշատիչ շահագործմանից ազատվելով ընկել ելին ցարական ծանր շահագործման տակ: Խոսակալվածատերերը Մերձբալթյան գյուղացիներից հողերը մասսայաբար խուս ելին և ստեղծում իրենց համար խոշոր կալվածքներ, իսկ Մերձբալթյան գյուղացիներին ճորտացնում և ամբացնում ելին այդ հողերին:

Մերձբալթյան գյուղացիությունը մի կողմից ճընշվում եր կոռային, ճորտալին լծի տակ, իսկ մյուս կողմից ազգային գաղութային լծի տակ: Նա ճնշվում եր նաև իր յերկրի սեփական ֆեոդալների կողմից: Այդ շահագործման և ծանր վիճակի գեմ եր, վոր 1803-04 թվականներին Մերձբալթյան յերկրներում սկսվեց

գյուղացիական խոշոր շարժումները, ուղղված Ալեք-
սանդր Առաջինի թագավորության դեմ:

Ալեքսանդր Առաջինն այդ շարժումները կանխելու
համար վոչ միայն դիմեց զենքի, այլև կատարեց վո-
րոշ զիջումներ։ Այսպես որինակ, 1804 թ. մարտի 2-ին
նաև Մերձբալթյան գյուղացիների համար մի սրբնք-
հրապարակեց, բայց վորի արգելեց գյուղացիներին ծա-
խել առանց հողի։ Այնուհետև, այդ որենքով գյուղա-
ցիներն ստանում են անձնական վորոշ իրավունքներ,
կոռային աշխատանքը հասցվեց շաբաթը յերկու որ-
գամ։ Մերձբալթյան գյուղացիների նկատմամբ կիրառ-
վող այդ ձեռնարկումները նպատակ ունեին մեղմաց-
նել գյուղացիական հույսումները և ավելի ամրացնել
սուսական ցարիզմի տիրապետությունը Մերձբալթյան
յերկրներում։

3. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱԶԻՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒ- ԹՅՈՒՆԸ

Ալեքսանդր Առաջինը գա՞յ բարձրացավ Անդիայի
անմիջական ոգնությամբ, ուստի իր թագավորության
առաջին իսկ որից իր համակրանքն ուղղեց դեպի
Անդիա։ Նա գա՞յ բարձրանալուն պես դադարեցրեց
Պավելի կողմից դեպի Հնդկաստան սկսած ուղղմական
արշավը և հետ կանչեց այն 40 հեծյալ կողակային
զնդերը։ Վորոնք Պավելի և Նապոլեոնի թելազրանքով
շարժվում էին դեպի Հնդկաստան։ Դրանով իսկ Ալեք-
սանդրն իր կապերը խզեց Ֆրանսիայի հետ։ Այնուհե-
տեւ նա ընդգրկվեց պաշտոնական մի նոր կոալիցիա-
յի մեջ՝ Ֆրանսիայի դեմ։ Այդ կոալիցիայի մեջ մտնում

է ին Անդիան, Պրուսիան, Ավստրիան և Ռուսաստա-
նը։

Անդիան ամեն կերպ ձգտում էր ոգտագործել
Ռուսաստանին՝ Ֆրանսիային թուզացնելու նպատակով։
Իսկ Ֆրանսիան՝ Նապոլեոնն ամեն կերպ ձգտում էր
թուզացնել Յելլոպայում իրեն խոշոր մրցակից Հանդի-
սացող Անդիային։ Նապոլեոնը տեսնելով, վոր
Անդիային անմիջական ռազմական հարձակմամբ թու-
զացնել չի կարող, գիտում և արտաքին աշխարհից նը-
րան մեկուացնելու քաղաքականությանը, կտրելով նը-
րան իր դաշնակիցներից և անտեսական բլոկադայի
յենթարկելով նրան։ Այս նպատակով էր, վոր Նապոլեո-
նը 1803 թվին Անդիային հայտարարեց «ցամաքային
պաշարում» (Կոնտինենտալնայ բլոկադա), վորի ելու-
թյունը կայանում էր նրանում, վոր Նապոլեոնն ար-
գելում էր իր դաշնակիցներին առևտուր անել Անդիա-
յի հետ, արգելում էր անգլիական նավերին իր դաշնա-
կիցների նավաշահուստները մտնել։

1804 թ. Նապոլեոնն իրեն հոչակեց կայսր և վոր-
պես ֆրանսիական խոշոր բուրժուազիայի շահերի արտահայտիչ, սկսեց իր լայն նվաճողական
քաղաքականությունը ծավալել նախ Յելլոպայում, ա-
պա և դեպի Արեվելք։

Նապոլեոնի խոսքերով ասած, նա ծրագրում էր
դառնալ աշխարհի «վեհապետը»։ Նա իր այդ ծրագրին
իրագործելու նպատակով էր, վոր իր զորքերը շարժում
և դեպի Ավստրիա և Պրուսիա՝ նրանց իրեն յենթարկե-
լու համար։

Ալեքսանդր Առաջինը, վորպես Նապոլեոնի դեմ

կազմակերպված կուլիցիայի անդամ և մյուս կողմից
ել վախենալով նապոլեոնի նվաճումներից, շտապում
և իր ռազմական ուժերն ուղարկել Ավստրիա, վրապես-
զի ռուսական բանակը միանալով ավստրիական բա-
նակի հետ կանխե նապոլեոնի հետագա առաջխաղա-
ցումները: Ավստրիա մեկնող ռուսական բանակի գլու-
խը կանգնեց Միխայէլ Բիգանովիչ Կուտուզովը:

Կուտուզովը ծնվել է 1745 թվին զինվորականի
ընտանիքում: Պատանեկարկան հասակից նա մեծ սեր
հանդես բերեց դեպի ռազմական գործը. դեռևս պա-
տանեկարկան հասակում Կուտուզովն իրեն վարժեցնում
և հետագա ռազմական պայմանների համար: 1759 թվին
նա ավարտեց Գրետանային և ինժեներական կորպուսի
դասընթացը և դարձավ հրետանու կրտսեր յենթասպա:
Դրանից 3 տարի հետո նա ստացավ կապիտանի աս-
տիճան: Կուտուզովն առաջին անգամ պատերազմա-
կան գործողություններին մասնակցեց ուսա-թուրքա-
կան պատերազմի (1769 թ.) ժամանակ: Այդ պատե-
րազմումն եր, վոր նա մտերմացավ ուսւ մեծ զորա-
վար Սուլորովի հետ, վորը և դարձավ նրա ուսուցիչը,
ռազմական դաստիարակը:

Կուտուզովը 1770 թվականին գործուղվում է Դանուբ-
յան ճակատ՝ Ռումիանցեմի բանակը: Կուտուզովը, վորը
ընակությամբ ուրախ անձնավորություն եր, յերիտա-
սարդ շաջանում շատ եր սիրում իր պետերի կոմիքա-
կան շարժումները վերաբերապես իր ընկերական մի-
շավարում: ահա մի խնջույքի ժամանակ նա տալիս է
Ռումիանցեմի կոմիքական գծերը: Այս բանն ընկնում
է Ռումիանցեմի ականջը և Ռումիանցեմի նրան պատը-

ժելու համար ուղարկում է Ղրիմի բանակը, վորն իր
գերով ավելի աննշան բանակ եր: Սա ըստ եյության
վոչ թե պատիժ դարձավ Կուտուզովի համար, այլ մեծ
բարիք, վորովհետև Ղրիմի ճակատում, վորն ավելի
հանգիստ եր, քան թե Դանուբինը, Կուտուզովը շատ
ավելի մեծ ժամանակ ուներ և իր ամբողջ ազատ ժա-
մանակը նվիրեց զինվորական ինքնազարգացմանը:
Նա սկսեց ուսումնասիրել բոլոր խոշոր անվանի սաղ-
մագետներին, ուսումնասիրեց ռազմական զանազան
ուղղություններ («գպրոցներ»): Նա իր մեջ կուտակեց
հսկայական ռազմական գիտելիքներ և պատրաստա-
կանություն:

Այս բոլորի հետեվանքով և, վոր նա դարձավ վոչ
միայն ուսական, այլև իր ժամանակի աշխարհի լա-
վագուն զորավարներից մեկը: Ծուտով Կուտուզովն
աշքի ընկավ իր ռազմական ունակություններով: Ղրի-
մում նա առաջնորդում է ուսւական ավելի սակավա-
թիվ զորախմբեր քանակով ավելի գերակշռող թուրքա-
կան զորքերի դեմ և տանում է մի շարք փայլուն
հաղթանակներ: Նա Ղրիմում, Շամլու գյուղի մոտ, իր
գնդով շախչախեց թուրքական մի ամբողջ զորախումք
և գնդի առաջն ընկած հետապնդում եր խուճապահար
և գնդի առաջն ընկած հետապնդում եր խուճապահար
փախչող թուրքական զորքերին: Հենց այստեղ եր, վոր
Կուտուզովը վիրավորվեց քոմքից և ընդմիշտ կորցրեց
իր աշ աշքը: Կուտուզովն ավելի մեծ անոն հանեց
ուսա-թուրքական յերկրորդ պատերազմի ժամանակ
(1787—1791 թ.թ.), յերբ անմիջականորեն գտնվում եր
Սուլորովի հրամանատարության տակ: Այդ պատե-
րազմում, ինչպես Սուլորովն և ասում, Կուտուզովը



Գեներալ Մ. Ի. Կուտուզով

Հանդիսանում էր նրա աշ թեր: 1790 թ. Սովորովը միայն Կուտուզովի մեծ աշակցության և հերոսության շնորհիվ կարողացավ հայտնի հզմայիլով բերդք գրավել: Այդ ճակատամարտի վերաբերյալ Կուտուզովի մասին Սովորովն ասում էր՝ «Գեներալ Կուտուզովը գտնվում էր մեր ձախ թեգում, բայց նա իմ աշ թեն եր»: Իզմայիլով բերդի գրավման փորձում Կուտուզովի մատուցած ծառայության համար Սովորովը նրան նշանակեց իզմայիլով բերդի առաջին պարետը:

Կուտուզովը, ինչպես Սովորովը, Պավելի թագավորության ժամանակ յնիշարկվեց Հայածանքների, խոշոր զրկանքների, գորովճետենի և՝ Սովորովը, և՝ Կուտուզովը զեմ դուրս յեկան Պավելի կողմից բանակի պրոտական ձեւի վերակառուցմանը, մի վերակառուցում, վորն ավելի վատթարացրեց ոռաւական զինվորների գրությունը: Ոռաւական բանակի պրոտական յեղանակի այդ վերակառուցումը ուստ զինվորին դարձրեց իր սեփական մտածողությունից և դատողությունից զրկված մի կենդանի գործիք իր հրամանաւարների ձեռքին:

Բանակի այդ ծանր բեժիմի մասին պատմաբան Բայովը գրում է՝ «Բանակում զարգացել ելին կոպտությունները և անհատի ստորացումը, դաժանացավ ավագների վարժունքը կրտսերների, մանալանդ զինվորների հետ: Տույժերի նշանակումը չեր կանոնավորվում վոշ մի որենքով»: Բանակի այդ դաժան ոեժիմի դեմ եր, վոր իրենց բնողոքը բարձրացրին խոշոր զորավար Սովորովը և նրա աշակերտ Կուտուզովը:

Կուտուզովն իր բնավորությամբ վերին աստիճանի

բարի անձնավորություն եր: Շատ հաճախ եր պատահում, յերբ նա աշխատավարձ ստանալուց հետո փողոցում հանդիպում եր իր զինվորներին, գրպանից հանում եր քաղաք և զինվորներին փող եր տալիս, ասելով՝ «ընկերներիդ հետ կիմես ծերումուս կենացը»:

1805 թվին նապոլեոնի դեմ Ավստրիա ուղարկվող բանակի գլխավոր հրամանատար և նշանակվում Կուտապովը:

Կուտապովը դեպի Ավստրիա շարժվում եր մի քանի զորացուներով. նրա զորացուներից մեկին ղեկավարում եր Կուտապովի մտերիմը և քաջարի զորավար Բագրատիոնը: Մինչև ոռւաական բանակի հասնելը Ավստրիա, նապոլեոնը ավստրիական բանակի հիմնական ուժը ջախջախեց, վորից հետո նապոլեոնը ձգտում եր ծուղակի մեջ զցել ավստրիացիներին ողնության յեկած Կուտապովի բանակին: Նա ծրագրում եր Կուտապովին սեղմել Դանուբին և այնտեղ վոշնչացնել, սակայն ոռւա խոշոր զորավարը նապոլեոնի մտադրությունը հասկացավ և ամեն կերպ խուսափում եր նապոլեոնի դավերից:

Կուտապովը մտածված կերպով նահանջում ե և այդ նահանջի ժամանակ հաճախ հակահարձակման անցնելով խոշոր կորուստներ և պատճառում ֆրանսիացիներին: Որինակ, 1805 թվի Հոկտեմբերի 30-ին Կուտապովը գլխովին ջախջախեց ֆրանսիական կրեմսի կորպուր:

Այնուհետև, նապոլեոնը հոկտեմբերի 30-ը համբաց ջարդի որ, վորովհետև այդ ջարդը շատ մեծ և խորը ապավորություն եր թողել նրա վրա:

Կուտապովը կարողացավ անկորուատ կերպով նահանջել Ոլմյուց: Եռտառվ այդտեղ յեկան նաև ոռական կայսր Ալեքսանդր Առաջինը և ավստրիական թագավոր Ֆրանցը:

Ոլմյուցում հրավիրվեց ուազմական խորհուրդ, վորը քննության յենթարկեց նապոլեոնին դիմադրություն ցուց տալու հարցը: Կուտապովը հիմնավորված կերպով խորհրդակցությանը ցուց տվեց, վոր ուժերը խիստ անհավասար են, ֆրանսիացիների հետ ճակատամարտի բռնվելը կարող է միայն խլել ոռական բանակից ավելորդ զոհեր: Նա առաջարկում եր խուսափել այդ անտեղի կորուստներից: Հակառակ դրան Ալեքսանդր Առաջինի պահանջմամբ խորհրդակցությունը վորոշեց Առատերլիցի տակ ճակատամարտ տալ ֆրանսիացիներին: Կուտապովը ակամայից պարտավոր եր կատարել իր թագավորի այդ կարգադրությունը: 1805 թվ. նոյեմբերի 20-ին առավոտյան վաղ ոռական բանակը սկսեց մարտի համար դիրքեր բռնել: Նապոլեոնը, վորը վաղորոք բռնել եր շատ հարմար դիրքեր, ըստ պասում եր, վոր ոռաները հարձակում գործեն: Այդպես ել յեղափ: Ալեքսանդր Առաջինի կարգադրությամբ ոռական բանակը ինքն սկսեց հարձակումը: Այդ ճակատամարտում ոռւա զինվորները կռվում ելին անսահման հերոսությամբ, վորը խոստովանում եր նաև հետագյում ինքը նապոլեոնը. բայց ուժերը խիստ անհավասար ելին, ֆրանսիացիներն ոգտվելով ոռական անհարմար դիրքից, ոգտվելով ոռական զինվորների վերին աստիճանի հոգնածությունից, պարտության մատնեցին ոռական բանակին:

Կուտուզովն այդ ճակատամարտում մի անգամ ել քոնքից վիրավորվեց, իսկ Ալեքսանդր Առաջինը փախավ ճակատամարտից և հետագայում իր հանցանքով ոռուական բանակի առատերլիցյան պարտությունը բարեց Կուտուզովի վրա:

Ոռուատերլիցյի պարտությունից հետո ավտորիական թագավոր Ֆրանցը հաշտություն կնքեց նապոլեոնի հետ: Նապոլեոնն այնուհետեւ իր ուշադրությունը կենտրոնացրեց Պրուսիայի վրա: 1806 թվին դարձյալ նապոլեոնի դեմ կազմակերպվեց մի նոր կոռալիցիա, վորի մեջ մտան Պրուսիան, Ռուսաստանը, Անգլիան և Շվեյցարիան: Ալեքսանդրը ֆրանս-պրուսական պատերազմը սկսելուն պես շտագում ե ոգնության հասնել իր դաշնակից Պրուսիային, սակայն Պրուսիան չսպասելով իր դաշնակիցներին, պատերազմի բռնվեց Ֆրանսիայի հետ: Պատերազմի սկզբից նապոլեոնը հաղթանակը հաղթանակի հետկից եր տանում: Այդ ժամանակ ոռուական հարյուր հազարանոց բանակը ոգնության նպատակով հասնում ե Մեծել:

Իսկ նապոլեոնը շարժվեց դեպի Լեհաստան, գրավեց Լեհաստանը և խոստացավ լեհերին անկախություն և սահմանադրություն տալ, նույնիսկ նա վերականգնեց Վարշավայի դքսությունը՝ վորպես լեհական ինքնուրույն իշխանություն: Սրանով նա ցանկանում եր իր կողմը գրավել Լեհաստանին և մյուս կողմից լեհաստանը դարձնել բազա՝ հետագայում Ռուսաստանի վրա հարձակվելու համար:

Ռուսական բանակը Բենիգսենի հրամանատարությամբ 1807 թվի փետրվարի 7-ին արեվելյան Պրու-

սիայում, Ելլառուի տակ, արյունալի ճակատամարտ տվեց ֆրանսիացիներին:

Հունիսի 5-ին սկսվում ե ոռուական բանակի հարձակումը: Բենիգսենի հրամանով Բագրատիոնը հարձակվեց ֆրանսիական մարշալ Նեյի կորպուսի վրա. իսկ կազմակ ատաման Պլատովը իր զորքով անցավ Ալլե գետը: Նեյի դրությունը խիստ ծանրանում ե, վորոր շտագում ե մարտ տակով նահանջել: Այդ ժամանակ սկսվում են նաև ոռուական զորքերի հարձակումներ այլ կողմերից: Անհասկանալի պատճառներով հանկարծ ոռուական բանակը դադարեց պարտված Նեյի բանակին հետապնդելուց և 78 ժամ սպասելով նահանջում ե, այդ ոգտագործելով նապոլեոնը մոտ 125.000 հոգուց կազմված բանակով սկսում ե ընդհանուր հարձակում ոռուաների դեմ, վորոնք ունեցին 80—100.000 զորք: Հունիսի 10-ին խոշոր ճակատամարտ տեղի ունեցավ Գելլիպերդի տակ, վորի ժամանակ ֆրանսիացիները կորցրին մոտ 8000 մարդ, իսկ ոռուաները՝ 10.000 մարդ: Ռուսական բանակը նահանջեց Ֆրիդլանդ և 1807 թ. հունիսի 14-ին Ֆրիդլանդի տակ տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ, նապոլեոնն ոգտագործեց Բենիգսենի մի քանի կոպիտ սխալները և ծանր դրություն ստեղծեց ոռուական բանակի համար: Զնայած ոռուական բանակի հրամանատարության կոպիտ սխալներին, ոռուական բանակը իր քաջության շնորհիվ հերոսաբար պաշտպանվում եր: Ռուսական բանակը Ֆրիդլանդի տակ կորցրեց մոտ 25.000 մարդ և մեծ քանակությամբ զենք: Ֆրիդլանդի ճակատամարտից հինգ որ հետո՝ հունիսի 19-ին ոռուական բանակը նահան-

շեց Նեման գետի աջ ափը իսկ Փրանսիացիները գրավեցին ամբողջ Պրուսիան։ Այնուհետև և՛ Նապոլեոնը, և՛ Ալեքսանդրը ցանկանում եյին հաշտություն կնքել։ Ալեքսանդրը ցանկանում եր հաշտություն, վորովհետեւ իր ուժերը թուլացել եյին, նրան հարկավոր երժամանակ շահել նոր ուժեր կուտակելու համար, իսկ Նապոլեոնը նույնպես կողմնակից եր հաշտության, վորովհետև բանակը հոգնել եր և ապա ցանկանում եր նախ յուրացնել իր գրաված այդ նոր յերկրները, ամրացնել այնտեղ իր տիրապետությունը, ապա՝ ժամանակ շահել պատրաստվելու նոր արշավանքի դեպի Ռուսաստան։

Հաշտության բանակցություններն սկսվեցին 1807 թվի հունիս ամսի վերջերին, վորոնք տեղի եյին ունենում Տիլզիտում։ Նեման գետի վրա կառուցվեց մի պավիլիոն, վորտեղ բանակցությունննր վարելու համար անձամբ հանդիպում ունեցան Ալեքսանդր Առաջինը և Նապոլեոնը։

Ալեքսանդր Առաջինը բանակցությունների ժամանակ ամեն կերպ ձգտում եր վորոշ դյուրին պայմաններ ստեղծել իր նախկին դաշնակցի— պարտված Պրուսիայի համար, սակայն Նապոլեոնը համառում եր։ 1807 թվի հունիսի 8-ին կնքվեց հաշտություն, վորությունում մեջ հայտնի յե Տիլզիտի հաշտությունը անունով։

Տիլզիտի հաշտությամբ Ալեքսանդրը պարտավորվեց մասնակցել Նապոլեոնի կողմից Անգլիայի դեմ ուստած ցամաքային պաշտամանը։ Յեկոպայի յերկու կայսրները՝ Ալեքսանդր Առաջինը և Նապոլեոնը այդ

հաշտությամբ համաձայնության են գալիս ամբողջ Յեկոպան և Ասիան իրենց միջև բաժանելու։

Տիլզիտի հաշտությունը դեռ նոր եր կնքել, յերբ Նապոլեոնը պատերազմի հրահրեց Ռուսաստանին Շվեդիայի դեմ։ նա դրանով աշխատում եր մի կողմից թուլացնել Շվեդիային, վորը հրաժարվեց մասնակցել ցամաքային պաշտամանը, իսկ մյուս կողմից Ռուսաստանին պահել պատերազմական լարված վիճակում։

1807 թվի աշնանը սկսվում են պատերազմական գործողությունները Ռուսաստանի և Շվեդիայի միջև։ Ռուսական բանակը պատերազմի սկզբից յեվետ նվաճեց մի քանի քաղաքներ, ինչպես որինակ, Սվիա-Բորգը, Հելսինգֆորսը, Տավաստուգը և ուրիշները։ Ռուսներն աստիճանաբար Ֆինլանդիան նվաճեցին և այն կտրեցին Շվեդիայից։

Ռուսական բանակը վոշ միայն Շվեդիային հետ մղեց ֆինլանդական հողերից, այլև սկսեց ներխուժել Շվեդիա։

1809 թվականի ձմեռը, ոռասական մի խոշոր բանակ, գեներալ Բագրատիոնի, Բարելայ Դետոլիի և Կովնեկի գլխավորությամբ մտավ շվեդական սահմանը և գորս յեկալ Ստոկհոլմի տակ։ Շվեդների դրությունը ծանր եր, այլևս պատերազմը շարունակել նրանք անկարող եյին, ուստի խնդրում են հաշտություն։ 1809 թ. մարտին հաշտություն կնքվեց։ Այդ հաշտությամբ շվեդները պաշտոնապես Ֆինլանդիան ճանաչեցին Ռուսաստանին կցված։

Այնուհետև Ֆինլանդիան մինչև Հոկտեմբերյան

Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը հանդիսանում էր ոռու իմպերիալիստիք, մի մասը և միայն շնորհիվ Հոկտեմբերյան Սոցիալիստական Հեղափոխության հաղթանակի, Ֆինլանդիան ստացավ անկախություն:

Ալեքսանդր Առաջինը Ֆինլանդիային տվեց վորոշներքին ինքնավարություն, թույլ տվեց ունենալ իրեն սեփական սեյմը, իսկ վորպես գերազույն իշխանություն հանդես էր գալիս ինքը՝ իմպերատորը, վորն իր անվանն ավելացրեց՝ «Ֆինլանդիայի մեծ իշխան» տիտղոսը: Այդ մասնակի զիջումներով միայն նպատակ ուներ ամրացնել իր տիրապետությունը Ֆինլանդիայում:

Այդ շրջանում, յերբ տեղի յեր ունենում շվեդական պատերազմը, սկսվում է նաև ոռու-թուրքական պատերազմը: Ալեքսանդր Առաջինը ցանկանում էր իշխել ամբողջ Սեվ ծովում, գրավել սեվծովյան նեղուցները — Բոսֆորը և Դարդանելը, վոչչացնել Թուրքիայի ազգեցությունը Բալկաններում և այնտեղ ամրացնել իր ազգեցությունը:

Ալեքսանդր Առաջինի այս ծրագրը դուր չեկավ Նապոլեոնին, վորովհետև դրանով ավելի կհզորանար ցարական ինքնակալությունը, մի բան, վորը ձեռնուուշեր Ֆրանսիային: Յեվ չնայած կար Տիրպիտի համաձայնությունը, բայց նա գաղտնի կերպով ոգնում էր Թուրքիային՝ Ծուաստանի դեմ մղվող կովում: Այդքանը շուտով հայտնի դարձավ Ծուաստանին, վորն ավելի սրեց Ծուաստանի հարաբերությունները:

Ծուաստանում ազնվականության մեջ գժկոհությունն ուժեղացավ այն պատճառով, վոր ցամաքային պաշտումը, վոր Ֆրանսիան փաթաթել էր Ծուաստանի վզին, ծանր հարված հասցրեց Ծուաստանի տրնտեսական շահերին: Ցամաքային պաշտումը հետեւանքով ուսւա կալվածատիրությունը, վաճառականությունը կորցրեց Անգլիային, վորպես իր ամենայեկամտաքեր հացի շուկան և մյուս կողմից ուսւա ազնվականությունը, վաճառականությունը կորցրեց Անգլիայի ներմուծվող արդյունաբերական ապրանքներից ստացվող շահը:

Յերկրում ավելի և ավելի աճում էր պահանջը վերսկսել կապերը Անգլիայի հետ, այսինքն խզել կապերը Ֆրանսիայի հետ: Մյուս կողմից, Ծուաստանում, 1809 և 1810 թվականներին ծայր ելին առել ժողովրդական խոշոր հուգումներ Ալեքսանդր Առաջինի դեմ, վորովհետև ինչպես ուսւա-շվեդական, նույնպես և ոռու-թուրքական պատերազմի ամբողջ ծանրությունը ընկալ Ծուաստանի աշխատավորության վրա: Պատերազմի ծախսերը ծածկելու համար աճեցին հարկերը:

Ալեքսանդր Առաջինի արտաքին քաղաքականության մեջ հիմնական տեղ էր գրավում ուսւական ցարիզմի պայքարը Թուրքիայի և Պարսկաստանի դեմ՝ Անգլիովկասի գրավման համար*):

4. ՍՊԵՐԱՆՍԿՈՒ ԿՈՂՄԻՑ ԿՈՂՄՎԱՌ ՊԵՏԱԿԱՆ ԸՆՔՈՐՄԵԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Ալեքսանդր Առաջինն իր յերկրի հասարակական

ուղադրությունը ուզած ուղղության բեկեռելու համար փորձեց վորոշ պետական ռեֆորմներ կատարել: Նա պետական բարեփոխումների նախագծի կազմումը հանձնեց Միխայիլ Միխայլովիչ Սպերանսկովն: Սպերանսկին 1808 թ. վերջին սկսեց աշխատել նախագծի վրա և արդեն 1809 թ. հոկտեմբերին ներկայացրեց Ալեքսանդրին իր կողմից կազմված նախագիծը, վորով նախատեսում եր հետեւյալ միջոցառումները:

Սպերանսկին իր նախագծով Ռուսաստանի ամբողջ բնակչությանը բաժանեց յերեք հիմնական խմբի: 1-ին խումբ՝ «ազնվականություն», այս խմբի մեջ մտնում ելին ազնվականները, 2-րդ խումբ՝ «միջակ վիճակի մարդիկ»: այս խմբի մեջ մտնում ելին գերազանցապես վաճառականները և քաղաքի քաղենիական տարրերը: 3եվ վերջապես 3-րդ խումբը, վորին նա անվանում եր «աշխատավոր ժողովորդ»: այս խմբի մեջ մտնում ելին քաղաքի արհեստավորները, գյուղացիությունը և բանվորները, այլ կերպ ասած աշխատավորական ամբողջ տարրերը:

Սպերանսկին այս յերեք խավերի համար ել նախատեսում եր իրավական ազատություն, այսինքն զբուանով նա նախատեսում եր ճորտական իրավունքի վերացում: Սպերանսկին իր այդ նախագծով հողը դարձյալ թողնում եր վորպես կալվածատիրոջ—ֆեոդալի սեփականություն, իսկ հողի ֆեոդալական սեփականության պահպանման և գյուղացուն առանց հողի ազատագրման պայմաններում գյուղացու իրավական «ազատությունը» կլինի միանգամայն ձևական: Բայց Սպերանսկու նախագծի իշխանության գլուխը պետք է կանգներ միապետը՝ «պետական խորհրդի»

Հետ միասին: Այլ կերպ ասած միապետի կողքին, վորածին բարձրագույն իշխանություն հանդես եր գալիս պետական խորհուրդը, վորը պետք է ձևականորեն սահմանափակեր միապետի իրավունքները: Թագավորի և պետական խորհրդի իրավասության տակ պետք է գործելին որենսդիր, գործադիր և զատական մարդինները: Սպերանսկու նախագծի համաձայն որենսդիր սոգանը պետք է կոչվեր պետական դումա, վորը նախատեսվում եր ընտրել միայն բարձր ազնվականությունից և խոշոր հողատերերից: Գործադիր որդանը պետք է կազմվեր բոլոր մինիստրություններից, նահանգապետներից և գավառապետներից, իսկ վորպես բարձրագույն դատական որդան պետք է հանդիսանար սերպույն գավառական պետք է հանդիսանար սերպույն գերությունը, գավառներում պետք է գործելին առանձին դատարաններ: Սպերանսկին նախատեսում եր նաև ուժեղացնել պետական ապարատում գործող կադրերը: Դրա համար նա նախագծում ե, վոր բարձր աստիճանի պաշտոնյա դառնալու համար ազնվական ծագման հետ միասին պետք է ունենալ նաև համապատասխան կըրթություն: Այլ կերպ ասած, նա առաջ է քաշում կրթական ցենզի հարցը: Նախորոք հիշատակենք, վոր դա մեծ դժունություն առաջ բերեց ազնվականության մեջ, վորովհետև այս սկզբունքի կիրառմամբ մեծ քանակությամբ պետական շինովնիկներ, վորոնք բոլորովին կըրթություն չունելին, բայց զբաղեցնում ելին պետական բարձր պաշտոններ, պետք է դուրս մնային իրենց աշխատանքից:

Սպերանսկին վորոշ նախատեսումներ կատարեց

նաև յերկրի ֆինանսական միջոցները ավելացնելու համար: Նա հատկապես նախատեսում եր մի քանի նոր հարկեր սահմանել, բացի այդ նա առաջարկում եր պրոգրեսիվ հարկեր նշանակել հասարակական բոլոր խավերի վրա, դրանց թվում և ազնվականության վրա, վորոնք մինչև այդ հարկեր չելին վճարում:

Սպերանսկու այս նախագիծը հետապնդում եր վերջին հաշվով պայմաններ ստեղծել սահմանադրական միավետության համար: Սպերանսկին իր այդ նախագիծը կազմելիս, յելակետ ե ունեցել իր անձնական հայացքները, Յելբուպայում գործող մի շարք սահմանադրությունները և վերջապես սոցիալ-տնտեսական այն փոփոխությունները, վորոնք տեղի ելին ունեցել 19-րդ դարի սկզբին Թուսաստանում:

Ալեքսանդր Առաջինն առաջին շրջանում ընդունեց Սպերանսկու նախագիծը, և նույնիսկ ձեռնարկեց այդ նախագիծի վորով վերակառուցելու իր պետական ապահովատը: Նախ և առաջ նա կազմեց Սպերանսկու նախատեսած պետական խորհուրդը, վորը 1810 թ. հունվարի 1-ին արդեն սկսեց աշխատել: Այնուհետև, Ալեքսանդրը սահմանեց նախագծով նախատեսվող պետական քարտուղարի պաշտոնը, վորի փունկցիան հավասար եր առաջին մինիստրի ֆունկցիաներին և վորով առաջին պետական քարտուղարը նշանակվեց Սպերանսկին: Այնուհետև Ալեքսանդրը ձեռնարկեց նախագիծի վորով վորով փոփոխություն կատարել նաև ֆինանսական հարկային քաղաքականության մեջ: Նա ձեռնարկեց կրթական ցենզի սկզբունքը մտցնել պետական պաշտոնյաների նշանակման գործում:

Սակայն Սպերանսկու այդ նախագիծի իրագործման առաջին իսկ փորձերը մեծ դժգոհություններ առաջ բերին ուստի ունեակցիոն ազնվականության մեջ: Սպերանսկու նախագիծի և իրեն՝ Սպերանսկու դեմ սկսվեց ուժեղ պայքար: Այդ պայքարի գլխավորողներից մեկը Կարամզինն եր: Կարամզինն Ալեքսանդր Առաջինի հասցեյով հրապարակեց իր «Հին և նոր Ռուսաստանի մասին» նամակը, վորով վճռականապես գուրս յեկավ Սպերանսկու նախագիծի դեմ: Իր այդ նամակում նա ցուց է տալիս, վոր Սպերանսկու նախագիծը բացարձակապես ուղղված է ինքնակալության և ազնվականության դեմ: Ուստի նա պահանջում է Ալեքսանդրից վոլ մի սահմանադրական գիշում: Նա գտնում է, վոր շպետք և մազաշափ անգամ տատանվի ինքնակալության հիմքերը և վորեև շափով շպետք և կրծատվի ազնվականության իրավունքները:

Կարամզինը վճռականապես դեմ գուրս գալով սահմանադրական միավետության գաղափարին, գրում է՝ «Լուսավոր և խելոք թագավորը կարող է բերել ավելի մեծ բարիքներ, քան սահմանադրական ինքնակալությունը»:

Ճորտատերերը նույնպես վճռականապես դեմ գուրս յեկան Սպերանսկու նախագիծն, վորովհետեւ, ինչպես ասացինք, նրա նախագիծը նախատեսում եր պայմաններ ստեղծել ճորտությունը վերացնելու համար: Կալվածատերերը չելին պատկերացնում Ռուսաստանն առանց ճորտ գրողացու, ըստ նրանց՝ առանց ճորտության ամբողջ պետական օիստեմը ողը կցնդերը վոր ճորտական իրավունքի վերացումով գյուղացիները

Կդառնային միայն «զոդրեր» և «հարբեցողներ» և Ռուսաստանի տնտեսական կյանքը «կրայքայվեր»:

Այսպիսով, 1810 թվականի վերջերին և 1811 թվականի սկզբներին, ռուսական ազնվականության մի խոշոր մասը խիստ կերպով դժգոհեց Ալեքսանդրի ինչպես արտաքին քաղաքականությունից, նույնպես և նրա ներքին քաղաքականությունից:

Աստիճանաբար Ալեքսանդրի դեմ ձևավորվում եր ազնվականության մի ոպոգիսիա, վորո պահանջում եր նրանից արտաքին քաղաքականության մեջ՝ մերձեցում Անգլիայի հետ, իսկ ներքին քաղաքականության մեջ՝ Սպերանսկու նախագծի լիկվիդացիա:

Այս պայքարը վերջացավ նրանով, վոր Ալեքսանդր Առաջինը վոչնչացրեց Սպերանսկու կողմից կազմված նախագիծը, շելյալ հայտարարեց այն ձեռնարկումները, վոր նա ինքն անձամբ կատարել եր Սպերանսկու այդ նախագծի հիման վրա և նույնիսկ Սպերանսկին հեռացվեց պետական քարտուղարի պաշտոնից 1812 թվի սկզբին և ուղարկվեց (կարելի յէ ասել աքսորվեց) Կազան, ապա Թերմ և վորոշ ժամանակից հետո նշանակվեց նահանգապետ Սիբիրում։ Դա երան պալատական ակտիվ գործունեյությունից մեկուսացնելու միջոց եր,

Այսպիսով Սպերանսկու նախագիծը մնաց միայն թղթի վրա։

Ալեքսանդրն արտաքին քաղաքականության մեջ նույնպես փոփոխություններ մտցրեց։ Նա սկսեց աստիճանաբար թշնամական դիրք բռնել Ֆրանսիայի դեմ։ Դեռևս 1810 թվականին Ռուսաստանը խախտեց ցա-

մաքային պաշարման պայմանները և Անգլիայից զանազան չեղոք պետությունների նավերի դրոշի տակ Ռուսաստան ելին մտնում անգլիական նավերը, բերելով մեծ քանակությամբ ապրանքներ։ Հակառակ դրան, Ռուսաստանն իր մաքսային քաղաքականությամբ արգելվներ ե ստեղծում Ֆրանսիայից ներմուծվող ապրանքների դեմ։

Նապոլեոնն իր հերթին արդեն ժամանակն եր համարում իր նվաճումները ծավալել դեպի Արեվելք և տեսդորեն նախապատրաստվում եր պատերազմի։ Այդ հակասությունների սրումը հասցրեց 1812 թվի ռուսական պատերազմին։

5. ՀԱՅԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1812 թվականին

Նապոլեոնն արտահայտելով ֆրանսիական խոշոր բորժուազիայի շահերը, նախապատրաստվեց պատերազմի Ռուսաստանին տիրապետելու համար։ Նապոլեոնը պատերազմի նախորյակին գրավեց գերմանական Ոլդենբուրգյան իշխանությունը, վորի իշխանը Ալեքսանդր Առաջինի բարեկամներից եր, վորը և դիմեց Ալեքսանդրի ողնությանը։ Ալեքսանդրը բողոքեց նապոլեոնի դեմ՝ Ոլդենբուրգյան իշխանությունը գըրավելու համար, սակայն նապոլեոնն արհամարեց այդ բողոքը։ Ի պատասխան դրան Ալեքսանդրը բողոքի նոտա ուղարկեց Ֆրանսիայի այդ արարքի համար, ինչպես Ֆրանսիային, նույնպես և յելբոպական մյուս պետություններին։ Այս հանգամանքն ավելի սրեց Ռուսաստանի և Ֆրանսիայի հարաբերությունները։

Ծուսաստանի և Ֆրանսիայի հարաբերությունները սըրվում եյին նաև Լեհաստանի պատճառով, վորովհետև Նապոլեոնը ցանկանում էր ամրանալ Լեհաստանում և այն բազա դարձնել՝ իր նվաճումները դեպի Ռուսաստան ծալվածլու համար: Իսկ Ալեքսանդր Առաջինն ինքն ել էր ցանկանում ամրանալ Լեհաստանում և այն բազա դարձնել բաժանելու Յեփրոպան և ուժեղացնելու իր ազգեցությունը Յեփրոպայշում:

Ռուսաստանը և Ֆրանսիան առյերես իրար բարեկամ եյին ցուց տալիս, բայց ներքուստ իրար դեմ տենդորեն նախապատրաստվում եյին պատերազմի: Նապոլեոնը ուսասկան սահմաններին կից ստեղծեց ուազմական խոշոր բազաներ, գենքի, հանդերձանքի, սննդի պահեստներ: Նա դաշինք կնքեց Պրուսիայի և Ավստրիայի հետ՝ ընդգեմ Ռուսաստանի: Մեծ քանակությամբ լրտեսներ ուղարկեց Ռուսաստան: Նապոլեոնի Ռուսաստանում գործող լրտեսներիցն եյին Նարիշկինը, գեներալ Կալենկովը և ուրիշները:

Ալեքսանդր Առաջինը նույնպես պատրաստվում էր պատերազմի: Նա զորք և զինամթերք կենտրոնացրեց սահմանի վրա: Նա նույնպես Փարիզ ուղարկեց իր լրտեսներին: Ալեքսանդրի ֆրանսիական լրտեսներից եր Զերնիշեվը, վորը ձեռք եր բերել Նապոլեոնի շտաբից շատ արժեքավոր պլաններ: 1812 թվի հունիսի սկզբին Նապոլեոնը մոտավորապես 420.000 հոգուց կազմված բանակի անցավ սահմանը և սկսեց պատերազմական գործողությունները Ռուսաստանի դեմ:

Նապոլեոնի բանակն այդ շրջանում աշխարհի ամենախոշոր բանակներից մեկն էր, վորը կազմված

էր վոլ միայն ֆրանսիացիներից, այլև բոլոր այն ժողովուրդներից, վորոնք գտնվում եյին Նապոլեոնի գերիշխանության տակ: Նապոլեոնի բանակը նաև այդ շրջանի լավ զինված բանակներիցն էր, նա իր հետ Ռուսաստան բերեց մոտավորապես 1500 թնդանոթ:

Ալեքսանդր Առաջինը Նապոլեոնի գեմ դուրս բերեց 200 հազար հոգուց կազմված մի բանակ՝ նա այդ բանակը, պրուսական գեներալ Պֆովի խորհրդով, բաժանել էր մի քանի մասի: Առաջին բանակը, վորը գործում էր Ռուսիանի—Կիդա ճակատում, կազմված էր 110 հազար հոգուց, ուներ 550 թնդանոթ, սրա հրամանատարն էր Բարեկայ-դե-Տոլլին: Արևմուտքում գործում էր Բագրատիոնի բանակը, վորի զորքի թիվը հասնում էր 50 հազար հոգու, ուներ իր հետ 180 թնդանոթ և գրադեցրել եր Նեման-Բուգա գիծը: Յերրորդ բանակը գտնվում էր Լուցկի ուղոնում և գործում էր Տորմասովի հրամանատարությամբ, այդ բանակն ել կազմված էր մոտավորապես 40 հազար հոգուց և ուներ 168 թընդանոթ: Ամբողջ ճակատի գիծը հավասար էր մոտ 800 կիլոմետրի և այդպիսի մեծ ճակատում բաժանված ուսասկան նվազ բանակի ուժերը, համեմատած ուժեղ թշնամու հետ, խոշոր դժվարությունների մեջ ընկան պատերազմական գործողությունների հենց առաջին իսկ շրջանում: Ռուսական բանակի գրությունը ծանրանում էր նաև նրանով, վոր մի ուժեղ, ձեռնհան զլիավոր հրամանատար չուներ: Սկզբում զլիավոր հրամանատարի պարտականությունը ժամանակավորապես կատարում էր Ալեքսանդր Առաջինը, վորին բանակը վոլ սիրում էր, վոլ ել վատահում: նույնիսկ

Ալեքսանդրի մտերիմները խորհուրդ չելին տալիս նրան
գլխավոր հրամանատարությունն իր վրա վերցնելու
Այսպես որինակ՝ Ալեքսանդրի քույրը՝ իշխանուհի Յե-
կատերինա Պավլովնան Ալեքսանդրին իր նամակներից
մեկում գրում է.

«Ի սեր աստծո շվերցնեք բանակի հրամանա-
տարությունը, վորովհետև հարկավոր և մի այն-
պիսի մարդ, վորի նկատմամբ զորքը վստահու-
թյուն զգա, իսկ դուք չեք կարող ներշնչել այդ
վստահությունը»:

Նապոլեոնը պատերազմական գործողությունների
առաջին իսկ պահին նկատելով ոռուական բանակի
տակտիկական սխալը, նրա բաժանվածությունը, իր
ամբողջ բանակը սեպի նման խրեց ոռուական յերկու
բանակների՝ Բարկլայ-դե-Տոլլիի և Բագրատիոնի
բանակների մեջ, նպատակ ունենալով այդ յերկու բա-
նակները իրարից ավելի հեռացնել և առանձին-առան-
ձին վոշնացնել։ Սակայն նապոլեոնին այդ շհազողվեց,
վորովհետև այդ սխալը շատ շուտով նկատեցին նաև
Բարկլայ-դե-Տոլլին ու Բագրատիոնը, վորոնք սկսեցին
կազմակերպված ձեվով նահանջել և նահանջի ժամա-
նակ միանալ ու ստեղծել մի կազմակերպված ուժ նա-
պոլեոնի դեմ։

Պֆուլի խորհրդով Ալեքսանդրը Արևմտյան Դիլ-
նայի ափին Դրիսսայում ստեղծել եր մի խոշոր ճամբար։
Այդ ճամբարը պետք է դիմադրություն ցուց տար նա-
պոլեոնի ուժերին հենց ճակատից, մինչդեռ նապոլե-
ոնն իր ուժերն արդեն ազատ շարժելով կամենում եք
շրջանցել ճամբարը և այն կտրել իր թիկոնքից։

Այդ ծանր պահին Ալեքսանդրը վերադառնում է
Գետերբուրգ, իսկ գլխավոր հրամանատարությունը
ժամանակավորապես Հանձնվում է Բարկլայ-դե-Տոլ-
լին, վորը հրաման տվեց նահանջել ինչպես Դրիսսայի
ճամբարին, նույնպես և արևմտյան յերկու բանակնե-
րին։ Դե-Տոլլիի այդ տակտիկան միանգամայն ճիշտ
էր, այդ մասին նշանավոր զինվորական պատմաբան
Կլաուզելիցը գրում է. «Յեթե ոռուներն իրենք կամավոր
կերպով շնորհնելին այդ դիրքերը (խոսքը ճամբարի
մասին եր—Զ. Գ.), ապա թիկոնքից նրանց գրոհի կեն-
թարկելին։ Միևնույն ե, դա լիներ 90 հազար, թե 120 հա-
զար հոգի, կընկնելին խրամատների կիսաշրջանի մեջ և
ստիպված կլինելին անձնատուր լինել»։

Այսպիսով ոռուական բանակի տակտիկական այդ
սխալն ուղղվեց դե-Տոլլիի նախաձեռնությամբ և ոռու-
ական յերկու խոշոր բանակները Բագրատիոնի և դե-
Տոլլիի նահանջով, ոգոստոսի Յ-ին, Սմոլենսկու տակ
միացան։ Ոռուական բանակի տակտիկական այդ սր-
խալի ուղղումը կատարվեց խոշոր զոհերով, վորոնք
տվեցին Սմոլենսկու տակ տեղի ունեցած մեծ ճակա-
տամարտում։

Ոգոստոսի 16-ին նապոլեոնը հրամայեց իր գոր-
քերին սկսել արշավանքը Սմոլենսկը գրավելու համար։
Կոիվն սկսելեց առավոտյան ժամի 6-ից և շարունակ-
վեց մինչև ուշ յերեկո, բայց գեներալ Դոխտուրովի
կորպուսը համառորեն պաշտպանում եր քաղաքը։ Նույն
յերեկոյան նապոլեոնը կարգադրեց իր մարշալ Դավին
հաջորդ որը անպայման գրավել Սմոլենսկը։ Հաջորդ
որը Սմոլենսկի համար կոիվը վերսկսվեց ավելի կա-

տաղի, բայց ոռու զինվորները հերոսաբար դարձյալ հետ եյին շպրտում ֆրանսիական բանակի հարձակումները. ֆրանսիացիները Սմոլենսկու տակ տվեցին մոտ 20.000 սպանված: Ոգոստոսի 18-ի գիշերը միայն ոռուական բանակը նահանջեց Սմոլենսկուց՝ վաղորոք պայմթեցնելով քաղաքի բոլոր ամրությունները:

Ոգոստոսի 19-ին ֆրանսիական բանակն առանց մարտի մտավ Սմոլենսկ:

Ռուսական բանակի այդ անհաջողությունները, ոռուական զրբերի մասնակի կորուստն, արդյունք եր այն բանին, վոր Ալեքսանդր Առաջինը լավ չեր նախապատրաստվել պատերազմին: Ալեքսանդր Առաջինի հանցանքով ոռուական բանակի շտաբներում թափավորում եր ինտրիկները: Ռուսական բանակը նապոլեոնի դեմ դիմադրության դուրս յեկալ գրեթե առանց կազմակերպված, մշակված պլանի և վերջապես Ալեքսանդր Առաջինը վոշ մի փոփոխություն չեր մտցրել բանակի կազմի և զինվածության մեջ: Նրա բանակը կրում եր իր վրա ճորտական հետամնաց տնտեսության և հետամնաց քայլայլած կարգերի բոլոր բացասական գծերը:

Այսպիսով ոռուական բանակի առաջին շրջանի անհաջողությունը, ըստ եյտիյան Ալեքսանդր Առաջինի հանցանքով եր: Սմոլենսկն ընկնելուց հետո ոռուական բանակը կազմակերպված կերպով, առանց խուճապի նահանջեց:

Նապոլեոնի բանակի դեմ սկզբից ևեթ վոտքի կանգնեց վոշ միայն ոռուական բանակը, ալ և ամբողջ ոռու ժողովուրդը, վորովհետև նապոլեոնյան ար-

շավանքները ոռու ժողովրդի համար բերում եյին ազգային նոր ճնշում և ավելի քան զաղբելի շահագործում: Նապոլեոնի բանակը ոռուական սահմանները մտնելուն պես հանդիպեց մի կողմից ոռուական կանոնավոր բանակի, իսկ մյուս կողմից՝ ամբողջ ոռուական ժողովրդի դիմադրությանը: Սկզբից ևեթ նապոլեոնի բանակի մեջ սկսվեց հանդես գալ քայլայլան տարրեր, զինվորներն սկսեցին կողոպտել ոռուական գյուղերը և շտապում եյին այդ կողոպտաը շուտ հասցընել իրենց տները: Աճեց դասալքությունը: Մինչև արևմտյան Դվինան անցնելը, նապոլեոնի բանակից պակասեցին մոտավորապես 150 հազար զինվորներ, նրանց մի մասն սպանվեց, մյուս մասը դասալքեց և հետ գնաց:

Մանր եր նաև ոռուական բանակի վիճակը, վորովհետև ուղղմական գործողությունների այդ լուրջ պահին ոռուական բանակը դեռ հիմնական, գլխավոր հրամանատար չուներ: Եթե ինչպես ամբողջ բանակին, նույնպես և ոռու հասարակությանը զբաղեցնում եր այն միտքը, թե ով պետք է լինի բանակի գլխավոր հրամանատարը: Բանակի և ժողովրդական լայն խավերի մեջ մեծ համակրություն ուներ գեներալ Կուտուզովը: Բանակը և ժողովուրդը պահանջում եյին գլխավոր հրամանատար նշանակել գեներալ Կուտուզովին: Սակայն Ալեքսանդրը չեր սիրում Կուտուզովին, և իսկապես նրանք միմյանց չեյին սիրում, վորովհետև տարրեր ուղղմական ուղղությունների եյին պատկանում: Ալեքսանդրը պաշտպանում եր կամ հետևում էր Պավելի ուղղմական ուղղությանը, իսկ Կուտուզովը

Հետևում եր Սուվորովյան ուղղությանը: Ալեքսանդրը, Հակառակ ժողովրդի ցանկության, ձգտում եր ձախողել Կուտուզովի թեկնածությունը: Զնայած դրան, և՛ Պետք բորբոքում, և՛ Մոսկվայում, և՛ ամբողջ Ռուսաստանում աճում եր ժողովրդի պահանջը՝ Կուտուզովին գրիավոր Հրամանատար նշանակելու մասին: Այդ մասին վկայում ե Հենց ինքը, Ալեքսանդրը: Նա իր քրոջը գերած նամակում ասում ե. «Պետք բորբոքում բոլորն ասում են, թե գլխավոր Հրամանատար պետք ելինի Կուտուզովը: Ամբողջ Մոսկվան ցանկանում են նրան տեսնել իբրեւ բանակի ղեկավար»: Ալեքսանդրը հանձնարարեց բարձրագույն կոմիտեյին առաջադրել գլխավոր Հրամանատարի թեկնածություն: Բարձրագույն կոմիտեն նույնպես առաջադրեց Կուտուզովի թեկնածությունը: Այս բոլորից հետո Ալեքսանդրն, իր կամքին միանգամայն հակառակ, 67 տարեկան նշանավոր զորավար Կուտուզովին նշանակեց գլխավոր Հրամանատար, սակայն միաժամանակ բոլոր պայմաններն ըստելծեց հետագայում Կուտուզովի դեմ ամեն տեսակ կեցուու ինտրիգներ սարքելու համար: Կուտուզովին գլխավոր Հրամանատար նշանակելու մասին Ալեքսանդրն ասում ե. «Հասարակությունը ցանկանում ե Կուտուզովի նշանակումը, յես ել նշանակեցի նրան, ինչ վերաբերվում ինձ, յես լվանում եմ ձեռքերս»:

Ռուսական բանակը և ամբողջ ժողովրդը Կուտուզովի նշանակումը ընդունեց մեծ խանգամառությամբ: Ոգոստոսի 17-ին Կուտուզովը, վորաբես գլխավոր Հրամանատար, ճակատ ե մեկնում: Նա ճակատ հասնելուն պես զգաց ուժերի խիստ անհավասարու-

թյունը և կանգնեց կազմակերպված նահանջի տակտիկայի վրա: Կուտուզովը գտնում եր, վոր նահանջելով ֆրանսիացիներին պետք ե քաշել յերկրի խորքը, կտրելով նրանց իրենց բազայից, ապա ավելի հեշտությամբ և ավելի քիչ զոհերով վոչնչացնել թշնամուն և դուրս շրաբրտել յերկրից: Այս տակտիկան միանագմայն ճիշտ տակտիկա եր, վորը հետագայում գործով ապացուցվեց: Կուտուզովը բանակի և հասարակության պահանջմամբ, Հակառակ իր տակտիկական նպատակին, վորոշեց Մոսկվայից 90 կիլոմետր հեռու, Բորոդինո գյուղի տակ, վճռական ճակատամարտ տալ նապոլեոնին:

Յերկու կողմերն ել նախապատրաստվեցին վճռական ճակատամարտի: Ֆրանսիացիները Բորոդինոյի տակ կենտրոնացրին մոտավորապես 130 հազար զինվոր և 587 թնդանոթ, իսկ Ռուսաստանը դուրս բերեց 120 հազար զորք և 640 թնդանոթ: Ճակատամարտի նախորյակին Կուտուզովն իր զորքերին դիմեց հետեւյալ կոչով, «Ձինվորնե՛ր, ահա այն ճակատամարտը, վոր դուք ցանկանում ելիք, հաղթանակը ձեզնից և կախված, կովեցեք այնպես, ինչպես կովում ելիք Առատերլիցի, Ֆրիդանդի, Վիտեբսկի և Սմոլենսկու տակ: Թող հետագա սերումը հպարտությամբ հիշի այս ձեր սիրագործությունները»:

Այդ կոչը մեծ վոգեվորություն և հայրենասիրություն առաջ բերեց ռուսական զորքի մեջ: Սեպտեմբերի 7-ին, վաղ առավոտյան սկսվեց ճակատամարտը: Արդեն կեսոր եր, բայց դաժան ճակատամարտը շարում ակվում եր նույն լարվածությամբ և նույն տերիտորիայում:

Նապոլեոնը, վորն անձամբ ղեկավարում եր ֆրանսիական գորքին, խիստ կատաղած եր և մոռայլ՝ ոռասական բանակի այդ համառ դիմագրության պատճառով։ Ֆրանսիական մարտկոցները ոռւսական զորքերի վրա կրակեցին մոտ 60 հազար արկ. ֆրանսիական զորքերը հարձակում ելին կատարում ոռասական բանակի զանազան տեղերից, նրանք մեկ հարձակվում ելին աչ թելի վրա, վորի հրամանատարն եր Բարեկայը, մեկ հարձակվում ելին ձախ թելի վրա, վորի հրամանատարն եր Բագրատիոնը։ Բագրատիոնը հետ շպըրտեց ֆրանսիական յերեք խոշոր գրոհներ և 4-րդ գրոհի ժամանակ նա հերոսաբար սպանվեց, իսկ ձախ թելի վրոշ ճեղքվածք ստացավ։ Ֆրանսիական ուժերը կատաղի հարձակման անցան Ռայեվսկու մարտկոցի դեմ, վորը պաշտպանում եր ընդհանուր ճակատի կենտրոնական մասը։ Ռայեվսկու մարտկոցների վրա հարձակվեց յերեք հետևակ դիվիզիա և մի հեծյալ կորպոս, բայց ոռւսները արիաբար հետ ելին մղում ֆրանսիական այդ ուժերին։ Ճակատամարտը քանի զբանական ավելի կատաղի յեր դառնում։ Յերկու կողմից ել դիակների դեղ եր կուտակվել. մարտկոցները ձեռքից ձեռք ելին անցնում։ Հարձակումը շատ տեղեր հաճախ վերջանում եր բռնցքամարտով, բայց վոլ մեկն իր դիրքը չեր գիշում մյուսին։

Այդ ճակատամարտը վերջացավ միայն ուշ գիշերին։ Ճակատամարտը վերջանալուց հետո յերկու կողմերն ել իրենց հաղթող ելին համարում։ Բորոդինոյի ճակատամարտը յերկու կողմերից ել խոշոր զոհեր իրենցից։ Ռուսներն այդ ճակատամարտում կորցրին 58

հազար մարդ, իսկ ֆրանսիացիները 50 հազար մարդ։ Ճակատամարտում 47 ֆրանսիական հայտնի զեներալներ սպանվեցին։

Կուտուզովը ճակատամարտից հետո Ալեքսանդրին գրեց հետեւլալ զեկուցագիրը.

«Զինվորները կովում ելին անորինակ քաջությամբ, մարտկոցները ձեռքից-ձեռք ելին անցնում և բանը վերջացավ նրանով, վոր հակառակորդն իր գերազանց ուժերով վոլ մի տեղ և վոլ մի քայլ հող շշահեց»։

Ռուսական զինվորների հերոսական կոփմբ, խիստությունն ու անվեհերությունը խոստովանում է նույն ինքը, Նապոլեոնը։ Նա Բորոդինոյի ճակատամարտի մասին իր հուշատերում գրում եր.

«Իմ բոլոր ճակատամարտերից ամենասարսափելին, դա այն ճակատամարտն եր, վոր յես տըմբեցի Մոսկվայի մոտ, այնտեղ ֆրանսիացիները ցուց տվեցին, վոր արժանի յեն հաղթանակ տանելու, իսկ ոռւսներն արծանի յեղան անպարտելի վիճելու։

Այսպիսով, Բորոդինոյի ճակատամարտում, ռուս զինվորները մի անգամ ել ցուց տվին իրենց անսահման հայրենասիրությունը և հերոսությունը։

Հաջորդ որք կուտուզովը յերբ պարզեց իր կորուստները, չնայած զինվորների տրամադրությունը շատ բարձր եր, բայց նա գտավ, վոր ճակատամարտի շարունակումը կտա ավելորդ նոր զօհեր, ուստի բանակին նահանջի հրաման տվեց։ Կուտուզովի այդ արարքը տարրինակ եր թվում պալատական ազնվա-

կաններին, վորովհետև նրանք չելին հասկանում մեծ զորավարի տակտիկայի ելությունը։ Սեպտեմբերի 13-ին Ֆիլե գյուղում կայացավ ռազմական խորհուրդ, վորտեղ դե-Տուլիյի և Կուտուզովի պահանջով վորոշվեց առանց կովի հանձնել նաև Մոսկվան։

Նախ քան ոռասկան բանակի նահանջը գրեթե ամբողջ բնակչությունը հեռացավ Մոսկվայից։ Այնտեղ մնացին միայն ալեհեր ծերերը։ Մոսկվայից տարան գրեթե ամբողջ անհրաժեշտ հարստությունը և միայն ամայի Մոսկվան եր, վոր ոռասկան բանակը թողեց ֆրանսիացիներին։ Սեպտեմբերի 15-ին ֆրանսիական բանակը մտավ Մոսկվա, սակայն հենց նույն որը Մոսկվայում բռնկվեց խոշոր հրդեհ։ Մոսկվայում յեղած հրդեհների մեջ դա ամենից խոշորն եր։ Մեծ հեռավորության վրա յերեսում ելին Մոսկվայի հրդեհից առաջացած բոցերը։ Հրդեհի հետևանքով այրվեց Մոսկվայի տների 80 տոկոսը. այրվեցին գրեթե բոլոր պահեստները, ֆաբրիկաները և յեկեղեցիները։

Հրդեհի առաջացման մասին կան յերկու հիմնական տեսակետներ, վոմանք գտնում են, վոր հրդեհն առաջացրել են ֆրանսիացիները, վոմանք ել գտնում են, վոր այդ հրդեհն առաջացրել են ոռաները։ մեր կարծիքով յերկրորդ տեսակետն ավելի հավանական ե. ահա թե ինչու։ Մոսկվայի հրդեհը պետք ե դիտել Կուտուզովի նահանջի տակտիկայի հետևողական շարունակությունը։ Կուտուզովն իր ամբողջ նահանջի ժամանակ աշխատում եր թշնամու թողած տերիտորիան ամբողջովին ամայացնել, վորպեսզի զրկի նրան այդ տերիտորիայում ամրանալու և ապրելու հնարավորությունը։

Եից, Այդպիսով, Մոսկվայի հրդեհման միջոցով հավանաբար Կուտուզովն աշխատում եր զրկել նապոլեոնին Մոսկվայում ամրանալու հնարավորությունից։ Բացի այդ, փաստեր կան այն մասին, վոր ոռաները Մոսկվան թողնելուց առաջ, Մոսկվայից հեռացրին բոլոր հակառակեային միջոցները, վորպեսզի հնարավոր մինի հրդեհը հանգցնել։ Յեկ վերջապես Յ-րդ փաստն այն ե, վոր հրդեհը հանգցնելու գործում ավելի անտարերեր վերաբերմունք ունեին Մոսկվայում մնացած ոռաները, քան ֆրանսիացիները։ Այն ժամանակ, յերբ հրդեհը սպառնում եր Կրեմլին, վորտեղ նապոլեոնն եր իր շտաբով, նա դուրս յեկավ Կրեմլից և հայտարարեց՝ «Սա նրանք, իրենք այրեցին, սրանք ինչ մարդիկ են, կատարյալ սկյուտներ»։ Ահա այս բոլորը հիմք են տալիս մեզ յենթադրելու, վոր հրդեհն առաջացրել են իրենք, ոռաները, սակայն ոռաները հետագայում տարածեցին, թե հրդեհը առաջացրել են ֆրանսիացիները, վորպեսզի դրանով ավելի գրգռեն ժողովրդին ֆրանսիացիների դեմ։

Կուտուզովը Մոսկվան թողնելով թելվային փայլուն յերթ կատարեց և փակեց դեպի հարավ տանող բոլոր ճանապարհները։ Դրանով նա զրկեց ֆրանսիացիներին գեպի հարավ շարժվելու և այնտեղից կենսամթերք, սնունդ ստանալու հնարավորությունից։ Կուտուզովն իր այդ տակտիկական պլանի մասին ասում ե հետեւյալը։

«Տուզայի և կալուգայի ճանապարհներին յեղած իմ խմբերով պետք ե կտրեմ թշնամու ամբողջ գիծը, վոր ձգված ե Սմոլենսկից մինչև Մոսկվա և սրանով իսկ խանգարեմ այն աջակցությունը, վոր թշնամու բա-

նակը կարող ե ստանալ իր թիկունքից և մեզ վրա գր-
րավելու թշնամու ուշադրությունը: Հույս ունեմ նրան
հարկադրել թողնել Մոսկվան և փոխել իր ամբողջ ո-
պերացիոն գիծը:

Այսպիսով, Մոսկվան Նապոլեոնի համար դարձավ
մի ծովակ, նրա ուժերն աստիճանաբար շրջապատվե-
ցին ոռասական բանակի կողմից: Նապոլեոնի գրու-
թյունն այդ ժամանակ թիկունքում նույնպես խիստ
կերպով ծանրանում էր, վորովհետև նրա դեմ սկսեցին
խոշոր պարտիզանական շարժումներ:

Թուա գյուղացիությունը ծավալեց պարտիզանա-
կան կոփվներ Նապոլեոնի դեմ՝ ազգային անկախու-
թյան համար:

Գյուղացիական պարտիզանական ջոկատներից
հայտնի ելին Դավիթովի, Սեսլավինի, Ֆիգների, Սուտ-
լովի, Գերասիմ Կուրինի և բազմաթիվ այլ պարտիզա-
նական ջոկատներ: Այդ պարտիզանական ջոկատներից
վոմանց թիվը հասնում էր 4—5000-ի:

Այսպիսով Նապոլեոնի բանակը մի կողմից գրա-
նչվում էր ոռասական կանոնավոր բանակի հարվածնե-
րի տակ, իսկ մյուս կողմից, թիկունքում գտնվում էր
գյուղացիական պարտիզանական ուժերի հարվածների
տակ: Յեվլ իրոք, Մոսկվան Նապոլեոնի համար, ինչպես
Կուտուզովն էր նախատեսում, դարձավ մի թակարդ:

Վրա յեր հասնում ձմեռը, Նապոլեոնն իր ուժերով
անկարող էր առաջ շարժվել կամ նույնիսկ դիմադրեն
ոռասական ուժերին, քանի զնում Նապոլեոնի բանակի
գրությունը ծանրանում էր, կենսամթերքների պակասը
և համաձարակ ջիվանդությունները մաշում և կազմա-

լուծում ելին Նապոլեոնյան բանակին: Ուստի
նա դիմեց Ալեքսանդր Առաջինին, խնդրելով հաշտու-
թյուն: Նապոլեոնը Ալեքսանդրի մոտ ուղարկեց յերկու
պատգամավորություն, բայց անպատճախան մնալով,
ուղարկեց նաև մեկ պատգամավորություն Կուտուզովի
մոտ՝ Լորիստոնի գլխավորությամբ (սա Ռուսաստա-
նում ֆրանսիական նախկին դեսպանն էր): Ֆրանսիա-
կան այդ պատգամավորությունը, յերբ յեկավ Կուտու-
զովի ճամբարը, Կուտուզովը նրան ընդունեց արտա-
կարգ կերպով: Նա կարգադրեց իր զորքերին բարձր
տրամադրություն ստեղծել լագերում: Ամենուրեք ոռ-
սական զորքերը խարուցներ ելին վառել և նրա շուրջը
նվագ ու պար կազմակերպել: Կուտուզովը կարգավորեց
բանակին տալ լավ ճաշ և ինքն ել բանակ գալուց հե-
տո առաջին անգամ հագավ իր տոնական զգեստները:
Այս բոլորը նրա համար էր, վոր բարոյական մեծ
Տեղական գործադրեր ֆրանսիական բանակի վրա: Յեզ
ճնշում գործադրեր ֆրանսիական բանակի վրա: Յեզ
իրոք, այն ժամանակ, յերբ ֆրանսիական զորքը
հուսալքած էր, յերբ նրանց բանակը քաղցած էր,
ոռասական բանակը ապոռմ էր մեծ վորեվորություն և
պատրաստվում էր հաղթական արշավանքի՝ թշնամուն
վերջնական պարտության մատնելու համար:

Նապոլեոնի սկսած բանակցությունը հաշտության
մասին դրական արդյունք չտվեց: Ալեքսանդրը Նապո-
լեոնի պատգամավորությանը պատճախանեց, վոր ին-
քը կոիվը պետք է շարունակի մինչև իր հաղթական
վախճանը: Նապոլեոնն այլևս անկարող էր Մոսկվա-
վախճանը: Նապոլեոնն այդքան հեռվից դժվար էր նր-
յում մնալ, վորովհետև այդքան հեռվից դժվար էր նր-
ան ղեկավարել իր իմպերիան: Բացի այդ, նա գիտեր-

Վոր իր թիկունքը նույնպես ամուգ չե, վոր իր դաշնակիցներն այնքան ել վստահէլի չեն: Ուստի նա վորոշեց թողնել Սոսկվան և ձմեռել Սմոլենսկում ու Վինոգրամ, ապա գարնանը վերականգնված ուժերով նորից սկսել հարձակումը: 1812 թվ. հոկտեմբերի 19-ին ֆրանսիական բանակը սկսեց նահանջել: Նապոլեոնը գեպի Սմոլենսկ փորձեց նահանջել նոր ճանապարհով, այսինքն վոլ այն ճանապարհով, վորով նա յեկել եր՝ նապոլեոնի այս մանյովըն ուներ յերկու նպատակ: Մեկ կողմից այն, վոր հին ճանապարհն արդեն ավերված եր, ուստի կարող եր իր բանակը ծանր գրության մեջ ընկնել և, բացի այդ, ուզում եր նոր ճանապարհով անցնել, վորպեսզի կարողանա կողոպտել, տանել իր հետ անհրաժեշտ պաշար: Յերկրորդ՝ հին ճանապարհով գնալը բացարձակ կերպով ցուց կտար նրա նահանջը. առ ուզում եր նոր ճանապարհով գնալ, վորպեսզի ցուց ուար, վոր վոլ թե նահանջում ե, այլ ուզում ե նոր տեսիտորիաներ, նոր հողեր գրավել: Նապոլեոնը ցանկանաւմ եր նահանջել Կալուգայի նոր ճանապարհով, սաւայն կուտուզովը ճիշտ հասկացավ նրա մտադրությունը և իր զորքն այնպես շարժեց, վոր Նապոլեոնը գալով, վոր կուտուզովի դեմ այլևս ճակատամարտ ու վի կարող, հարկադրված յեղավ նահանջել Սմոլենսկու հին ճանապարհով:

Նապոլեոնի նահանջի ընթացքում ոռւսական բա-
նակը հաճախակի հարձակվում եր նրա զորքերի վրա և
վոչնչացնում ֆրանսիական առանձին զորամասերին։
Տարուտինի տակ ոռւսները ջարդեցին ֆրանսիական
զորավար մարշալ Մյուլերի հեծելագորին, մոռ հան-

դիսանում եր Նապոլեոնի բանակի սյումերից մեկը։
Նապոլեոնի առանձին զորամասերը ջախչախվոմ և
վոշնչանում ելին ռուսական զանազան պարտիզանա-
կան ջոկատների կողմից։ Նոյեմբերի 14-ին Նապոլեո-
նը թողեց նաև Սմոլենսկը։ Նապոլեոնն իր բանակի
հետ միասին փախավ Ռուսաստանից։ Կուտուզովն այդ
մասին ասում է՝ «Յես կարող ելի հպարտանալ նրա-
նով, վոր յես առաջին գեներալն ելի, վորի առաջ
փախչում եր գոռող Նապոլեոն»։ Բերեզնիի մոտ
տեղի ունեցավ վերջին և ֆրանսիացիների համար
խիստ կորստաբեր ճակատամարտը, զորտեղ Նապոլեո-
նի բանակը զիխովին ջարդվեց և դուրս վոնդվեց Ռու-
սաստանի սահմաններից։ Նապոլեոնը իր հետ բերած
բանակից Ռուսաստանի սահմանից դուրս տարավ 25-
30 հազար զիխնվոր։

1812 թ. զեկտեմբերի 18-ին Նապոլեոնը վերադառնավագ Փարիզ և պատրաստվում էր կազմակերպել մի նոր բանակ, նորից Ծովասատանի դեմ դուրս գալու համար: Սակայն Նապոլեոնին այդ շնչառողվեց: Ծովասահան բանակը Նապոլեոնին Ծովասատանի սահմաններից դուրս վնասելուց հետո 1812 թվ. զեկտեմբերի 31-ին անցավ ոռուական սահմանը և հասավ Վիլնո: Վիլնո յեկավ նաև Ալեքսանդր Առաջինը: Վիլնոյում ոռուական բանակը, Կուստուգովը և ամբողջ ոռուական բանակը կոփելու համարեց արգեն ավարտված, և իրոք, ոռուական մասունք իր յերկրից հեռացրել էր և դրանով իր մղած արգարացի կոփեն ավարտել էր: Սակայն Ալեքսանդր Առաջինը դեմ էր կոփի ավարտմանը, նա կարգադրեց ոռուական բանակին շարունակել իր

արշավը, այլ կերպ ասած, նա ոռւսական բանակին դուրս եր բերում արդեն անարդարացի կովի, ուրիշի տերիտորիաներ գրավելու և այլ ժողովուրդների ստրկացնելու համար:

Կուտուզովը և մի շարք այլ գեներալներ գեմ եյին Ալեքսանդրի այդ պահանջին: Զերնիշեվը իր հուշատետրում այդ մասին գրում ե. «Շատ գեներալներ համաձայն եյին Կուտուզովի հետ դուրս չգալ Ռուսաստանի պահանջներից, բայց Կայսրը հրամայեց անհապաղ շարժման մեջ դնել բանակը, և չնայելով զորքի ուժապար լինելուն և ձմռան, գնալ դեպի առաջ»: Այսպիսով կայսրը հրամայեց զորքին առաջ շարժվել: Իսկ Կուտուզովը հոգնել եր ու հյուծվել այդ պատերազմների ընթացքում: Նրա առողջությունը խիստ վատացավ և 1813 թվ. ապրիլի 28-ին մահացավ:

Ալեքսանդր Առաջինը, վոր սկզբից և յեթ գավեր եր սարքում Կուտուզովի գեմ, նրա մահվան վարկանին միայն փորձեց քավել իր մեղքը, հայտարարելով՝ «կներես ինձ գեներալ», իսկ Կուտուզովը նրան պատասխանեց՝ «Յես ներում եմ արքա, բայց Ռուսաստանը յերբեք ձեզ չի ների ալդ»:

6. ՆԱՊՈԼԵՈՆԻ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏճԱՌ-ՆԵՐԸ

Նապոլեոնի բանակի պարտության պատճառը բովժուական պատմաբանները, ուղղմագետները, ինչպես նաև Պոկրովսկին*) և նրա աշակերտները ճիշտ չեն տվել: Նրանք նապոլեոնի բանակի պարտության հիմնական պատճառը համարում են սննդամթերքների

*) Պոկրովսկու այս և մի քանի այլ սխալների մասին տես՝ 127 էջում:

պակասը, Ռուսաստանի սառնամանիքները, գաժան կլիման և այլն: Սակայն այդ կարգի մտածողները մոռանում են, վոր ճակատամարտը վորոշվում և մարդու կողմից բնական պայմանները գեր են խաղում, բայց վոշ հիմնական դեր: Հիմնական դերը պատկանում է կովողներին, մարտիկներին: Բազմաթիվ փաստեր կան ապացուցելու, վոր այդ նույն սառնամանիքների, «գաժան» կլիմայի աննպաստ պայմաններում ոռու ժողովուրքը տարել և իր թշնամիների գեմ խոշոր հաղթանակներ: Սառնամանիքները և ցուրտը արգելք չհանդիսացան, վորպեսզի Ալեքսանդր Նեվսկին և իր հերոսները շախչախեն շվեդ գիշատիչներին 1240 թ. Նեվսկիի վրա, գերմանական «Չուն ասպետներին» 1242 թվին Չուն լճի սառուցների վրա: Դմիտրի Դանսկովը 1380 թ. հաղթահարեց բնության բոլոր խոշնդուները, շախչախեց թաթարա-մոնղոլական Մամայ խանի հրախաչախեց թաթարա-մոնղոլական Մամայի խանի 1611—12 թ. թ. բրոսակներին՝ Կովկասիան դաշտում: 1611—12 թ. թ. Մինինի ու Պաժարսկու հերոսական շոկատները Մոսկվայի տակ շախչախեցին լեհական պաների գիշատիչ բանդաներին և Ռուսաստանը մաքրեցին թշնամիներից: Յել վերջապես 1918—22 թ. թ. հերոսական Կարմիր բանակը հաղթահարելով Սիբիրի սառնամանիքները, վոլչացրեց Կոլչակի և մյուս սպիտակ գեներալների, բանդաները, Անտանտայի ինտերվենցիոն բանակներին, և փայլուն հաղթանակներով դուրս յեկավ քաղաքացիական կումիներից ու ամրացրեց պրոլետարիատի դիկտատորան:

Այդ փաստերը վկայում են այն մասին, վոր պատերազմի բախտը վորոշվում և մարդը, և նապոլեոնի

պարտությունը 1812 թվին բացատրել ոռուսական սառ-նամանիքներով, նշանակում և անտեսել ոռուս ժողովրդի ուժը, նրա հերոսական կոփվը, վորով վոչնչաց-րեց նապոլեոնին: Նապոլեոնի բանակին պարտության մատնեց ոռուս ժողովուրդը:

Մի ժամանակակից ասում է. «Հարագործը Մոսկ-վայից դուրս քշվեց վոչ թե բանակի միջոցով, այլ մոսկովյան և կալուգյան մորուքավորների կողմից»: Այսինքն ոռուս գյուղացիների պարտիզանական ջոկատներն եյին, և ամբողջ ոռուս ժողովուրդը, վոր նապոլեոնի բանակը մատնեցին կործանման: Նապոլեոնի դեմ գյուղացիական այդ սկսված շարժումները տեղի եյին ունենում Ալեքսանդր Առաջինի և ազնվականության կամքին հակառակ: Ալեքսանդր Առաջինը ձգտում եր նապոլեոնի դեմ կռվել միայն իր կանոնավոր բանակվ, նա վախենում եր ոռուս գյուղացուն զինելուց, վա-խենում եր, վոր այդ գյուղացին նապոլեոնին հաղթելուց հետո զենքը կռւղի և իր դեմ:

Նապոլեոնը նույնպես, յերբ նոր սկսեց իր արշա-վանքը դեպի Ռուսաստան, ուզում եր իր նվաճողական նապատակների համար ոպտագրծել ոռուս գյուղացիությանը: Նա իր նվաճողական ծրագրերը քողարկում եր «գյուղացիներին ազատել ճորտությունից», «ազտու-թյուն տալ փոքր ժողովուրդներին» և այլ լոգունգնե-րով: Սակայն այս ամենը կեղծ եյին: Նապոլեոնը գա-լիս եր Ռուսաստան վոչ թե ոռուս գյուղացիներին ճոր-տությունից ազատելու, այլ ոռուս ճորտերին զրկելու նաև իրենց ազգացին ինքնուրուցնությունից՝ ճորտալին լծի հետ միասին սահմանել նաև ազգային ճնշման

ծանր լուծը: Իրականում նապոլեոնը նույնպես վախե-նում եր, սարսափում ոռուս գյուղացու ուժից:

1812 թ. դեկտեմբերի 20-ին ֆրանսիական սենա-մում նապոլեոնը ասաց.

«Ցես Ռուսաստանի դեմ մղում եմ միայն քաղա-քական պատերազմ, յես կարող եյի նրա դեմ զի-նել իր բնակչության մեծագույն մասը՝ ճորտերին ազատագրում հողակելով. բազմաթիվ գյուղացի-ներ այդ առթիվ ինձ խնդրում եյին, սակայն յե-տեսնելով ոռուս ժողովուրդի բազմաքանակ դասա-կարգերի կոպտացումը, յես հրաժարվեցի այդ մի-ջոցներից, վորովհետև բազմաթիվ ընտանիքներ կմատնելի մահվան ու ամենազարհուրելի տան-չանքներից»: (Տարե, «Նապոլեօն», ստր. 233).

Այսպիսով, նապոլեոնի այս խոսքերը վկայում են, վոր նա վախենում եր ոռուս գյուղացու անհնազանդ ու-ժից: Նապոլեոնի գրավումների ժամանակ ֆրանսիա-կան գեներալներն ամենավայրագ կերպով պատժում եյին այն գյուղացիներին, վորոնք կպշում եյին կալվա-ծատիրոց իրավունքին: Նապոլեոնն ամեն կերպ աշխա-տում եր պաշտպանել կալվածատերերի նախկին իրա-վունքները: Սմոլենսկու նահանգի կալվածատերերին ուղղված պրակամացիայում գրում են. «Զանհանգրս-տանալ, ներկայացեք և վստահություն ունեցեք դեպի մեր կառավարությունը: Դուք այս նահանգում հան-գիստ կինեք, վորում վստահացնում ե ձեզ ֆրանսիա-կան իմպերատորը և կվերականգնի նախկին կարգը»:

Նույնիսկ տեղի յեն ունեցել այսպիսի դեպքեր. Վիտերսկ քաղաքը գրավելու ժամանակ գյուղացիներն ի-

թենց կալվածատերերից մի քանիսին շղթայած բերեցին ֆրանսիական սպա Շորապանտեյի մոտ, վորը սակայն խիստ պատճեց այդ գյուղացիներին, իսկ կալվածատերերին ազատ արձակեց: Նույնիսկ նա զինված պահակ կարգեց կալվածատերերի գուցքի պահպանման համար: Այս բոլորը վկայում են նապոլեոնի վարած դասակարգային քաղաքականության մասին: Այսպիսով, նապոլեոնը բերում եր ծանր շահագործում առա ժողովրդի և առաջին հերթին ոռու գյուղացիության համար:

Նապոլեոնի այս նվաճողական գաղութային քաղաքականության դեմ եր, վոր վոտքի կանգնեց ոռու ժողովրդը, վորի կոփիլը կրում եր ազգային անկախության բնույթ:

Յեվ նապոլեոնի բանակին պարտության յենթարկող հիմնական ուժը, դա ոռու ժողովրդի ուժն եր:

Նապոլեոնի բանակի պարտության յերկրորդ պատճառը հանդիսանում եր նրա պատերազմի անարդարացի բնույթը: 1793—94 թվականներին ֆրանսիական բանակը հաղթում եր իր թշնամիներին, վորովհետեվ, այդ ժամանակ նրա բանակը կովում եր իր յերկրի պաշտպանության համար: Նրա կոփիլը, այն ժամանակ, արդարացի կոփիլ եր: Լենինն այդ մասին ասում եւ.

Այն ժամանակ (1793—1794 թ. թ.—Զ. Գ.) «ամբողջ ժողովուրդը, և Հատկապես մտսաները, այսինքն՝ կենցված դասակարգերը, Հնդկափոխական անսահման խանդավառությամբ ելին համակված: Ամենքն

ել պատերազմը համարում եյին արդարացի, պաշտպանողական և նա իրոք վոր այդպիսին եր» (Լենին, Հատոր 21, եջ՝ 190):

Այլ եր նապոլեոնի մղած պատերազմը 1812 թ.: Այդ պատերազմն արդեն անարդարացի պատերազմ եր: Այդ պատերազմը մղվում եր վոլ թե ֆրանսիական սահմանները պաշտպանելու համար, այլ ուրիշի տերիտորիաները հափշտակելու և ուրիշ ժողովուրդներին ստրկացնելու համար: Նապոլեոնի նվաճողական հափշտակողական պատերազմի բնույթը խոստովանեց նաև ինքը՝ նապոլեոնը: Նա իր ձառերից մեկում ասում է.

«Աշխատում են իմանալ, թե ուր ենք գնում մենք: Մենք կվերջացնենք Յեվոպայի հետ, իսկ այնտեղ, ինչպես ուժեղագույն տիվագակը հարձակվում է ավելի յերկուուի վրա՝ կտիրապետներ Հնդկաստանը... Յերեք տարի յեկս ու յես կլինեմ տիեզերքի վեհապետը»:

Նապոլեոնի այս խոսքերը լավագույն վկայությունն են նրա աշխարհակալական ձգտումների: Նապոլեոնը ծրագրում եր, նախ զրավել Ռուսաստանը, ապա շարժվել Արեվելք—Հնդկաստան: Այդ մասին նա վիտեսկ քաղաքը զրավելուց հետո ասում է.—

«Յես գնում եմ Մուսկվա և մի կամ յերկու ճակատամարտով ամեն ինչ կավարտեմ: Ալեքսանդր կայսրը ծնկաշոք հաշտություն կինդրի: Յես կայսրեմ Տուլան և զինաթափ կանեմ Ռուսաստանը: Ինձ նպաստմ ե այնտեղ Մոսկվան՝ կայսրության սիրտը»: («Կօմ. ուրածական» № 203),

Ահա այս խոսքերի մեջ մենք տեսնում ենք նապուլեոնի նվազողական ձգումները: Նապոլեոնը թուսաստանի գեմ մղում եր անարդարացի կոիվ: Այդ անարդարացի կոիվը նա մղում եր մի բանակի միջոցով, վորն արտաքուստ բազմամարդ եր, իսկ ներքուստ վերին աստիճանի թուլ: Նապոլեոնի բանակը շահագրգուված չեր այդ անարդարացի պատերազմի հաղթանակով: Յեվ այն ժամանակ, յերբ ոռուսական ժողովուրդը վուրի կանգնեց արդարացի կոիվ մղելու իր յերկրի պաշտպանության համար, Նապոլեոնի այդ փոքն բանակը կործանման մատնվեց:

Ահա այն յերկու հիմնական պատճառները, վորոնք պարտության մատնեցին Նապոլեոնին և նրա բանակին: Ի հարկե այստեղ դեր խաղաց նույնպես Կուտուզովի ուղմական ճիշտ տակտիկան, վորի հետևանքով Նապոլեոնը կտրվեց իր բազաներից և տնտեսական ծանր վիճակի յենթարկվեց: Ոռուսաստանի բնական պայմանները նաև, այս կամ այն շափով, անշուշտ ազդեցին, բայց, ի հարկե, Նապոլեոնի բանակի պարտության գործում վորոշիչը մեր հիշատակած առաջին յերկու պատճառներն են: Նապոլեոնին ոռուսական սահմաններից դուրս վանդելուց հետո ուժեղ շարժում սկսվեց նաև Յեվրոպայում: Յեվրոպական մյուս պետությունները նույնպես ձգում եյին ազատվել Նապոլեոնի տիրապետությունից: 1813 թ. սկզբին Նապոլեոնի դեմ կազմակերպվեց մի նոր կոալիցիա, վորի մեջ մտնում եյին՝ Անգլիան, Պրուսիան, Ավստրիան և Ռուսաստանը: Կոալիցիայի խնդրն եր՝ Յեվրոպան ազատել Նապոլեոնի տիրապետությունից, տա-

պալել ֆրանսիայում Նապոլեոնի կայսրությունը և վերականգնել թուրքունների դինաստիան (մինչև ֆրանսիական հեղափոխությունը թագավորական տունը): Այսուհետև, Ֆրանսիայի սահմանները հասցնել 1792 թ. սահմաններին, և վերջապես Յեվրոպան և նրա թուլ, փոքր ժողովուրդներին բաժանել հաղթած խոշոր պետությունների միջև:

Կոալիցիան ստեղծեց մի խոշոր բանակ և ձեռնարկեց իր այդ ծրագրի իրագործմանը: Իսկ Նապոլեոնը վերադառնալով Փարիզ ծրագրեց ժողովել 450.000 զորք և 1813 թվի գարնանը Վիսլայի վրա ճակատամարտ տալ ոռուսներին:

1813 թվականի ապրիլի 13-ին Նապոլեոնը ռազմական գործողություններ վերսկսեց ոռուսների և պրուսացիների դեմ: Նա այդ ժամանակ ուներ մոտ 200.000 հոգուց կազմված բանակ և նույնքան ել պահեստային ուժ:

Նապոլեոնի դեմ դաշնակիցների բանակը գլխավորում եր ավատրիական ֆելդ-մարշալ Շվարցինբերգը, վորին, վորպես ռազմական դեմքի, Նապոլեոնը արհամարում եր:

Նապոլեոնն իր ռազմական գործողությունների առաջին շրջանում դաշնակիցների բանակի դեմ մի քանի հաղթանակներ տարավ: Հատկապես մեծ եր Նապոլեոնի տարած հաղթանակը 1813 թվի ոգոստոսի 27-ին, Դրեզդենի տակ, վորտեղ դաշնակիցների բանակը նահանջելով տվեց 25.000 սպանված, իսկ Նապոլեոնը տվեց 10.000 սպանված: Սակայն սեպտեմբեր ամսից դրությունը փոփում է, դաշնակիցների բանակը ա-

ձում եր, իսկ նապոլեոնի բանակը նվազում։ Յրանսիայում աճում եր ընդհանուր դժուժությունը նապոլեոնի գեմ և հոկտեմբերի սկզբից նապոլեոնի բանակը կրեց մի քանի պարտություններ իրար հետեխ։ Հոկտեմբերի 16—19-ին արյունալի ճակատամարտեր՝ տեղի ունեցան Լայպցիխի տակ, վորտեղ նապոլեոնը պարտվելով նահանջեց ֆրանսիական տերիտորիան։ Լայպցիխի ճակատամարտում նապոլեոնը տվեց 65.000, իսկ դաշնակիցները՝ 60.000 սպանված։

Այսուհետեւ, դաշնակիցների բանակը մի քանի հաղթանակներից հետո, 1814 թվի մարտին, մտավ Փարիզ։ Նապոլեոնն իր ունեցած փոքր ուժերով դիմագրել անկարող եր, ուստի դաշնակիցների և ներքին ուժերի ճնշմամբ 1814 թվի ապրիլի 6-ին նա հրաժարվեց գահից։ 1814 թվի ապրիլի 20-ին նապոլեոնն աքսորվեց Ելբա կղզին։ Ֆրանսիայում վերականգնվեց նախկին բուրբոնների ռեակցիոն դինաստիան, հանձինակուղովիկ 18-րդի։

1814 թվի նոյեմբերին Վիեննայում գումարվեց հաղթած պետությունների կոնգրես, վորոր կատարեց պատերազմական «ափարի» բաժանումը։

1815 թվի մարտի 1-ին, նապոլեոնը փախավ Ելբայից։ Նա նորից իր շուրջն համախմբեց բանակը և մարտի 20-ին վերադարձավ Փարիզ ու վերականգնվեց իր իմպերիան, վորոր, սակայն, գոյություն ունեցավ միայն 100 օր։ 1815 թվի հունիսին նապոլեոնի բանակը վատերլոյի տակ գլխովին շախչախսվեց։ Դաշնակիցները նապոլեոնին աքսորեցին սուրբ Հեղինեյի կղզին և

Ֆրանսիայում նորից վերականգնեցին Լյուվիկ XVIII-ի թագավորությունը։

Նապոլեոնին վերջնական պարտության մատնելուց հետո, 1815 թվի սեպտեմբերի 14-ին, ոռուական թագավոր Ալեքսանդր Առաջինի, Ավստրիական թագավոր Ֆրանց I-ի և պրուսական թագավոր Ֆրիդրիխ III-ի կողմից ստորագրվեց «Մրբազան դաշինքի» ակտը։ Դա Յեփրոպական հաղթող ռեակցիոն միապետների մի դաշնագրություն եր, վորով նրանք նպատակ եցին դրել միասնական ուժերով կովել Յեփրոպայում հեղափոխությունների գեմ և ամրապնդել բարքայված ֆեոդալական կարգերը։ «Մրբազան դաշինքի» հիմնական ինդիքտն եր նաև ճնշել ազգային ազատագրական շարժումները և փոքր ժողովուրդներին բաժանել հաղթող պետությունների միջև։

«Մրբազան դաշինքը» 1818-1822 թվերին ունեցավ մի քանի կոնգրեսներ՝ Ախենում, Տրոպայում, Լայրախում և Վերոնում, վորտեղ քննվեց մի շարք հարցեր և նախատեսվեցին մի շարք ձեռնարկումներ՝ ճնշելու իտալական և իսպանական ապստամբությունները։ Ալեքսանդր I-ը հանդիսանում եր «Մրբազան դաշինքի» ամենաազգեցիկ ներկայացուցիչը և վոգեշնչողը։

Ալեքսանդր Առաջինը վոգեշնչված «Մրբազան դաշինքով», շտեսնված դաժան ռեակցիա կիրառեց նաև ներքին քաղաքականության մեջ։

Նապոլեոնի շախչախման գործում ոռուական բանակի տարած հաղթանակները յեփրոպական իրականության մեջ մեծ շափով բարձրացրեց ոռուական ցարիզմի՝ վորագես «Յեփրոպայի ժանդարմի» ազգեցությունը և այդ հաղթանակների շնորհիվ ձեռք բերված

ավարի բաշխման գործում խոշոր բաժինը հասավ Ա-
լեքսանդր Առաջինին:

1814թ. նոյեմբերին Վիեննայի կոնգրեսի գորշ-
մամբ Լեհաստանի մի խոշոր մասը տրվեց Ռուսա-
ստանին:

1815թ. Ալեքսանդր Առաջինը իրեն հռչակում է միա-
ժամանակ «Լեհական մեծ իշխան», իսկ Լեհաստանի
անմիջական ղեկավարման համար իր փոքր յեղբորը՝
Կոնստանտինին՝ նշանակում է փոխարքա: Լեհաստա-
նում ոռուական ինքնակալության ազդեցությունը ամ-
բապնդելու համար նա կատարեց վորոշ զիջումներ:
Նա տվեց Լեհաստանին հատուկ սահմանադրություն,
վորի համաձայն թույլ տրվեց լեհերին ունենալ իրենց
սեյմը, ինքնուրույն բանակը և մի շարք այլ զիջումներ:

ԳԵԿԱԲՐԻՍՏՆԵՐ

Դեկաբրիստական շարժումը կարելի յէ համարել
Ռուսաստանում բոլորդուական հեղափոխության փորձ:

Ընկեր Լենինը խոսելով Ռուսաստանում ազատա-
գրական շարժումների մասին, ցուց է տվել, վոր Ռու-
սաստանն անցել է ազատագրական շարժումների Յ
գիտավոր ետապ:

Առաջին ետապը Լենինը համարում է ազնվակա-
նության ետապը՝ 1825թ. մինչև 1861թ. թվականը:

Յերկրորդ ետապը բոլորդուա-դեմոկրատական ետա-
պըն է: Այդ ետապը համարվում է 1861-թվականը՝
1895թիվը: Յերրորդ ետապը՝ պրոլետարական ետապն
է, վորը սկսվում է 1895թ. մինչև մեր որերը:

Դեկաբրիստները հանդիսացել են առաջին ետա-

պի, այսինքն ազնվական շրջանի առաջավոր գործիչ-
ները: Լենինն այս մասին ասում է՝

«Ազատագրական շարժումը Ռուսաստանում
անցել է Յ Հիմնական ետապ՝ համապատասխան
ուսուական հասարակության Յ գիտավոր դաս-
կարգերի գնելով իր կնիքը շարժման վրա: Առաջին
շրջան՝ ազնվականության՝ մոտավորապես 1825
թվականը մինչև 1861թ. թիվը. յերկրորդ շրջան՝ Ռազնո-
շինիյ կամ բոլորդուա-դեմոկրատական՝ 1861թ.
վից 1895թ.: Յերրորդ շրջան՝ պրոլետարական,
1895թվականության շրջանի հանդիսա-
գործիչներն ազնվականության շրջանի հանդիսա-
ցել են ղեկարիստները և Գերցենը»: (Լենին,
Հատոր 17-րդ, եջ՝ 341):

Ինչպիսի նախապայմաններ ստեղծվեցին 19-րդ
դարի առաջին քառորդում Ռուսաստանում, վորոնք նր-
ագաստեցին դեկաբրիստական շարժման առաջացմանը:

Դեկաբրիստական շարժման առաջացման առաջին
նախապայմանը դա Ռուսաստանում 19-րդ դարի սկզբին
աստիճանաբար զարգացող կապիտալիստական հարա-
բերություններն եյին:

19-րդ դարի սկզբին, հատկապես «ցամաքային
պաշտաման» շրջանում, Ռուսաստանում ձորսատիրա-
կան և պետական մանուֆակտուրների կողքին սկսեցին
զարգանալ նաև կապիտալիստական տիպի մանուֆակ-
տուր-ֆաբրիկաները:

Ճորտ և պուստիոն բանվորների հետ միասին,
19-րդ դարի սկզբում, Ռուսաստանում արդեն զգալի
թիվ ելին կազմում վարձու բանվորները:

Այսպես որինակ՝ 1805 թվին Ռուսաստանում կար ընդամենը 2423 մանուֆակտուր-ֆաբրիկա, գորտեղ աշխատում ելին 95.202 բանվորներ: Դրանցից 45.625-ը վարձու բանվորներ ելին:

1814 թվին Ռուսաստանում մանուֆակտուր-ֆաբրիկաների թիվը հասնում էր 3731-ի, գորտեղ աշխատում ելին 165.530 բանվորներ, գորոնցից 99.762-ը վարձու բանվորներ ելին:

1825 թվին Ռուսաստանում մանուֆակտուր-ֆաբրիկաների թիվը հասնում էր 5261-ի, գորտեղ աշխատում ելին 210.568 բանվորներ, գորոնցից 114.508-ը վարձու բանվորներ ելին:

Այս թվերը վկայում են 19-րդ դարի սկզբում ռուսական արդյունաբերության աճման մասին և այն մասին, վոր այդ արդյունաբերության մեջ ավելի արագ կը պովի աճում և կապիտալիստական բաժինը:

Կապիտալիստական արդյունաբերության հանդես գալը վկայում է նաև արդյունաբերության մեջ մուտք գործող մեքենայի աշխատանքի մասին: Ճորտափրական մանուֆակտուրաներում աշխատանքը չիմնականում կատարվում էր ձեռքով, իսկ կապիտալիստական մանուֆակտուրայի հատկանշական կողմերից մեկը՝ մեքենայի աշխատանքն է:

19-րդ դարի առաջին քառորդում ռուսական արդյունաբերության մեջ շատ նվազ շափով մուտք է գործում արդեն մեքենայի աշխատանքը: Այսպես որինակ, 1815 թվին վոլ մի կոպեկի մեքենա չի արտադրվել Ռուսաստանում, իսկ 1820 թվին Ռուսաստանում արտադրվել է 7214 սուբլի արժողությամբ մեքենա:

1825 թվին Ռուսաստանում արտադրվել է 48.389 սուբլի, արժողությամբ մեքենա:

Այս թվերը, վորպես բացարձակ թվեր, շատ անըշշան մեծություն են, դրանք կաթիլ են միայն ամբողջ ծովում:

Սակայն այդ թվերը ցուց են տալիս, վոր արդեն ուսական արդյունաբերության մեջ հանդես են գալիս մեքենայի աշխատանքը, վորը վկայում է արդյունաբերության կապիտալիստական յեղանակի հանդես գալու մասին:

19-րդ դարի առաջին քառորդում ապրանքադրամական հարաբերությունները ուժեղ կերպով զարգանում են նաև կալվածատիրական տնտեսության մեջ: Ռուսական կալվածատերերն իրենց կալվածքներն ու իրենց ամբողջ արտադրանքը հարմարեցնում ելին շուկայի պահանջին: Ռուս կալվածատերերը հատկապես մեծ յիկամուսներ ելին ստանում հացի և այլ գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից: 19-րդ դարի սկզբին կալվածատերերը ներքին շուկայի աշխատացման հետ միասին մեծ քանակությամբ հաց և այլ գյուղատնտեսական մթերքներ են տալիս ներքին շուկային:

Կալվածատերերը ձգտում ելին վորքան կարելի յենեծ քանակությամբ հաց արտահանել նաև յեկորպական շուկաները, վորից խոշոր յեկամուտներ ելին ստանում:

Յեթե 1805 թվին արտահանվում էր Ռուսաստանից միայն 1.721.000 փութ ցորեն, ապա 1812 թվից «ցամա-

քայլին պաշարման» վերացումից հետո արտահանվում եր մոտավորապես 14 միլիոն փութ ցորեն:

Կալվածատերերը ձգտում ելին կրկնապատկել հացի արտադրանքը, վորպեսզի ավելի մեծ քանակությամբ հաց արտահանվի, սակայն դրան խանճարում ելին ճորտական կարգերը, արտադրության ֆեռդական յեղանակը:

Կալվածատերերը տեսնում ելին, վոր ճորտական աշխատանքը վոչ շահավետ աշխատանք ե, և ճորտական աշխատանքով իրենց արտադրությունը բարձրացնել շեն կարող, ուստի վորոշ առաջավոր ազնվականներ գալիս են այն համոզմանը, վոր պետք ե ճորտային աշխատանքը փոխարինել վարձու աշխատնքով:

Սակայն այդ ազնվականների ամեն մի ձեռնարկումը և ձգտումը հանդիպում եր ճորտատիրական կարգերի դիմադրությանը: Այստեղից ել այդ առաջավոր ազնվականների մեջ առաջանում ե ձգտում՝ փոխել հին ճորտատիրական կարգերը և հարմարեցնել այն նոր պայմաններին: Դեկաբրիստական շարժման ծավալմանը նպաստեց նաև 1820 թվերին սկսված ազրաբային ճգնաժամը: Այդ ճգնաժամը կրում եր համելքոպական բնույթ, սակայն նա մեծ սրությամբ դրսեվորվեց հատկապես Ռուսաստանում:

Ազրաբային ճգնաժամն արդյունք եր նրան, վոր «ցամաքային պաշարման» ժամանակ, յերբ արգելվեց Անգլիա հաց արտահանել, անգլիական լինությունը իրենց յերկրի հացի պահանջը ծածկելու համար, սկսեցին բավական մեծ թափով դար-

գացնել հացի մշակույթը: Յեվ հացի այն պահանջը, վոր նրանք ունեյին, ծածկում ելին իրենց միջոցներից, վորոշ շափով ներմուծում ելին նաև իրենց գաղութներից: Սակայն յերբ վերացավ «ցամաքային պաշարություն», սկսեց Անգլիա թափել մեծ քանակությամբ հաց: Նույնիսկ 1815 թվին Անգլիայի կառավարության կողմից պաշտոնապես արգելվեց Անգլիա հաց ներմուծելը: Այս բոլորի հետևանքով ընկավ հացի գինը: Այսպես որինակ՝ յեթի 1811 թվին հաճարի կվարտերը արժեր 30,4 շիլինգ, 1821 թ. ընկնում ե 23,5 շիլինգի: Յորենի կվարտերը 1811 թվին արժեր 87,5 շիլինգ, 1821 թվին իջնում ե 59,3 շիլինգի. գարու կվարտերը, վոր 1811 թ. արժեր 45,3 շիլինգ, 1821 թվին դառնում ե 32,5 շիլինգ: Հացի գների այս անկումը խոշոր հարված հասցրեց ոռուական կալվածատիրական տնտեսությանը:

Ռուս կալվածատերերը տարեկան կորցրին մոտավորպես 80 միլիոն ռուբլի: Ազրաբային այդ ճգնաժամը քայքայեց բազմաթիվ կալվածատերերի, նրանք ընկան խոշոր պարտքերի տակ: Ավելի շուտ քայքայեցին միջակ և մանր ազնվականները:

Ազրաբային այդ ճգնաժամի հետևանքով ազնվականները զարկ տվին նաև ճորտային աշխատանքին, ցանկանալով ճորտերի ուժեղ շահագործման ճանապարհով ծածկել հասցրած վնասները, իսկ այս հանգամանքն իր հերթին ավելի ծանրացրեց ցուողացիության վիճակը և յերկրում ավելի սրեց դասակարգային պայքարը:

Ճգնաժամի հետևանքով քայքայված ազնվական-

ներից եր, վոր դուրս յեկան մեծ քանակությամբ դեկաբրիստներ:

Այսպիսով 19-րդ դարի առաջին քառորդում դեկաբրիստների հանդես գալու տնտեսական նախապայմաններն ստեղծվել ելին հանձին ոռուական տնտեսական կյանքում զարգացող կապիտալիստական արդյունաբերության: Ազնվականության միջավայրից դուրս յեկած դեկաբրիստ հեղափոխականները պայքարում ելին ճորտատիրական կարգերի դեմ և դրանով իսկ որյեկտիվ պայմաններ ստեղծում նոուսաստանում արդյունաբերության զարգացման համար:

Դեկաբրիստական շարժման ծավալմանը մեծ շափով նպաստեցին նաև 19-րդ դարի առաջին քառորդում սկսված ժողովրդական լայն շարժումները:

19-րդ դարի առաջին քառորդի մասսայական շարժումները կարելի յէ բաժանել 2 ետապի. առաջին ետապը 1812—1813 թվերին: Այդ շրջանում տեղի ունեցող ժողովրդական շարժումները գերազանցապես կապվում ելին նապոլեոնյան արշավանքների հետ, յերբ ոռու ժողովուրդը վոտքի յեր կանգնել ֆրանսիական նվաճողներին նոուսաստանից դուրս քշելու համար:

Յերկրորդ ետապը 1820—21 թվերին ե, յերբ սկսվում են ժողովրդական շարժումները՝ կապված յերկրում սկսված ազգարային ճգնաժամի հետ: Այդ շրջանում ճորտ գյուղացիների, ճորտ ու վարձու բանվորների և գինվորների կողմից տեղի ունեցան խոշոր յելույթներ:

1812—13 թվերին գյուղացիական խոշոր շարժում-

ներ ծավալվեցին վոլոգողսկի նահանգում: Ապստամբությունն սկսվեց Յակովեկի կալվածքից, սակայն նաշուառվ ծավալվեց ամբողջ նահանգում:

Այդ ապստամբությունը ճնշվեց վոստիկանության և գինվորների միջամտությամբ: Ապստամբության ժամանակ սպանվեց մոտավորապես 245 մարդ:

Գյուղացիական խոշոր ապստամբություններ տեղի ունեցան նաև Սմոլենսկու նահանգում: Ապստամբությունն սկսվեց Բերդիանկովի կալվածքից, վորը նույնպես տարածվեց ամբողջ նահանգում, սակայն այդ ապստամբությունը նույնպես ճնշվեց զենքի ոգնությամբ: Գյուղացիական խոշոր հուզումներ տեղի ունեցան նաև Մոսկվայի նահանգում, վորտեղ գյուղացիները թալանեցին մի քանի կալվածատերերի կալվածքներ: Գյուղացիական այդ ապստամբությունների ժամանակ գյուղացիները կողոպտում ելին կալվածատերերին, այրում նրանց կալվածքները և հաճախ ֆիղիկապես վոշնչացնում ելին նրանց:

XIX դարի առաջին քառորդում տեղի յեն ունեցել նաև մի շարք բանվորական հուզումներ: 19-րդ դարի առաջին քառորդում բանվորական հուզումների 30 դեպք ե պաշտոնապես արձանագրվել: Բանվորական այդ հուզումները գերազանցապես ընկնում ելին 1812—1828 թվերի ժամանակամիջոցում:

1815 թ. բանվորական խոշոր ապստամբություն տեղի ունեցավ Կազանի Ասոկինի գործարանում: Բանվորների յելույթներն այտեղ ճնշվեց և աշխատանքը վերսկսվեց միայն վոստիկանության միջամտությունից հետո: 1816 թվին Պետերբուրգի մարզում, Կիմանովի

ապակու գործարանում, խոշոր ապստամբություն սկսվեց: Ապստամբները վաղորոք համաձայնության յեկան, և յերդվեցին, վոր իրար չեն դավաճանի: Ի հարկե, այստեղ ել ապստամբությունը ճնշվեց վոստիկանության ոգնությամբ: 1822—23 թ. թ. մի քանի քանի վորական ապստամբություններ տեղի ունեցան նաև Պետերբուրգի նահանգում, վորոնց մասնակցել են մոտ քսան հազար բանվորներ: Այդ ապստամբությունները ճնշելու համար ցարական կառավարությունը նույնակա հարկադրված յեղավ կենտրոնից զորք ուղարկել:

Այդ շրջանում բանվորական հուզումներ տեղի ունեցան Բերեզովյան վոսկու հանքերում, ապա Վլադիմիրյան նահանգի Բուժաշնյան գործարանում և այլն:

Գյուղացիական և բանվորական այդ հուզումներն արդյունք ելին վոշ միայն ծանր շահագործման, այլև պետական ծանր ռեժիմի:

Ալեքսանդր Առաջինը նապոլեոնյան պատերազմի ժամանակ իր կրած տնտեսական վնասը, վորը հասնում եր մոտավորապես 200 միլիոն ռուբլու, գցեց աշխատավոր ժողովրդի վրա:

Նա նշանակեց նոր հարկեր: Հարկերի ծանր լուծը ճնշում եր վոշ միայն գյուղացիներին, այլ և նրա այդ ծանրությունը զգում եր նաև մասն ազնվականությունը: Ալեքսանդր Առաջինը, հատկապես «սրբազան դաշինքի» կնքումից հետո, շտեսնված ռեակցիա սկսեց իր յերկրի ներքին քաղաքականության մեջ:

Զափազանց ծանր ռեժիմ սահմանվեց բանակում: Բանակի գլուխը կանգնեց դաժան գեներալ Արակեսը (1769—1834 թ. թ.): Արակեսը Տվերի մարզի կալվա-

ծատիրոջ վորդի յեր. նա վերին աստիճանի ճարպիկ և աֆերիստ անձնավորություն եր: Դեռ Պավելի որոք նա մտերմանում է Պավելի հետ, ապա նրա մահվանից հետո Արակեսը իր ճարպկությամբ մտերմացավ նաև Ալեքսանդրի հետ: 1808 թվին Արակեսը նշանակվեց ուղամական մինիստր: Արակեսը և Ալեքսանդր Առաջինը վոխերիմ թշնամիներ ելին Սովորության-Կուտուզովյան ուղմական դպրոցին: Նրանք պաշտպանում ելին Պավելի ռեակցիոն հայացքները բանակի կազմակերպման գործում:

Արակեսը և Ալեքսանդր Առաջինը Ռուսաստանում ստեղծեցին զինվորական մի շարք ավաններ (գյուղեր): Դնեպրի ներքին հոսանքի և Վոլխով գետի շրջանի գյուղացիները հեռացվեցին ու նրանց հողերը հատկացվեցին զինվորական ավաններին: Նրանք զինվորական ծառայության ժամկետը հասցրին մոտ 45 տարվա, այլ կերպ սատծ ցմահ, և վորպեսի բանակ զնացած տղամարդիկ արտադրությունից շկտրվելին, նըրանց հարկադրում ելին այդ ավաններում, զինվորական տանջալից ծառայության հետ միասին, զբաղվել նաև յերկրագործությամբ:

Արակեսը բանակում սահմանեց շտեսնված ծանր ռեժիմ: Ռուս զինվորը կորցրեց իր ինքնուրույնությունը նույնիսկ իր անձնական կյանքում և կենցաղում: Բավական ե հիշել, վոր զինվորը կարող եր ամուսնանալ միայն այն ժամանակ, յերբ իր հրամանատարը թույլ եր տալիս, կամ տվալ աղջկանը հավանում եր:

Արակշենի ռեժիմը ուստական բանակը ոռու զին-
վորների համար բանտ դարձրեց: Այդ ռեժիմը այնքան
ծանր էր, վոր ուստական բանակից խուսափում էյին
վոլ միայն շարքային զինվորները, այլև ստորին աս-
տիճանի հրամանատարները:

Արակշենի այդ ծանր ռեժիմի դեմ եր, վոր ուստա-
կան բանակում տեղի եյին ոնքնում մի շարք յելութ-
ներ, ապստամբություններ:

1813 թվին ապստամբություն տեղի ունեցավ Պեն-
գայի նահանգում, այդ ապստամբությանը մասնակ-
ցում եյին մոտ 17.000 զինվորներ: Խոշոր ապստամբու-
թյուններ տեղի ունեցան Ինսարում: Ինսարում կանգ-
նած գնդերը ապստամբվեցին ու կողոպտեցին իրենց
ոֆիցերների բնակարանները և նույնիսկ ամբողջ քա-
ղաքը վերցրին իրենց ձեռքը:

Ապստամբները բանտարկեցին այդ գնդի ոֆիցեր-
ներին և բանտի դռանը պատրաստեցին յերեք կախա-
ղան՝ նրանց կախելու համար: Ապստամբությունը տե-
ղից 4 որ: Ապստամբ զինվորները պահանջում եյին,
իրենց ազատել բանակից, նրանք հայտարարում եյին,
վոր իրենք հաղթել են Նապոլեոնին և այդ հաղթանակի
համար արժանի յեն ազատման: Ապստամբության
շորրորդ որը ցարական կառավարությունը ուղարկեց
իր հավատարիմ զորքը, և գենքի ուժով ճնշվեց Ինսա-
րի ապստամբությունը:

Ապստամբության ղեկավարները բանտարկվեցին
և աքսորվեցին, իսկ ապստամբությանը մասնակցած
գնդերը վերակառուցվեցին, զինվորներին ցըրեցին ուրիշ

զորամասեր, նրանց հատկապես ուղարկեցին գործող
ճակատները:

Խոշոր ապստամբություններ տեղի ունեցան 1819
թվին Զուլուկյան զինվորական ավանում: Այդ ապստամ-
բությունն այնքան լուրջ էր, վոր նույնիսկ ինքը՝ Ա-
րակշենը անձամբ յեկավ և իր ձեռքով ճնշեց ա-
պստամբությունը: Խոշոր ապստամբություն տեղի ու-
նեցավ 1820 թվի հոկտեմբերի 16-ին, Պետերբուրգի
Սիմյոնովյան գնդում: Այդ գնդի գնդապետն էր դաժան
գեներալ Շվարցը, վորն իր զազանային վերաբերմուն-
քով ընդհանուր զայրուլթ էր առաջ բերել Սիմյոնովյան
գնդում: Շվարցի այդ դաժանություններն առիթ հանդի-
սացան Սիմյոնովյան գնդի ապստամբության համար:
Ապստամբված զինվորները պահանջում եյին Շվարցին
հեռացնել և թեթևացնել բանակի ներքին ռեժիմը: Սա-
կայն սիմյոնովյան գնդապետն վճռական չեղան իրենց պա-
հանջներում, նրանք վճռական միջոցառումներից խու-
սափեցին: Բացի այդ, սիմյոնովյան գնդի մնացին
Պետերբուրգում, մյուս զորամասերը նրանց շմիացան և
այդ պայմաններում ցարական ինքնակալությանը հա-
ջողվեց ճնշել Սիմյոնովյան գնդի ապստամբությունը:

Ապստամբության ղեկավարներին բանտ նետեցին:
Ապստամբության ակտիվ մասնակիցներից 600 զին-
վորի շամփրահարման յենթարկեցին, վորոնցից 8-ը
մահացան:

1822 թվի հոկտեմբեր ամսին, Պետերբուրգի մի շարք
զորանոցներում, նկատվում էր բացահայտ ապստամ-
բական տրամադրություն. նույնիսկ զորանոցներում
գտնվեցին բացարձակ հակապետական բնույթի

թռուցիկներ: Որինակ, 1820 թ. Հոկտեմբերի վերջին
Պրիորաժենսկյան գնդի կազմամայի դռանը գտնվե-
ցին թռուցիկներ, վորոնցով կոչ եր արվում զինվորնե-
րին շենթարկվել իրենց պետերին և ապստամբություն
բարձրացնել:

Այս բոլորը ցուց ե տալիս, վոր 19-րդ դարի ա-
ռաջին քառորդում խիստ տատանվում եր նաև ցարա-
կան ինքնակալության հիմնական հենարանը՝ բանակը:
Բանակի այդ ծանր պայմանները մեծ շափով նը-
պաստեցին գեկաբրիստական շարժմանը: Այդ շարժ-
մանը հարցին մեծ քանակությամբ զինվորականներ:

1812 թ. հետո չափազանց ծանր ոեակցիա սկսվեց
նաև լուսավորության ու կրթության բնագավառում:
1816-ին լուսավորության մինիստր նշանակվեց կոյադ
Գալիցինը, վորը վերին աստիճանի ոեակցիոն, դաժան
կրոնամոլ անձնավորություն եր: Գալիցինի նախա-
դուվ մի տարուց հետո լուսավորության մինստրու-
թյունը վերակառուցվեց և կոչվեց «Հոգեվորական գոր-
ծերի և լուսավորության մինիստրություն»: Ամբողջ
ծերի և լուսավորության մինիստրությունը: Ամբողջ
լուսավորության ու կրթության գործերի վրա հաստատ-
վեց խավարամիտ, ոեակցիոն հոգեվորականության
հակողությունը:

Այդ շրջանում, ինչպես Ալեքսանդր Առաջինի,
նույնպես ել Գալիցինի վրա չափազանց մեծ եր ոռու
միտրոպոլիտ Ֆոնտանի ազգեցությունը: Ոռուական
բարձրագույն դպրոցներում, միջնակարգ դպրոցներում
և առհասարակ կրթության ու լուսավորության ամբողջ
ցանցում մի շարք առարկաներ հանվեցին և նրանց
փոխարեն մտցվեցին կրոնական առարկաներ:

Գալիցինը հաճախ ասում էր՝

«Գիտությունը առանց հավատի գեպի աստ-
վածը, վոլ միայն հարկավոր չե մեզ, այլ և այն
վտանգավոր ե»:

Այդ շրջանում Ռուսաստանի համալսարաններից
մասսայական կերպով հեռացնում եին առաջավոր պրո-
ֆեսորներին, լավագույն գիտնականներին: Միայն
կազմանի համալսարանից Գալիցինը հեռացրեց 11 լա-
վագույն պրոֆեսորների:

Սկսվեց չտեսնված հալածանք՝ գիտնականների և
առհասարակ գիտության դեմ: Ծանր ոեժիմ ե ստեղծ-
վում նաև համալսարաններում ուսանողների համար:
Բավական ե ասել, վոր ուսանողներին սկսեցին յեն-
թարկել կարցերային պատիժների, բազմաթիվ լավա-
գույն ուսանողներ ամենափոքր կասկածանքի պատճա-
ռով հեռացվում եին համալսարաններից և յենթարկ-
վում հալածանքների:

Գալիցինի և Ալեքսանդր Առաջինի կողմից ստեղծ-
վեց խիստ գրաքննություն: Այդ ժամանակվա առաջա-
վոր գրողների բազմաթիվ գործեր արգելվում եր տպա-
գրել: Խիստ գրաքննության հետևանքով նույնիսկ ար-
գելվում եին այնպիսի գիտական աշխատանքներ, վո-
րոնք կապված եին կենդանաբանության, բուսաբա-
նության հետ:

Որինակ, Գալիցինն ինքը արգելեց մի գրքի հրա-
տարակությունը, վորի վերնագիրն եր՝ «Սունկերի վր-
եասը»: Նա գրքի վրա մակագրեց՝

«Քանի վոր սոմնին աստծու կողմից սահման-

ված ե, վորակես պասու կերակուր, ուստի նրա
մասին վատ բան գրել չի կարելի»:
Սա մի որինակ ե, վորը ցուց ե տալիս, թե ինչ
աստիճանի յեր հասնում գրաքննության խստությունը:
Ամփոփելով, պետք ե ասել, վոր այդ ծանր ոեժի-
մը, վորը ստեղծվեց Ալեքսանդր Առաջինի կողմից,
Հատկապես 1812 թվի պատերազմից, «սրբազն դա-
շինքի» կնքումից հետո, ավելի քան ուժեղացրեց պայ-
քարը ճորտատիրական կարգերի գեմ և պարարտ հող
ստեղծեց դեկաբրիստական շարժման համար: Դե-
կաբրիստական շարժումը նախապատրաստող պայման-
ներից մեկն ել արևմտյան Յեվոպական յերկրներում
տեղի ունեցող հեղափոխությունների ազգեցությունն
եր: Հայտնի յէ, վոր սկսած XVIII դարի վերջերից Ա-
րեգմտյան Յեվոպայում տեղի ելին ունեցել մի շարք
հեղափոխություններ: Բավական ե հիշել 1789 թվի
ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը, վորը
մեծ փոփոխություն մտցրեց վոլ միայն ֆրանսիական
կյանքում, այլև խոշոր ազդեցություն ունեցավ ամբողջ
Յեվոպայի վրա: Նապոլեոնյան արշավանքների ժա-
մանակ Ֆրանսիա զնացած ոռա զինվորները և սպա-
ները մոտիկից տեսան և ծանոթացան բոլոր այն ազ-
դեցություններին, վոր թողել եր ֆրանսիական հեղա-
փոխությունը Յեվոպայի տնտեսական, պետական և
կուլտուրական կյանքի վրա: Նրանք Ռուսաստան վե-
րադառնալով այլևս չեցին կարողանում տանել Ալեք-
սանդրյան մոայլ ու ծանր ոեժմը, ճորտատիրական
հետամնացությունը, ճորտատիրական կարգերը: Նը-

բանք Յեվրոպայում ականատես յեղան բազմաթիվ թագավորների գահընկեցման դեպքերի, բազմաթիվ սահմանադրությունների հաստատման և պետական նոր հիմնարկությունների ստեղծման: Նրանք ականատես յեղան իսպանական, իտալական հեղափոխություններին և դեկաբրիստների վրա այդ բոլորն ունեցավ խորը ազդեցություն:

Դեկաբրիստների աշխարհահայացքը կազմակերպվեց և զարգացավ Արևմտյան Յեփողայի բոլորուական հեղափոխությունների ետապում։ Այսպիսով դեկաբրիստները որյեկտիվորեն ընդորինակեցին և դրսեվորեցին այդ ժամանակի բոլորուագիայի առաջավորհայացքները։ Դեկաբրիստներն իրենց գործունեյությամբ որյեկտիվորեն ձգտում եյին պայմաններ ստեղծել փոխելու հին կարգերը նաև Ռուսաստանում և Ռուսաստանու նույնպես տանել Յեփողայի ուղիով։

Ա՞յս բոլոր պայմանները, վորոնք նպաստեցին դեկաբրիստական շարժման առաջընթաց:

ԴԵԿԱԲՐԻՍՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեկաբրիստական գաղտնի կազմակերպություն-ների պատմությունը կարելի յէ սկսել 1814 թվից: 1814 թվականին Հանդես յեկավ առաջին գաղտնի կազմակերպությունը, վորը կոչվում եր «Մուս ասպետների միություն»:

Այդ կազմակերպության անդամների թիվը 3-4-ից շանցավ։ Այդ կազմակերպության իդեալան և ղեկավար կազմակերպիչը հանդիսանում եր գործ Դի-

միտրե Մամոնովը: Սա գրեց խմբակի ծրագիրը, վորթ Հանդիսանում եր իրենց յերազած պահանջվելիք սահմանադրության նախագիծը:

Այդ նախագիծի համաձայն Ծուաստանը պետք է ունենար յուրահատուկ հանրապետական կառուցվածք: Ըստ նրա՝ իշխանությունը պետք է անցներ յերկու պալատների— «ազնվականների» պալատի և «քաղքենիների» պալատի ձեռքը:

Ազնվականների պալատում պետք է ընտրվեն միայն տոհմիկ ազնվականներից 221 հոգի, և մյուս բոլոր ազնվականներից դարձալ 442 հոգի: Այդ յերկուսի միացումն եր, վոր կազմում եր ազնվականների պալատը: Նախատեսվում եր նաև այն, վոր ազնվականների պալատը պետք է ընտրեր իրենից յերկու կայսերական պոստնիկներ: Նրանցից մեկը պետք է ղեկավարեր բանակի գործերը, մյուսը՝ յերկորի պետական, վարչական գործերը:

Յերկորդ պալատը, այսինքն քաղենիների պալատը, ընտրվում եր վաճառականներից, տնատերերից և նույնիսկ խոշոր վարպետներից: Այս պալատը պետք է կազմակերպվեր 3000 հոգուց: Վերջինս վճռական դեր չեր կատարում: Յերկրի հիմնական ղեկավարման դերը պետք է պատկաներ ազնվականների պալատին:

Այս խմբակը վորոշակիորեն շի գրել թագավորի Հարցը, բայց կան զանագան կողմանակի փաստեր, վորոնք վկայում են, վոր նրանք չեյին ընդունում թագավորի գոլությունը:

Որինակ, խմբակի ղեկավար Մամոնովը, խոսելով իսպանական կորտեսների մասին, ասում ե՝

«Նա մեզ համար պիտանի չե այնքան, վորքան այնտեղ պահված ե թագավորական իշխանությունը, իսկ մեզ, նման անասունը պետք չե»:

Այս խոսքերը վկայում ե այն մասին, վոր նրանք գեմ եյին թագավորին: Այնուշետև Մամոնովը իր այդ սահմանադրության նախագծում նախատեսում եր բուրուր, ոտարերկրացիներին զրկել պետական պաշտոններից:

«Ծուա ասպետների միությունն» առանձին դեր խաղաց: 1816 թվին այդ խմբակը ցրվեց:

1816 թ. Պետերբուրգում կազմակերպվեց մի նոր գաղտնի գեկարբիստական կազմակերպություն, վորք կոչվում եր «Հայրենիքի իսկական և հավատարիմ վորքների ընկերություն»: («Общество истинных и верных сынов отечества»),

Այդ միությունը կարձ անվամբ կոչվել ե նաև «Փրկության միություն» («Союз Спасения»),

Այս միության աշքի ընկնող անդամներն եյին՝ Նիկոլա Մուրավյեվը, Սերգեյ Տրուբեցյովը, յեղացրներ՝ Մատվեյ և Սերգեյ Մուրավյովները, Յակովիկինը: Սիրիչ ավելի ուշ այս միության մեջ մտավ նաև զնդապետ Պետելը:

«Փրկության միության» անդամների մեծ մասը գինվորականներ եյին և պատկանում եյին գերազանցապես քայլայվող ազնվականությանը: «Փրկության միության» հիմնական իննիքին եր— Ծուաստանում ստեղծել սահմանադրական միապետություն: Նրանք գնում եյին խաղաղ ճանապարհով, ինքնակալության



Պ. Ի. Պետեր, Կ. Ֆ. Ռիլեյվ, Մ. Պ. Բեսոռուժել-Ռյումին, Ս. Ի. Մուրավյով-Ապոստու, Պ. Գ. Կախովսկի - Նիկոլայ Առաջինի կողմից
մահապատճի յենթարկված հինգ գեղաբերսամերը:

Վրա ազգելու միջոցով ձեռք բերել այնպիսի սահմանադրություն, վորագիսին արդեն կար յելքոպական միշտը յերկրներում:

Պետերի ընդունվելուց հետո աստիճանաբար այդ միության մեջ հանդես յեկալ նաև հանրապետական գաղափարը:

Պետերը, վորն սկզբում կողմնակից եր միայ-

սահմանադրական միապետության ստեղծմանը, հետագայում աստիճանաբար կանգնեց միապետության տապալման և հանրապետության ստեղծման տեսակերպ վրա:

«Փրկության միության» ներսում պայքար եր գընում այդ յերկու գաղափարների միջև: Բայց այդ պայքարում գերակշռում եր սահմանադրական միապետության կողմնակիցների թիվը:

1818 թվականին այդ միության անդամների մի մասը գնաց այլ վայրեր, իսկ մի խոշոր մասն եղ փոխադրվեց Մոսկվա, և փաստորեն «Փրկության միությունը» կաղջակերպվորեն դադարեց գոյություն ունենալուց:

1818 թվին Մոսկվայում «Փրկության միության» նախամերից կազմվեց դեկաբրիստների մի նոր գաղտնի կազմակերպություն, վորը կոչվում եր «Բարորության միություն»: «Բարորության միություն» կանոնադրությունը, վորը կոչվում եր «Կանաչ գիրք»:

Այս միության ներսում նույնպես սկզբից և յեթ պայքար եր գնում սահմանադրական միապետության միջև և հանրապետության կողմնակիցների միջև: Այս միության անդամների վրա մեծ ազդեցություն ունեցավ 1820 թվականին հսպանիայում և իտալիայում սկսված բուրժուական հեղափոխությունը:

Իսպանիայում և իտալիայում տեղի ունեցած հեղափոխությունը, ուղղված ինքնակալության դեմ, դա մի հեղափոխություն եր, վորի սկզբունքն եր «Հեղափոխություն առանց արյան»:

Դեկաբրիստները մեծ շափով վոգեվորվեցին իսպանական և խոլական հեղափոխության գաղափարներից; Դա մի նոր խթան հանդիսացավ դեկաբրիստական շարժման համար:

«Բարորության միությունը» լիբերալ մի խմբակ էր, վորը նույնիսկ առաջ և քաշում այն հարցը, թե պետք է ոգնել պետությանը՝ լուսավորության և արտադրության գործերը կազմակերպելու համար: Սակայն այդ միության մեջ քանի գնում ուժեղանում էր Պետելի խմբակը, վորին կարող ենք այդ միության ձախ համարել: Պետելի կողմնակիցները վճռականապես գնում եյին միապետության տապալման և հանրապետության ստեղծման հարցը:

«Բարորության միության» մեջ շուտով մուտք գործեց լրտեսությունը: Լրտեսները խմբակի աշխատանքների մասին հայտնում եյին վոստիկանությանը և Աւեբսանդի Առաջինին:

Այդ պայմաններում դժվար էր խմբակի հետագա պոյությունը:

1821 թ. Հունվարին տեղի ունեցավ այդ միության այսպես կոչված «Մոսկովյան համագումարը»: Համագումարում ներքին տարածայնություններն ավելի քան ուժեղացան, վորն անհնարին էր դարձնում խմբակի տարբեր թևերի հետագա համատեղ գործունեյությունը:

Սա մի կողմից, և լրտեսության հետևանքով այդ խօմքակի բացման վտանգը մյուս կողմից, հարկադրեց «Բարորության միության» դեկավարներին պաշտոնապես հայտարարել այդ խմբակը ցրված: Սակայն շուտով կազմակերպվում են դեկաբրիստական յերկու

խոշոր միություններ՝ «Հյուսիսային» և «Հարավային» ընկերություններ:

ԴԵԿԱԲՐԻՍՏՅԱՅԻՆ «Հարավային ընկերությունը»

Դեկաբրիստական միությունը կազմակերպվեց Ռվերախնայի ամրացված գինվորական միավայրում: Նրա կենտրոնը կիևն էր: «Հարավային ընկերության» ականավոր դեկավարն էր գնդապետ Պետելը: «Հարավային ընկերության» աշքի ընկնող անդամներից ելին՝ Յուշեկսկին, Վոլկոնսկին, Դավիդովը, Ավրամովը, Իվանովը, Բեստուժեվ-Խյումինը, Սերգեյ Մուրավյով-Ապոստոլը, կնյազ Բարյատինսկին և ուրիշները:

1822 թվականի սկզբին տեղի ունեցավ «Հարավային ընկերության» համագումարը, վորտեղ Պետելը և Յուշեկսկին ընտրվեցին ինկերության դեկավարներ (դիրեկտորներ):

«Հարավային ընկերության» համար Պետելը ծրագիր մշակեց, վորը կոչվում էր «Մոսկակայա Պրավդա»: Պետելը նախատեսում էր «Մոսկակայա Պրավդա» կազմել 10 գլխից, վորտեղ պետք է ընդգրկվեր իր ամբողջ պլատֆորմը, խմբակի ամբողջ ծրագիրը: Սակայն նա կազմեց ընդամենը $2\frac{1}{2}$ գլուխ, մնացածը չկարողացավ հասցնել: Բայց իր այդ կազմածում Պետելը ավելի բոլոր հարցերի նկատմամբ իր տեսակետը: Ծրագրում վորպես կարեոր և Հիմնական հարց Պետելն առաջ է քաշում գյուղացիների ազատագրման հարցը, այսինքն ճորտության վերացումը:

Պետելը դնում է հողի պետականացման հարցը, նա գտնում է, վոր պետք է հողը համարվի ընդհանուր պետական ֆոնդ: Ապա նա նախատեսում է հողային

այդ ամբողջ ֆոնզը բաժանել յերկու մասի: Մի փոքր
մասը Պեստելը նախատեսում եր բաժանել գյուղացի-
ներին և առհասարակ բոլոր նրանց, ովքեր ցանկանում
ելին զբաղվել յերկրագործությամբ:

Հստ Պեստելի նախագծի, գյուղացիներին տրվելիք
հողը չի կարելի վոչ ծախել, վոչ ել վարձակալության
տալ: Հողային ֆոնզի մեծ մասը Պեստելը նախատե-
սում եր թողնել պետության ձեռքին: Պետությունը կա-
րող եր այդ հողը ծախել, կամ ժամանակավոր կերպով
վարձակալության տալ ում ցանկանար:

Պետությունը կարող եր այդ հողը վարձակալու-
թյան տալ կամ վաճառել վոչ միայն գյուղացիներին,
այլև նրանց, ովքեր ցանկանում են յերկրագործու-
թյամբ զբաղվել կամ ով ցանկանում եր զանազան
նպատակներով ոգտագործել այդ հողը: Վորպեսզի
ունեոր գյուղացիները կարողանային այդ հողը վար-
ձակալությամբ վերցնել, Պեստելը նախատեսում եր
պետության միջոցով ստեղծել վարկային մի խոշոր
ցանց, վարկավորել ունեոր գյուղացիներին: Ագրարային
հարցում Պեստելի այդ նախատեսումները պայմաններ
ենին ստեղծում Ռուսաստանում կապիտալիզմի արագ
զարգացման համար:

Պեստելը Ռուսաստանում իշխանության ձեր հար-
ցում նախատեսում եր ստեղծել բոլորուական հանրա-
պետություն, նաև նախատեսում եր ինքնակալության
տապալում, նույնիսկ թագավորին և նրա ընտանիքին
ֆիզիքապես վոշնչացնելը:

Հստ Պեստելի հետագալում նախատեսնվելիք հան-
րապետության գերագույն իշխանությունը պետք եր ըն-
տրվեր ընտրական իրավունքի սկզբունքով և պետք

կազմված լիներ յերեք պալատից՝ ժողովր-
դական վեշե*), պետական դումա և գերագույն ժողով:
«Ժողովրդական վեշեն» պետք եր լիներ որենսդիր որ-
գան, նա ընտրվելու յեր ժողովրդական պատգամավոր-
ներից՝ 5 տարի ժամանակով: Պեստելը նախատեսում
եր ամեն տարի այդ ժողովրդական վեշեի 1/5 մասը
վերընտրել Պետական դուման պետք եր հանդիսանար
յերկրի գործադիր որգանը: Այն նախատեսվում եր
կազմել ժողովրդից ընտրված 5 ներկայացուցիչներից՝
5 տարի ժամանակով, վորոնք պետք եր կոչելին դի-
րեկտորներ: Հստ Պեստելի յերկրի հիմնական գործա-
րար ապարատը պետք եր կազմված լիներ այդ 5 դիրեկ-
տորներից:

Յերկրի մինիստրություններն ու պետական այլ
հիմնարկությունները պետք եր յենթարկվելին այդ 5
դիրեկտորներին: Յերագույն ժողովը Պեստելը նախա-
տեսում եր ընտրել 120 հոգուց: Սա ըստ եյության
պետք եր հանդիսանար վերահսկող որգան, նա գերա-
պետք եր հանդիսանար պահանջման սահմաններ սահմա-
նագրությունն անշեղորեն իրագործելու համար:

Ազգային հարցը նույնպես շատ թեթև կերպով
դրվեց Պեստելի «Ռուսսկայա Պրավդա»-յում: Սակայն
Պեստելը ազգային հարցը քննում եր յելակետ ունե-
ապահություն կարգավորեն իրագործելու համար:

Ազգային հարցում, ինչպես Պեստելի մոտ, նույն-
պես և գեկարրիստաների մյուս խմբակներում, իշխան
եր մեծապետական շունդիզմի գիծը:

* Վեշե հանրաժողով, ժողովրդական խորհուրդ:

միավորներ, և ապա այդ միավորներից ստեղծել միացյալ մի թագավորություն։ Ըստ Մուրավյովի, յուրաքանչյուր նահանգ պետք է ունենար իր առանձին պարլամենտն ու ընտրութիւնը որդանը, և նրանք բոլորը միասին պետք է լինի թագավորին թագավորին ու ժողովրդական վեշտին։ Մուրավյովն իր նախատեսած ժողովրդական որդանների ընտրության հիմքում նախատեսում եր գնել գույքային ցենզը։

Ըստ Մուրավյովի նախագծի, ընտրությանը կարող էլին մասնակցել այն քաղաքացիները, վորոնք ունեցին մեկ հազար ուսումնական պատությամբ անշարժ գույք և 500 ուսումնական գույք։ Այլ կերպ ասած ընտրություններին կարող եր մասնակցել մուսաստանի ունեոր բնակչությունը։

Վերին աստիճանի լիբերալ եր նաև Մուրավյովի տակտիկան։ Նա գտնում եր, վոր պետք է խուսափել արյունահեղությունից։ Նա կանգնած եր խաղաղ ու ֆորմիստական ճանապարհով զիջումներ կորզելու, զիջումներ ձեռք բերելու տեսակետի վրա։

Մուրավյովի այդ գաղափարներն, ի՞նչ արկի, նույնպես չեցին արտահայտում «Հյուսիսային ընկերության» բալոր անդամների տեսակետները։ «Հյուսիսային ընկերության» մեջ մի խմբակ, Ռիլեկի գլխավորությամբ, պաշտպանում եր դեմոկրատական հանրապետության ստեղծման գաղափարը և ավելի շատ համակրում եր Պետելի ծրագրին։ Ռիլեկի խմբակը հանդիսանում եր «Հյուսիսային ընկերության» ամենաձախ թեր։ Դեկաբրիստական այդ յերկու խմբակների՝ տակտիկաների միջև խոշոր նմանություն կար։

Ինչպես «Հյուսիսային» նույնպես և «Հարավային» ընկերություններն իրենց զույը դնում ելին միայն

իրենց զինվորական գնդերի վրա։ Նրանք վերին աստիճանի հեռու ելին ժողովրդից, իրենց տեսակետները թագցնում ելին ժողովրդական լայն մասսաներից։ Գյուղացիությունը պոտենցիալ հեղափոխական խոշոր ուժ եր հանդիսանում։ Սակայն դեկաբրիստներն իրենց հայացքները շատ խնամքով ծածկում ելին նաև գյուղացիներից։

Գյուղացիությունից նրանք թագցնում ելին իրենց հայացքները, վորովհետև վախենում ելին, թե հեղափոխականորեն տրամադրված գյուղացիությունը կարող է իր պայքարով ավելի առաջ գնալ և դրանով վրնասել նաև իրենց՝ դեկաբրիստների գործին։ Դեկաբրիստների հավաքույթներից մեկում գնդապետ Միտկովը արծածեց այն միտքը, թե պետք է վոտքի կանգնեցնել ծորտերին, սակայն Միտկովի տեսակետը մյուս դեկաբրիստների կողմից հավանություն չգտավ։ Ընդհակառակը, Միտկովն արժանացավ հանդիմանությունների։ Դեկաբրիստների ունեցած վախը գեպի ժողովուրդը՝ դեպի գյուղացիությունն, արդյունք եր նրանց դասակարգային սահմանափակվածության։ Դեկաբրիստներն իրենց հույսը դրել ելին միայն իրենց զինվորական գնդերի վրա, սակայն նույնիսկ նրանցից թագցնում ելին իրենց նախապատրաստությունն ապստամբության համար և սպասում ելին, վոր ապստամբության որը, միայն հրամանի միջոցով, վոտքի կանգնեցնեն և իրենց հետեւից տանեն զինվորներին։

Գնդապետ Գարբաշևսկին իր հիշողությունների մեջ պատմում եր այսպիսի մի դեպք. «Գնդապետ Տիգենգառուղենը միշտ ասում է, թե իրեն բավական ելիթե շարի գումզը, մի քանի գինու տակառ գլորի գըն-

գի առաջ ու մի քիչ ել փող բաժանի և բղավի՝ «արդանե՞ր, իմ հետեւից»։ այսպիսով ամբողջ գոնդը կրարժվի և կտործի այնպես, ինչպես ինքն և ցանկանում»։ Տիգենգապուղենի այս տեսակետը ըստ Եյության պատկանում եր նաև մյուս դեկաբրիստներին։

Այսպիսով, վախը գեպի ժողովուրդը, նեղ սահմանափակվածություն, առանց արյան հեղափոխություն—ահա տակտիկական այն հիմնական գիծը, զոր պաշտպանում եյին դեկաբրիստների մեծ մասը։ Տակտիկական այս սխալ գիծը խոշոր բացասական նշանակություն ունեցավ դեկաբրիստների նպատակի իրագործման համար։

Բացի հյուսիսային և հարավային խմբակներից, գոյություն ուներ նաև դեկաբրիստների յերրորդ խմբակը, վորը կոչվում եր «Միացյալ սլավոնների ընկերություն»։

«ՄԻԱՅՅԱԼ ՍԼԱՎՈՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

«Միացյալ սլավոնների ընկերություն»—ը կազմակերպվել է Ռուսաստանի հարավում, գերազանցապես Ուկրաինայի զինվորական միջավայրում։ Այդ խմբակը դեռևս իր սաղմանավորումը սկսում է 1818 թվականից և այն ժամանակ նա կոչվում եր «Բնության բարեկամների ընկերություն», սակայն նա վերջնականապես ձևակերպվեց 1823 թ. նովոգրադ Վոլինսկում և կոչվեց «Միացյալ սլավոնների ընկերություն»։ Այդ ընկերության ակտիվ դեկավարներից եյին Լյուբլինսկին և Բարիսով յեղբայրներ։

«Սլավոնների միացյալ ընկերությունը» զրեց գյուղացիներին ճորտությունից ազատագրման և ճորտալին շահագործման վերացման անհրաժեշտության հարցը։

Նրանք իրենց ծրագրի վրա վորագես առաջին խոսք գրել եյին,

«Մի ցանկանա ունենալ ստրուկ, յեթե դու չես ցանկանում լինել ստրուկ»։

Նրանք զնում եյին ցարական ինքնակալության տապալման հարցը, ապա առաջ եյին քաշում սլավոնական բոլոր ժողովուրդների միացումը և ֆեդերատիվ սկզբունքներով մի ընդհանուր համասլավոնական ֆեդերատիվ հանրապետության ստեղծումը։

Նախատեսվում եր այդ սլավոնական ֆեդերատիվ հանրապետության կենտրոնը դարձնել կամ Վոլինը, կամ Պատոլյան, վորան պետք ե զարգանար կուլտուրան, առևտուրը և արդյունաբերությունը; Նրանք նախատեսում եյին, վոր այդ ֆեդերատիվ հանրապետության մեջ մտած յուրաքանչյուր սլավոնական ժողովուրդ պետք ե ունենալ իր առանձին իշխանությունը, իր ներքին ավտոնոմիան, իր սահմանադրությունը, վորով և նա պետք ե դեկավարվեր, իսկ տարին մեկ անգամ նախատեսնվում եր այդ ֆեդերատիվ հանրապետության կենտրոնում հրամիրել ընդհանուր ֆեդերատիվ հանրապետության համագումարը, վորը պետք ե քննության յենթարկեր ընդհանուր հարցերը։

«Միացյալ սլավոնական ընկերության»—ը ուղարկեալ պետության մեջ հավաքելու ձգտումը նոր զարգացող բուրժուազիայի ձգտումն եր: «Սլավոնական միացյալ ընկերությունը» մշակեց ապագա այդ ֆեդերատիվ հանրապետության գերբը, վորն ուներ այնքան կողմ, վորքան սլավոնական յերկրներ պետք ե մտնելին այդ ֆեդերացիայի մեջ։ Գերբի վրա կային հատուկ նշաններ, վորոնք ցուց եյին տալիս

ձգտում՝ դեպի քաղաքալին կյանքի զարգացումը՝ նրանք դնում եյին արհեստի, առևտութիւնը ու արվեստի արագ զարգացումը։ Գերբի վրա կար խարսխի նշան, վորը ցուց եր տալիս, վոր սլավոնական այդ հանրապետությունը պետք ելինի ծովային պետություն։ Այս բոլորը վկայում են այն մասին, վոր «Սլավոնական միացյալ ընկերությունը» արտադայտում եր նոր զարգացող սլավոնական բոլորուազիայի շահերը։

«Սլավոնների միացյալ ընկերություն»-ը իր առաջարած հարցերով ըստ Եյության ավելի ճախ եր, քան գեկաբրիստների մյուս խմբերն ելին։ Նա իր տակտիկական ընդհանուր գծով նույնպես ավելի վըճռական եր, նա կանդնած եր զինված ապստամբության անհրաժեշտության տեսակետի վրա։ Այդ կազմակերպության սոցիալական կազմը նույնպես մեծ շափով տարբերվում եր «Հյուսիսային» և «Հարավային» ընկերություններից։ Յեթ Հյուսիսային և Հարավային ընկերությունների անդամների մեծ մասը միջին և նույնիսկ բարձր զինվորականներ ելին և բանակում բարձր զինվորական պաշտոն ու աստիճան ունելին, ապա «Սլավոնական միացյալ ընկերության» անդամների մեծ մասը դուրս եր յեկել մանր զինվորականներից։ Նրանց ղեկավարները բանակում ցածր աստիճանի զինվորականներ ելին։ «Սլավոնական միացյալ ընկերության» մեջ կային նաև մի շարք շարքային զինվորներ, վորպիսիք չկային առաջին յերկու միությունների մեջ։ Խնչպես նաև նրա մեջ կային շատ վոլ զինվորականներ, հատկապես ծառայողներ, հողագույկ քայլայված ազնվականներ։ «Սլավոնական միացյալ ընկերությու-

նը», հակառակ «Հյուսիսային» և «Հարավային» ընկերությունների, խնդիր եր դնում վոտքի կանգնեցնելու հարգերի դեմ ժողովրդական դեմոկրատական լայն խավերին։

Նրանք փորձեր արին ագիտացիոն վորոշ աշխատանքներ տանել շարքույին ընկերությունների և գյուղացիների մեջ։ Սակայն նրանց այդ փորձերն առանձին լայն ծավալ չստացան։

«Սլավոնական միացյալ ընկերությունը», վորպես ինքնուրույն միություն, յերկար գոյություն չունեցավ։ Ինչպես «Սլավոնական միացյալ ընկերությունը», նույնպես և «Հարավային ընկերությունը» գոյություն ունեյին նույն վայրում և զրեթե նույն տեսակետներն ելին պաշտպանում։ պատահականորեն 1825 թ. գարնանը իմանալով միմյանց գոյությունը սկսվում է բարձր միացյություններ այդ յերկու միությունները միացրանակցությունները այդ յերկու միությունները միացնելու շուրջը։ «Հարավային ընկերության» կողմից «Սլավոնական միացյալ ընկերության» հետ բանակցություններ եր վարում թեստիկ-իրումինը։ Բանակցությունների ընթացքում նկատվեց անհամաձայնություններ տակտիկական հարցերում, սակայն շուտով այդ անհամաձայնությունները հարթվում են և «Սլավոնական միացյալ ընկերությունը» ձուլվում է Հարավային ընկերության հետ։ «Սլավոնական միացյալ ընկերությունը» «Հարավային ընկերության» հետ միանալուց հետո կազմակերպչորեն դադարեց գոյությունը ունենալուց, բայց մնում եր վարպետ «Հարավային ընկերության» ձախ թե, ձախ ֆրակցիա։ Այսպիսով դարձյալ վորպես գեղաբրիստական հիմնական միություններ մնում են «Հյուսիսային» և «Հարավային» ընկերությունները։

Այդ յերկու ընկերություններն աշխատում ելին իրարից կտրված և միայն Պեստելն եր, վոր ամեն կերպ ձգտում եր տանել համաձայնեցված գործողություն «Հյուսիսային ընկերության» հետ: Պատել հատկապես ձգտում եր սերո կապ ստեղծել «Հյուսիսային ընկերության» ձախ թիկ՝ Ռիլեյնի և Պուշչինի դեկավարած իմբրի հետ: Պեստելն անձամբ սերտ կապեր հաստատեց «Հյուսիսային ընկերության» անդամներ Ռիլեյնի, Պուշչինի, Կյուփել-Բեկիերի (գեկաբրիստ զողով) հետ: Պեստելը սրանց միջոցով մտերմացավ նաև ոռա մեծ բանաստեղծ Պուշչինի հետ:

Պուշչինը ձեականորեն չեր պատկանում դեկաբրիստական վորուե կազմակերպության, բայց իր գրական ստեղծագործություններով փաստորեն հանդիսանում եր դեկաբրիստների ձախ թիկ ձայնափողը: Պուշչինն անհօն ատելությամբ եր լցված դեպի ինքնակալությունը, դեպի ցարական կարգերը, դեպի ցարական ֆեոդալական հետամնացությունը և նա յերազում եր տեսնել ցարիզմի կործանումը:

Նա իր հոշակալոր «Աղատություն» («Волностъ») վոտանավորում ասում է՝

«Ստում եմ ժեզ և ք զանը
Միահինձան գոռոզ ցար,
Յեվ ք վորդոց ու ք մանը
Պիտի տեսնեմ անպատճառ»:

Պուշչինը իր վոտանավորներում հույս և հայտնում, վոր կգա յերշանկության որը, յերբ կտապալիք ուստական ցարիզմը: Նա իր ընկերոցը՝ Զադայեվին ուղղված վոտանավորում գրում է.

«Հավատա ընկեր, պետք ե բոցավառի ար-

շալույսը յերշանկության նմայիշ: Թուսաստանը կզարդնի բնից և կտապալի լուծը միապետորյան»:

Պուշչինի հայտնի յերկերը, ինչպիսիք են՝ «Գյուղը», «Աղատություն», «Դաշույնը», «Զադայեվին» և այլ վոտանավորները դարձան դեկաբրիստների սեղանի գրքեր: Դեկաբրիստները Պուշչինի այդ յերկերում տեսնում ելին իրենց գաղափարների ագիտացիան, շատ հաճախ եր պատահում, յերբ դեկաբրիստները հավաքվելով ընթերցում ելին Պուշչինի վոտանավորները, վոգեվորվում և նոր լիցք ստանում նրանցից:

Պուշչինը միայն պատահականորեն եր, վոր գուքս եր մնացել դեկաբրիստական կազմակերպություններից: Նա մինչև 1825 թ. դեկտեմբերի 14-ի ապստամբության որը չգիտեր, թե Առասաստանում գոյություն ունեն դեկաբրիստական գաղտնի կազմակերպություններ: Դեկաբրիստներն իրենք դիտավորյալ կերպով այդ բանը գաղտնի ելին պահում Պուշչինից: Վոմանք գտնում ելին, վոր դեկաբրիստները Պուշչինից այդ գաղտնի ելին պահում, վորովհետև կասկածում ելին, թե յեթե Պուշչինն իմանա այդ գաղտնի կազմակերպությունների մասին, իրեն հատուկ տաքարյունությամբ, ջղայնացած մոմենտում, կարող է հանկարծ խոսք բաց թողնել բերանից, իսկ այդ բանը կարող է ոգտագործվել վոստիկանության կողմից և տեղի տալ կազմակերպության հայտնաբերման: Վոմանք ել գոնում ելին, վոր դեկաբրիստները Պուշչինին դիտավորյալ կերպով մասնակից չելին անում իրենց կազմակերպությունների աշխատանքներին, վորովհետև վախենում ելին, վոր ցարական վոստիկանությունը կարող է այդ

գործը բացել և առանց այն ել ցարիզմի կողմից հաւածվող Պուշկինը կարող եր կորստյան մատնվել, այլ կերպ ասած, նրանք ուզում ելին ապահովելուս մեծ բանաստեղծի կյանքը: Մեր կարծիքով այս յերկրորդ տեսակետն ավելի հավանական է:

Իսկ յեթե Պուշկինն իմանար, վոր Ռուսաստանում գոյություն ունեն գաղտնի խմբակներ, արդյոք նա կրմաներ այդ կազմակերպությունների մեջ: Ի հարկե, անպայման նա կմտներ այդ կազմակերպությունների մեջ: Նա այդ մասին խոստովանել ե Հենց իրեն՝ Նիկոլայ Առաջինին: 1826 թվին, դեկաբրիստական ապստամբության ճնշումից հետո, Նիկոլայ Առաջինը Պուշկինին իր կալվածքից՝ Միխայելովսկուց, վորտեղ նա աքսորված եր, կամեց Պետերովորդ և անձամբ նըրա հետ զրուց ունեցավ: Այդ զրուցի ժամանակ նա Պուշկինին հարցրեց — թե ինչ ե Զեր վերաբերմունքը դեպի դեկաբրիստները: Պուշկինն իրեն հատուկ հաստակամությամբ Նիկոլային պատասխանեց, վոր ինքը ուրախ ե, վոր դեկտեմբերի 14-ին Պետերբուրգին չինք դեկաբրիստների կողին:

Այլ կերպ ասած, Պուշկինն ուզում ե ասել, վոր վոշ միայն ինքը կլիներ այդ կազմակերպության անդամ, այլև կլիներ նրա ակտիվ կազմակերպիչներից մեկը: Այսպիսով դեկաբրիստների գաղափարներն իր ժամանակի սուսական առաջավոր հասարակայնության գաղափարներն ելին, Պուշկինի և նրա առաջավոր սերնդի գաղափարները:

1825 թ. նոյեմբերի 19-ին Տագանրոգում Ալեքսանդր Առաջինը տիֆով հիվանդացավ և հանկարծակի մահացավ: Կարևոր խնդիր եր, թե ո՞վ պետք ե գահը ժառանգի: Ալեքսանդրը վորդիներ չուներ, հետևապես ժառանգական իրավունքի համաձայն գահը պետք ե անցներ մյուս յեղբորը՝ Կոստանդինին, վորն այդ ժամանակ գտնվում եր Վարշավյում և հանդիսանում եր լեհական փոխարքա:

1825 թ. նոյեմբերի 27-ին Պետերբուրգի պալատական յեկեղեցում կատարվում ե Ալեքսանդրի համբան համար հատուկ ժամերգություն, կամ այսպես կոչված Ալեքսանդր Առաջինի հոգեհանգիստը: Հենց յեկեղեցում Պետերբուրգի զինվորական նահանգապետ (զեներալ-գուբերնատոր) Միլո-Ռոզովիչը հայտնեց Ալեքսանդր Առաջինի փոքր յեղբորը՝ Նիկոլային, վոր ժառանգական որենքի համաձայն գահը պետք ե հանձնվի Կոստանդինին և վոր ինքն արդեն հրամայել ե զորքին յերդում տալ Կոստանդինին, վորպես թագավորի: Նիկոլայը, վորը ցանկություն ուներ գահին աիրելու, հարգադրված ինքը ևս յեկեղեցում տալիս ե յերդում Կոստանդինին թագավոր ճանաչելու մասին: Նիկոլայի որինակով յերդիցին նաև պալատական բարձր աստիճանավորները և այսպիսով փաստորեն 1825 թ. նոյեմբերի 27-ից Կոստանդինը ճանաշվեց վորպես ուսական թագավոր:

Միևնույն ժամանակ Նիկոլայը հատուկ մարդ ուղարկեց Վարշավա և հիշեցրեց Կոստանդինին, վոր նա դեռևս Ալեքսանդրի կենդանության ժամանակ հրաժար-

վել և գահից, ուստի թող այժմ պաշտոնապես իր հրաժարականը կրկնի և գահը զիշի իրեն:

Ի՞նչու եր Կոստանդինը Ալեքսանդրի կենդանության ժամանակ հրաժարվել գահից: Կոստանդինը Լեռնաստան գնալով ամուսնացավ Լեռնաստանում վոշ ազնվական ծագում ունեցող մի լեռունու հետ, իսկ այդ ընդունված կանոններին հակառակ եր, թագաժառանգը պետք ե անպայման ամուսնանար բարձր ազնվական ծագում ունեցող աղջկա հետ. ահա այս բանը առիթ դարձավ Ալեքսանդրին դեռևս 1822 թվին ստիպելու Կոստանդինին, վոր նա հրաժարվի թագաժառանգի իր իրավունքից և 1823 թվին Ալեքսանդրը թագաժառանգության իրավունքը տվեց իր փոքր յեղբորը՝ Նիկոլային, այդ դաշտնի պահելով հասարակական լայն կարծիքից:

Ալեքսանդրն ամեն կերպ ձգտում եր Կոստանդինին հեռու պահել գահից, նա նրա վրա առանձին հույս չուներ, վորովհետեւ Կոստանդինը իր բնակորությամբ շատ նման եր իր հորը՝ Պավելին:

Այդ խառը ժամանակն եր, վոր գտնվեց նաև մի ծրար, Ալեքսանդր Առաջինի կողմից թողնված. այդ ծրարը պահվում եր խիստ գաղտնի, Մոսկվայի Ռուպենսկի վանքում: Ալեքսանդրը ծրարի վրա մակազրել եր՝ «միայն իմ մահվան դեպքում, նախքան վորեմ այլ գործողության դիմելը բացել ծրար»: Ծրարը բացվեց, վորի մեջ գտնվում եր Կոստանդինի հրաժարականը, վորը հաստատված եր Ալեքսանդր Առաջինի կողմից: Շուտով այդ հանգամանքը հայտնի դարձավ վոշ միայն դեկավար աղջեցիկ շրջանների համար, այլև ժողոդեկանի պահանջմանը կամաց, այլև մասսաների համար:

սանդրի մահից հետո, յերբ վորոշակիորեն պրվում եր գահի ժառանգման հարցը և փաստորեն թագավոր եր ձանաշված Կոստանդինը, նա վոլ մի գործնական քայլի շղիմեց: Կոստանդինը չեր ուզում վորոշակի, հրապարակորեն հրաժարվել գահից, բայց չեր ել կարող դրեւ իր հրաժարականը, վորն արդեն հայտնաբերված եր:

Այդ բոլորի հետեւանքով ստեղծվում ե անորոշ դրություն գահի համար: Այդ անորոշ դրությունը փաստորեն տեղի տվեց մոտ 16-րդյա անիշխանության: Ի վերջո Կոստանդինը ազնվական իշխող վերնախամի ճնշմամբ Վարշավայից ուղարկեց իր վերնախամին հրաժարականը և գահն այսպիսով թողնվեց նրա փոքր յեղբայր՝ Նիկոլային:

Նիկոլայը վերին աստիճանի գաֆան մի անձնավորություն եր, վորն ամբողջ ժամանակն անց եր կացնում իր զինվորական գվարդիայի հետ և դեռևս մինչեւ թագավոր դառնալը հանել եր դաժան բռնակալի անոմ: Յերբ լուրեր տարածվեց, վոր Կոստանդինը հրաժարվել ե և գահն անցնում ե Նիկոլային, այդ բանը մեծ դժգոհություն առաջ բերեց և՛ բանակում, և՛ ժողովրդի մեջ:

Դեկաբրիստները վորոշեցին ոգտագործել ուստական ինքնակալության համար այդ խառը և ծանր ժամանակը: Զնայած դեկաբրիստները վորոշում ունեցին ապստամբություն բարձրացնել 1826 թվի ամառային զինվորական մանյովրների ժամանակ, բայց նրանք իրենց այդ վորոշումը փոխեցին և վորոշեցին այն արագացնել, քանի դեռևս Նիկոլայը չի ամբարեկ իր տիրապետությունը: Դեկաբրիստներն սկսեցին լուրեր տարածել այն մասին, թե Ալեքսանդրը իր մահվանից

առաջ կտակել ե քշացնել զինվորական ծառայության ժամկետը, տալ սահմանադրություն, բայց նիկոլայը այդ բոլորը ծածկում է:

Այս միջոցով գեկաբրիստներն աշխատում եյին զինվորների և բնակչության թշնամանքն ավելի գործ գրուել նիկոլայի գեմ: Ռիլեկի բնակարանում տեղի ունեցավ գեկաբրիստ ղեկավար անձանց մի քանի խորհրդակցություններ, վորտեղ նրանք զնում եյին անհապաղ ապստամբություն սկսելու հարցը: Նիկոլայ Առաջինը 1825 թ. ղեկտեմբերի 14-ին նշանակեց Պետերբուրգի զինվորական մասերի յերդման որ: Իր գաճարագույն առթիվ զինվորականների կողմից հավատարմության յերդում պետք ե տրվեր:

Դեկաբրիստները վորոշեցին ոգտագործել այդ յերդման որը և իրենց ապստամբությունը նշանակել ղեկտեմբերի 14-ին:

Դեկտեմբերի 11-ին «Հյուսիսացին ընկերության» ղեկավարները խորհրդակցություն հրավիրեցին Ռիլեկի բնակարանում, վորտեղ մշակվեց ղեկտեմբերի 14-ին կազմակերպվելիք ապստամբության ծրագիրը: Այդ խորհրդակցությունը վորոշեց՝

1. Դեկտեմբերի 14-ին, առավոտյան շատ վաղ սենատի հրավարակում (վորտեղ պետք ե տեղի ունենար յերդումը) դուրս բերել բոլոր ղեկաբրիստական զնդերը,

2. Հանձնարարել բոլոր ղեկաբրիստ հրամանատարներին իրենց զորամասերին միացնել նաև հրապարակ յեկած մյուս զորամասերը;

3. Հրաժարվել յերդում տալ նիկոլային և ստիպել կառավարությանը, վոր պաշտոնապես սահմանադրություն հռչակի:

4. Խորհրդակցությունը ղեկտեմբերի 14-ի ապստամբության ղեկավարման համար վորպես ղիկտատոր նշանակեց ղնդապետ կնյազ Տրուբեցկոյին, վորին տրվեց իր գործողությունների մեջ մեծ ինքնուրուցնություն և իրավունքներ:

5. Խորհրդակցությունը վորոշակի կարգադրություն արավ ղեկաբրիստ հրամանատարներին խուսափել վորեւ արյունահեղությունից:

6. Խունիսկ այդ խորհրդակցությունում, ըստ ղեկաբրիստ Պուշչինի ցուցմունքների, ծրագրվեց սենատի անունից հրավարակել մի մանիֆեստ, վորով նախատեսնվում եր հրավիրել ղեկտավոյացին դրւմա, վորք պետք ե ընտրվեր ամբողջ յերկրի ներկայացուցիչներից: Այդ գումային պետք ե իրավունք վերապահվեր վորոշել, թե յերկրում իշխանության ի՞նչպիսի ձև պետք ե ստեղծվի:

Այնուհետև, նախատեսնվում եյին, վոր մինչև դուման հավաքելը, սենատը պետք ե պետական խորհրդի անդամներ Սպերանսկու, Մորդվինովի և սենատոր Մուգավով-Ապոստոլին նշանակեր վորպես ժամանակավոր կառավարիչներ:

Դեկաբրիստները նախատեսում եյին այդ ժամանակավոր կառավարության կողքին ունենալ նաև իրենց գաղտնի կոմիտեյի անդամներից մեկին, վորը պետք ե հետեւեր ժամանակավոր կառավարության գործունեյությանը:

Ահա «Հյուսիսացին ընկերության» գաղտնի վորոշումը:

Դեկտեմբերի 14-ին, առավոտյան շատ վաղ, ղեկաբրիստ հրամանատարներն իրենց զնդերը շարեցին

սենատի Հրապարակում, վորոնց շուտով միացան նաև Մոսկովյան գումարը, սապլորների մի գումար և պմարդիական մատրոսները: Ապստամբների ընդհանուր քանակը, դեկտեմբերի 14-ին, Հրապարակում հասնում եր 3000 զինվորների և 30 հրամանատարների: Նրանց մեջ կային նաև 5 քաղաքացիներ, վորոնք զինվորականներ չեյին: Սակայն ապստամբության սկզբից և յեթ դեկտեմբերիստ դեկավարների մեջ տատանում նկատվեց: Ապստամբության դիկտատոր նշանակված Տրուբեցկոյը դեկտեմբերի 14-ին բոլորվին հրապարակ չեկավ, նույնիսկ նա վախեցավ իր տանը մնալուց և թագնվեց իր բարեկամներից մեկի մոտ: Հրապարակ չեյին յեկել նաև դեկավրիստներից մի շարք ուրիշ դեկավարներ: Ռիլենն եր միայն, վորառավոտյան շատ շուտ յերևաց Հրապարակում, բայց նաև յել շուտով գնաց:

Հրապարակ եյին յեկել, անկազմակերպ կերպով, զետերբուգդի աշխատավորական խավեր, վորոնք նույնական թշնամաբար եյին տրամադրված դեպի Նիկոլայը: Նիկոլայ Առաջինը և իր ամբողջ շքախումբը, յերբ զուրս յեկավ պալատից և դիմեց դեպի Հրապարակ, դեկավրիստական զորքը հրաժարվեց յերդում տալ նրան, սակայն դեկավրիստ դեկավարներն այնքան անվճռական գտնվեցին, վոր շոգտագործեցին ստեղծված մոմենտը, նրանք կարող եյին անմիջապես սպանել Նիկոլային և նրա մերձավորներին ու իշխանական գործությունը վերցնել իրենց ձեռքը: Դեկավրիստ Պարուցիկ Պանովն իր շոկատով գտնվում եր ձմեռային պալատի բակում և կարող եր անմիջապես գրավել

այնտեղ գտնված վոլ միայն կառավարության հավատարիմ մնացած հրետանին, այլև կարող եր նույնիսկ վորոշ վճռականության դիմել և հեշտությամբ գրավել Զմեռային պալատը:

Սենատի Հրապարակում ստեղծվեց շատ լարված դրություն: Պարզ նկատվում եր դեկավրիստ վիճորների թշնամանքը դեպի Նիկոլայը, մյուս կողմից նրակատվում եր հրապարակում հավաքված աշխատավորների թշնամանքը: Այդ ժամանակ, հրապարակի մոտ, Խսահակովի յեկեղեցին կառուցող բանվորները բացահայտ կերպով գոռում եյին՝ «կորչի Նիկոլայը, կորչի Նիկոլայի ինքնակալությունը» և քարեր ու փայտեր եյին գցում Նիկոլայի և նրա շքախմբի վրա: Ստեղծված բարենապաստ դրությունը պահանջում եր դեկավրիստների կողմից վորոշ վճռականություն և հետեւ զեղանություն, վորպեսզի այդ ապստամբության համար միանգամայն նպաստավոր մինուրուն ոգտագործվեր և տապալվեր ինքնակալությունը ու իշխանությունը գրավվեր, սակայն դեկավրիստների դաստիարակային սահմանափակվածությունը և անվճռականությունը հնարավորություն չուվեց ապստամբությունը հասցնել իր հաղթանակին:

Նիկոլայը փորձեց վորոշ բանակցություններ սկսել ապստամբների հետ, համոզել նրանց, վոր հավատարմության յերդում տան և ցրվեն: Նա բանակցությունների համար ապստամբների մոտ ուղարկեց Պետերբուրգի գեներալ գուբերնատոր Միլորդովիչին, սակայն Միլորդովիչը տեղն ու տեղը սպանվեց, դեկավրիստ սպա Կախովսկու կողմից: Այսուհետեւ բանակցությունների համար յեկավ գնդապետ Սլուտլե-

ըս, սակայն նա նույնպես արժանացավ՝ Միլորդովիշի
բախտին։ Նիկոլայը փորձեց բանակցությունների հա-
մար ուղարկել միտրոպոլիտին, վորը պետք է ոգտա-
գործեր իր դիրքը և համոզեր ապստամբներին։ Սա-
կայն՝ այդ ել անարդյունք անցավ։ Ապստամբները հը-
րաժարվեցին բանակցություններից, միտրոպոլիտից
պահանջեցին հեռանալ գոռալով՝ «գնա՛, քանի սադ ես»։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բոլոր պայման-
ները կային իսկական ապստամբության համար։ Սա-
կայն դեկաբրիստ ղեկավարները չկարողացան այդ
անել, շնորհիվ իրենց դասակարգային սահմանափակ-
վածության և անվճռականության։

Նիկոլայը վերին աստիճանի շփոթվել եր և բա-
վական ուշացմամբ դիմեց վճռական միջոցների։ Ա-
պստամբությունը ճնշելու համար նա դիմեց զինված
ուժի ոգնության, նա հրապարակ բերեց իրեն հավա-
տարիմ մնացած զորամասերը՝ մոտ 9000 հետևակ
զինվորներ, 3000 հեծյաներ և 36 թնդանոթ։ Իր այդ
ուժությունը փաստորեն շրջապատեց ապստամբներին և
կարգադրեց վոշնչացնել նրանց հեծելազորի միջո-
ցով։ Սակայն հեծելազորի յերկու հարձակումը
ապստամբների գեմ, անհաջող անցավ, վերջիններիս
յերկու հարձակումն ել հետ շպրտվեց։ Այդ ժամանակ
Նիկոլայը դիմեց հրետանու ոգնությանը։ Նա հրապա-
րիստ բերեց հրետանին, շարեց ապստամբ դեկաբրիս-
տական գնդերից ընդամենը մի քանի տասնյակ քայլ
հեռավորության վրա և կարգադրեց ոմբակոծել դեկաբ-
րիստական գնդերին։ Հրետանալորներն սկզբում հը-
րիստական գնդերին, սակայն Նիկոլայը հարկադրեց նրանց
և հրետանին սկսեց ոմբակոծել դեկաբրիստներին։

Դեկաբրիստ զինվորներն սկսեցին փախչել և դիրքեր
փնտրել սառած նեվայի սառուցների վրա ու զիմա-
ռերել հրետանուն, սակայն հրետանու հարվածների
տակ նեվայի սառուցները կոտրվում են և ապստամբ
դեկաբրիստների մի զգալի մասը խեղդվեց նեվայի
սառուցների տակ։ 1825 թ. դեկտեմբերի 14-ի ապս-
տամբությամբ ե, վոր այդ շարժումը ստացավ դեկաբ-
րիստական անունը։ Դեկտեմբերի 14—15-ի ամբողջ
գիշերը Սենատի հրապարակից հավաքում եյին սպան-
ված դեկաբրիստների դիակները։ Նիկոլայը կարգա-
դրեց մեծ փոս փորել և սպանվածներին ու ծանր վի-
րավորվածներին թաղել այդ փոսերում։

ԳԵՐԵՆԻԳՈՎՅԱՆ ԳՆԴԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս դեկտեմբերի 13-ին լրտես սպա Շերվուդի
և Մայբրոգի մատոնությամբ վոստիկանությունը ձեր-
բակալեց դեկաբրիստական «Հարավային ընկերության»
դեկավար Պեստելին։ Պեստելի ձերբակալությունից
հետո վտանգ եր սպառնում նաև ընկերության մյուս
անդամներին, վորովհետև Պեստելի բանտարկությունը
ասում ե, վոր կառավարությունը այդ կազմակերպու-
թյան ծայրը բացել եր։ Պեստելի բանտարկվելուց հե-
տո «Հարավային ընկերության» դեկավարությունը մը-
նաց Սերգեյ Մուրավյովի և Բեստուժեվի ձեռքին։

«Հյուսիսային ընկերության» կողմից դեկտեմբե-
րի 14-ին ապստամբության լուրը «Հարավային ընկե-
րությանը» հասավ մի շաբաթ հետո։ Հարավի դեկա-
բրիստների առաջ խնդիր եր զրվում, կամ հետևել
հյուսիսի որինակին, ապստամբություն բարձրացնել,
կամ անձնատուր լինել ինքնակալությանը։ «Հարավ-

1825 թ. դեկտեմբերի 29-ին սկսվեց ապատաւությունը, Զերնիգովյան գնդի 5-րդ վաշտից: Զերնիգովյան գնդի ապատամբության գլխավոր նախաձեռնողների թվին ելին պատկանում սպաներ Սովորինովը, Շապուհյանը, Կուզմինը, Սոլովյակը և որդիշները:

Այդ ժամանակ Զերնիգովյան գնդի տարբեր զորամասերը գտնվում եին տարբեր գյուղերում: 5-րդ վաշտը ապստամբվելով շարժվում է Տրիլես գյուղից դեպի հարևան Վիսելկով գյուղը, նպատակ՝ ունենալով վոտքի կանգնեցնել նաև այնտեղ յեղած զինվորական մասերին, և միանալ գնդի շտաբին, վորով գտնվում եր Վասիլկովում: Եատ արագ կերպով Զերնիգովյան գլուխում ընդդրկված ապստամբների հիմնական մասը Մուրավյով-Ապոստոլի գլխավորությամբ շարժվում է դեպի Բրուսիլով, նպատակ՝ ունենալով վոտքի կանգնեցնել նաև այնտեղի զորամասերը: Սակայն շուտով նա համոզվում է, վոր արդեն անհնար է հասնել Բրուսիլով և իրեն միացնել այնտեղի զորամասերին, ուտի նա իր ուղղությունը փոխում է գեպի Բելոյեցեր-կրվի՝ միանալու Յեգերյան 17-րդ գնդին, բայց հասնելով մինչև Պոլոգով գյուղը, զգում է, վոր իր այդ ծրագիրը նույնպես անհնար է իրավործել, ուտի Մուրավյով-Ապոստոլը վորոշում է շարժվել գեպի ժիտոմիր, միանալու այնտեղ նախակին «Սլավոնների միացյալ ընկերության» անդամների զորամասերին:


վարությունը ուղարկում է իր հավատարիմ զորամասերը Զերնիգովան գնդի ապստամբությունը ճնշելու համար:

Կառավարական զորքը գեներալ Գեյսմարի հրամանատարությամբ 1826 թ. հունվարի 3-ին Կավալեկացի զգուղի մոտ հանդիպեց ապստամբ շերնիգովցիներին: Գեյսմարի ջոկատը շերնիգովցիան ապստամբ գնդին սկսեց ոմբակոծել թնդանոթներով: Առաջին իսկ ոմբակոծման ժամանակ վլխից վիրավորվեց շերնիգովցիան ապստամբության ղեկավար Մուգավյովը: Վորոշ ժամանակից հետո Գեյսմարի ջոկատին հաջողվեց ճնշել Զերնիգովցիան գնդի հիմնական մասի ապստամբությունը: Զերնիգովցիան գնդի ապստամբության ուժեղ շրջանը հաշվվում է 1825 թ. դեկտեմբերի 29-ից մինչև 1826 թ. հունվարի 3-ը:

Սակայն Զերնիգովյան գնդի առանձին զոկատները իրենց ապստամբությունը թույլ կերպով շարունակեցին մինչև Հունվարի 8-ը։ Հունվարի 8-ին ապստամբությունը ամբողջովին լիկվիդացիայի յենթարկվեց։

Զերնիգովյան զնդի ապստամբության անհաջողության պատճառները պետք ե վերագրել վոչ միայն ապստամբության ղեկավարների վորոշ տատանումներին, յեղկոտությանը և այն ներքին պայքարին, վոր կար Հարավային ղեկաբրիստական միության մեջ, այլ և մի քանի կոպիտ սխալների, վոր թույլ տվին ապստամբության ղեկավարները:

Այսպես որինակ, Զերնիգովյան գումզը յեթի գնար Կիև, կարող եր միանալ Կիևում կուտակված զինվորա-



կան գնդերին և այսպիսով հնարավորություն կունենար ստեղծել ավելի խոշոր ռազմական ուժ։ Այնուեւետեվ, դեպի Կիև գնալու դեպքում Զերնիգովլյան գունդը կարող եր Կիևում իրեն միացնել Կիևի աշխատավորությանը։ Յեվ վերջապես Զերնիգովլյան գնդի ապրատամբության պարտության պատճառներից մեկն ելայն եր, զոր այդ գնդի ապստամբությունը չմիացվեց այդ շրջանի գյուղացիական շարժումներին։ Գյուղացիները արամադրված ելին հեղափոկականորեն և Զերնիգովլյան գնդի ապստամբության ղեկավարները ցանկության դեպքում կարող ելին հեշտությամբ վոտքի կանգնեցնել այդ շրջանի ապստամբ գյուղացիությանը և ոգտագործել իրենց նպատակների իրագործման համար, սակայն Զերնիգովլյան գնդի ապստամբության ղեկավաները բոլոր միջոցները գործադրում ելին պկված ապստամբությունից հեռու պահել գյուղացիությանը։

ԱՀա ալսպիսով, գեկտեմբերի 14-ին «Հյուսիսա-
յին ընկերության» կազմակերպած ապստամբությունը
ձախողելուց հետո, ձախողվեց նաև «Հարավային ըն-
կերության» կազմակերպած՝ Զերնիգովյան գնդի
ապստամբությունը:

ԴԵԿԱԲՐԻՍՆԵՐԻ ԴԱՏԸ

Դեկտեմբերի 14-ին, ապստամբության ճնշումից անմիջապես հետո, հենց նույն յերեկոյան սկսվում էն դեկաբրիստական ապստամբությանը մասնակիցների բանտարկությունները: Անձամբ ինքը նիկոլայը, իր մոտ եր բերել տալիս ապստամբությանը մասնակիցած զինվորականներին, պոկում եր նրանց զգեստի վրայից

զինվորական նշանները և անմնջապես ուղարկում եր բանտ; Մասսայական ձերբակալովիցուներ տեղի ունեցան նաև հարավում; Դեկաբրիստների գործով պաշտոնապես դատի հանձնվեց 579 մարդ, վորից 456-ը դիմուրականներ եին:

Դեկաբրիստների գործով դատական պատասխանատվության կանչված անձանց դատական հետաքընությանը մասնակցում եր և շատերի հետաքընությունը մասնակցում եր անձամբ ինքը, Նիկոլայը: Նիթյունը վարում էր անձամբ ինքը, Նիկոլայը: Նիթյունը Առաջինը դեկաբրիստներին դատելու համար սեղիոն, մոլի մոնարխիստներից հատուկ դատարաններ ստեղծեց, վորոնք իրենց գոնիակ նիստերում բոլոր տեսակի ծաղր ու ծանակի ամենավայրագ մեթոդներով դատում եյին դեկաբրիստ հեղափոխականներին:

Դատարանում և հետաքննությունների ընթացքում, դեկաբրիստները իրենց պահում եյին շատ խիզախ, նըրանք բոլոր տեսակի վոլ մարդկացին տանջանքների շենթարկվելով չեյին ընկճվում և չեյին հայտնում իրենց կազմակերպության այն անդամների անունները, վորոնք գեր բռնված չեյին: Նրանցից շատերը համարձակորեն խոստովանում եյին իրենց քաղաքական համոզմունքները: Պեստելը, Ռիլեկը չհրաժարվեցին բացահայտ կերպով խոստովանել, վոր ցանկացել են տապալել ինքնակալությունը:

Դեկաբրիստ հեղափոխականները դեռևս մինչև բանտ նստելը գիտեյին, վոր իրենց սկսած գործը կիսի շատ զոհեր, բայց այդ նրանց չեր վհատեցնում: Որինակ՝ Ռիլեկն իր «Նալիվկոյի խոստովանությունը» վոտանավորում ասում ե՝

«Անկում ե սպասում, յես գիտեմ, նրան, ով առաջինն ապստամբվի ժողովրդի ճնշողների դեմ Ճակատագիրը դատապարտել ե ինձ արգեն Բայց թե վորտեղ, յերբ ե յեղել Ազատություն առանց զոհի: Կյանքս պիտի տամ հայրենիքիս, Յես զգում եմ, յես այդ գիտեմ, Ու բերկանքով, ո՞ հայր իմ սուրբ, Վիճակն իմ որհնում եմ յես»:

Ռիլեկի այս խոսքերի մեջ մենք տեսնում ենք, վոր գեռես իր բանտարկությունից առաջ նա սպասում եր հալածանք, բանտարկություն և մահ:

Բայց դա նրան չեր հուսահատեցնում, վորովհետեւ նա համոզված եր, վոր իր այդ մեծ գաղափարներն առանց զոհերի հաղթանակել չեն կարող: Դատական պրոցեսի ժամանակ շատ համարձակ եր պահում իրեն Յակուշկինը, նա բացարձակ կերպով հայտնեց, վոր ինքը կողմնակից ե յեղել թագավորի սպանելուն: Նիկոլայ Առաջինը նույնիսկ Յակուշկինին կանչեց իր մոտ և բարկացած գոռաց նրա վրա. «Բայց գու գիտե՞ս ու առաջ ես կանգնած, յեթե յես քեզ ներեմ ել, այն աշխարհում ասոված չի ների»:

Յակուշկինը շատ սառնասրությամբ Նիկոլային պատասխանեց. «Բայց չե՝ վոր յես հանդերձյալ կյանքին չեմ հավատում»: Դատարանում Ռիլեկը հայտնեց, վոր ինքը դեկտեմբերի 14-ի ապստամբության մասնակիցներից մեկն ե, վոր նա այնքան ազդեցություն ուներ, վոր նույնիսկ կարող եր կանխել ապստամբու-

թյանը, սակայն այդ անել շցանկացավ: Ռիլենը բանտում, իր զիսատման ուղղակի նախորյակին, անագուատիսելի հետեւ մեխով գրում և հետեւլյալ քառյակը.

«Բանտը պատիվ ե ինձ և վոչ անարգանք, Արդար գործի դատն և բերել ինձ այստեղ, Ամո՞թ համարեմ շղթան ու կապանք, Յերբ կրում եմ իմ հայրենիք քեզ համար»:

Դատարանը մահապատիժ վորոշեց բոլոր դատապարտվածների համար, իսկ զեկավար ղեկաբրիստներից հնդին — Պետելին, Ռիլենին, Կախովսկուն, Տրուբեցկոյին և Սերգեյ Մուրավյովին մահապատիժ յենթարկել՝ 4 կտոր անելով, սակայն նիկոլայ Առաջինը փոխեց այդ վորոշումը և վորոշեց նրանց կախաղանքարացնել, իսկ մնացածները դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի և ցմահ բանտարկության: 5 ղեկավար ղեկաբրիստները կախաղանքարացներից 1826 թվի Հունիսի 13-ին, Պետրոպավլովսկի բերդի բակում, վաղորոք կառուցված կախաղանների վրա:

Խիզախ ղեկաբրիստները կախաղաններին մոտեցան համարձակ կերպով: Ռիլենը մոտենալով կախաղանին, հեգնորեն բացականչեց՝ «Ռիլենը մեռնում եղանին, հեգնորեն բացականչեց՝ միշտ հերու շարագործ, թող հիշի նրան Ռուսաստանը»: Հերոս ղեկաբրիստները նույնիսկ հանգիստ մահով շմահացան, կախվելուց հետո Ռիլենի և Կախովսկու կախաղանների պարանները կտրվեցին և նրանք ընկան ներքեւ: Ասում են, վոր սրա հետևանքով Ռիլենի մի վոտքը և ձեռքը կոտրվել եր, և նա պարկի միշտ կիսամեռ վիճակում բացականչել ե՝ անիծյալ յերկիր, թույլ շեն տալիս նույնիսկ հանգիստ մեռնել:

Ղեկաբրիստական բոլոր այն գնդերը, վորոնք վո-

րեվէ մասնակցություն եյին ունեցել ապստամբությանը, վերակառուցվեցին: Նրանց ղեկավարների մեծ մասը ուղարկվեցին գործող ճակատները, ճատկապես Կովկասյան ճակատը:

Դեկաբրիստների ապստամբությունը խոշոր արձագանք ունեցավ ժողովրդական լայն խավերի մեջ. դա արտահայտվեց նրանով, վոր 1826 թ. սկսվեց ժողովրդական շարժումների մի նոր ալիք: Ժողովրդական հուղումներ, ապստամբություններ ճատկապես ուժեղ կերպով տեղի ունեցան այն տերիտորիայում, վորտեղ տեղի յեր ունեցել Զերնիգովյան գնդի ապստամբությունը: Այսպես որինակ՝ 1826 թվի ապրիլի 3-ին, զինվորական Ալեքսեյ Սեմյոնովի ղեկավարությամբ, Ուժանսկի գավառում սկսվեց գյուղացիական մի խոշոր ապստամբություն: Ապստամբ գյուղացիները բռնի կերպով խլում եյին իրենց կալվածատերերի ունեցվածքը, կողոպտում նրանց կալվածքը, յերբեմն նույնիսկ ֆիզիկապես վլոշնացնում եյին կալվածատերերին: Սակայն Ալեքսեյ Սեմյոնովի ապստամբությունը յերկար շտեվեց, շուտով նրա ղեմ զորք ուղարկվեց և ղենքի միջոցով այդ ապստամբությունը ճնշվեց: Ինքը Ալեքսեյ Սեմյոնովը զիսատվեց, իսկ ապստամբությանը ակտիվ մասնակիցներից հոգի բանտարկվեցին և աքսորվեցին տաժանակիր աշխատանքի վայրերը:

Նույն շրջանում գյուղացիական բազմաթիվ հուղումներ, ապստամբություններ տեղի ունեցան նաև Ռուսաստանի այլ շրջաններում: Վորոշ աշխուժացում է նկատվում նաև ճորտ և ազատ բանվորների միջավայրում: 1826—27—28 թվականներին տեղի յեն ունենում մի շարք հուղումներ գործարաններում և ֆաբրիկանե-

բում; Ճորտ և ազատ բանվորների կողմից հատկապես խոշոր յելույթներ տեղի ունեցան Յարոսլավի նահանգում՝ կնյազ Գագարինի ֆաբրիկայում: Խոշոր յելույթներ տեղի ունեցան 1826 թ. Ռաստարգուեցիների ֆաբրիկաներում: Մի շաբթ յելույթներ տեղի ունեցան Մոսկվայի և Պետերբուրգի նահանգի մանուֆակտուր-ֆաբրիկաներում:

ՊԱԿՐՈՎՍԿՈՒ ՍԻԾԼՆԵՐԸ ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Գակրովսկին և նրա աշակերտները ֆալսիֆիկացիայի յեն յենթարկել և բացահայտ հակամարքսիստական գնահատականներ տվել դեկարբիստական շարժմանը: Այսպես որինակ՝

1. Այն ժամանակ, յերբ Լենինը դեկարբիստներին համարում է ազնվական շրջանի հեղափոխականներ, յերբ հանձին դեկարբիստների Լենինը տեսնում է Ռուսաստանի հեղափոխական շարժումների առաջին ետապի ներկայացուցիչներին, Պակրովսկին և նրա աշակերտները ժխտում են դեկարբիստների հեղափոխականությունը:

2. Լենինը պատմականորեն գնահատելով դեկարբիստներին, ցուց է տալիս, վոր նրանք սուբյեկտիվորեն պատկանում են ազնվական դասակարգին, բայց իրենց՝ գործունեյությամբ որյեկտիվորեն դուրս յեկան ազնվական դասակարգի տիրապետության՝ ինքնակալության և Ռուսաստափական իրավունքի դեմ: Իսկ Պակրովսկին միշտ աշխատում եր ցուց տալ դեկարբիստական շարժման արխտոկրատական բնույթը, դրանով իսկ նա փորձում եր նսեմացնել դեկարբիստնե-

րի մղած պայքարն ինքնակալության և նորտատիրական կարգերի դեմ:

3. Լենինը դեկարբիստական շարժումը դիտում է վորպես հեղափոխական պրոգրեսիվ շարժում, իսկ Պակրովսկին փորձում է այդ շարժումը դիտել վորպես նեղ պալատական հեղաշրջման մի փորձ՝ նախապատրաստված մի խումբ զինվորականների ձեռքով:

4. Լենինը մեծ շափով և գնահատում դեկարբիստների հանրապետական գաղափարները, իսկ Պակրովսկին դեկարբիստների հանրապետական գաղափարներին առանձին տեղ չի տալիս: Դեկարբիստների արդ հանրապետականությունը նա համարում է ինչ վոր դրսից յեկած, հատկապես 18-րդ դարի յելուպական իրականության մեջ տեղի ունեցած պալատական հեղաշրջումների մի փոխադրում՝ ոռւսական իրականության մեջ:

5. Լենինը մեծ նշանակություն է տալիս դեկտեմբերի 14-ի ապստամբությանը, վորպես զենքը ձեռքինց արիզմի դեմ բարձրացված առաջին ապստամբության փորձ: Սակայն Պակրովսկին և նրա աշակերտներն ամբողջապես անտեսում եյին դեկտեմբերի 14-ի ապստամբության խոշոր նշանակությունը և փորձում եյին դեկարբիստների ապստամբության փորձ համարել միայն Զերնիկովյան գնդի ապստամբությունը:

Լենինը իր բազմաթիվ աշխատառություններում վերլուծելով դեկարբիստական շարժումը, ցուց է տալիս նրա թերությունները, սխալները, բացասական մոմենտները: Սակայն Լենինը մեծ համակրանքով եր լրցված դեպի դեկարբիստական շարժումը, նա այն համարում է Ռուսաստանի պատմական այն իրականու-

թյան մեջ տեղի ունեցած հեղափոխական, պրոգրեսիվ մի շարժում:

Լենինը ցուց է տալիս, վոր չնայած դեկաբրիստները խիստ հյուու ելին ժողովրդական լայն մասսաներից, սակայն նրանց գաղափարները շկորան: Այդ գաղափարները հրահրեցին, վոտքի կանգնեցրին դեկաբրիստներին հաջորդող հեղափոխական սերնդին՝ ոռուական ինքնակալության և ճորտատիրական կարգերի դեմ:

«Նեղ և այդ հեղափոխականների շրջանը, — ասում ե լենինը, — սոսկալի հյուու ելին նրանք ժողովրդից: Բայց նրանց գործն ապարդուն չանցավ: Դեկաբրիստները զարթեցրին Գերցենին: Գերցենը հեղափոխական ագիտացիա ծավալեց: Այդ ագիտացիան արագորեն ընդորինակեցին, ընդլայնեցին, ամրապնդեցին, կոփեցին հեղափոխականուազնոշիները սկսած Զերնիշեվսկուց և վերջացրած «Народная воля»-ի հերոսներով: (Լենին, Հ. XV, եջ՝ 468):



Մի քանի խոսք Պակրովսկու և նրա «գովրոցի» սխալների մասին՝ 1812 թ. պատերազմի հարցում:

1. Պակրովսկու և նրա «գովրոցի» կողմից Փալոիֆիկացիայի յելնթարկել ոռուական ժողովրդի մղած հերոսական պայտարը նապոլեոնյան 1812 թվի արշավանքների դեմ: Պակրովսկուն փորձել և ցույց տալ, վոր 1812 թ. պատերազմին տեղիք են տվել ոռուա ազնականները. գրանով ըստ Եյության նա արդարացնում և նապոլեոնյան արշավանքները: Հանցավոր համարում ոռուաներին:

2. Պակրովսկուն փորձում և ցույց տալ, վոր նապոլեոնն իր պատերազմի միջոցով Ոռուաստանին տանում եր զեսի հեղափոխություն, դրանով նա քողարկում և նապոլեոնյան արշավանքների նվաճողական բնույթը, արշավանքներ, վորոնք բերում ելին ոռու ժողովրդին նորանոր արհավերքներ և ազգային ծանր ճնշումներ:

3. Պակրովսկուն ցույց չի տալիս, վոր ժողովրդի մղած կոիվը, դա խոչը հայրենասիրական ազգային անկախության համար մղված կոիվ եր:

4. Պակրովսկուն նույնակես, ինչես վոր բուրժուական, աղնօվական պատմաբաններն ելին, նապոլեոնի պարտությունը վերագրում եր ոռուական «գաման ցրաերին», «Ճյանը», «սառնամանիքներին», անտեսելով ոռու ժողովրդի հերոսական կոիվը, վոր Հիմնական պատճառն եր, վորը պարտության մասնեց նապոլեոնի բանակին:

5. Պակրովսկուն թերազնահատել ե և սովորի տակ և թողել այդ պատերազմում խոշոր գեր խաղացած ոռու տաղանդավոր անվանի զորավարներ Կուտուզովին, Բագրատիոնին և Բարկլայ-Շե-Տուլիին:





ՀՀ Ազգային գրադարան

NL0409723

